3221 Ռեզիդենտ հիմնարկներից ներգրաված ցպահանջ փոխառություններ
3222 Ռեզիդենտ հիմնարկներից ներգրաված ցպահանջ փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3223 Ոչ ռեզիդենտ հիմնարկներից ներգրաված ցպահանջ փոխառություններ
3224 Ոչ ռեզիդենտ հիմնարկներից ներգրաված ցպահանջ փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3225 Ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակիցներից ներգրաված ցպահանջ փոխառություններ
3226 Ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակիցներից ներգրաված ցպահանջ փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3227 Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակիցներից ներգրաված ցպահանջ փոխառություններ
3228 Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակիցներից ներգրաված ցպահանջ փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3229 Ռեզիդենտ իրավաբանական անձ մասնակիցներից ներգրաված ցպահանջ փոխառություններ
3230 Ռեզիդենտ իրավաբանական անձ մասնակիցներից ներգրաված ցպահանջ փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3231 Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ մասնակիցներից ներգրաված ցպահանջ փոխառություններ
3232 Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ մասնակիցներից ներգրաված ցպահանջ փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ

324, 325, 326 Հաճախորդներից ներգրաված ժամկետային փոխառություններ

3241 Ռեզիդենտ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտներից ներգրաված ժամկետային փոխառություններ
3242 Ռեզիդենտ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտներից ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3243 Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտներից ներգրաված ժամկետային փոխառություններ
3244 Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտներից ներգրաված ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3245 Ռեզիդենտ պետական մասնակցությամբ իրավաբանական անձանցից ներգրաված ժամկետային փոխառություններ
3246 Ռեզիդենտ ոչ պետական մասնակցությամբ իրավաբանական անձանցից ներգրաված ժամկետային փոխառություններ
3247 Ռեզիդենտ ոչ առևտրային իրավաբանական անձանցից ներգրաված ժամկետային փոխառություններ
3248 Ռեզիդենտ իրավաբանական անձանցից ներգրաված ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3249 Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանցից ներգրաված ժամկետային փոխառություններ
3250 Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանցից ներգրաված ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3251 Ռեզիդենտ հիմնարկներից ներգրաված ժամկետային փոխառություններ
3252 Ռեզիդենտ հիմնարկներից ներգրաված ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3253 Ոչ ռեզիդենտ հիմնարկներից ներգրաված ժամկետային փոխառություններ
3254 Ոչ ռեզիդենտ հիմնարկներից ներգրաված ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3255 Ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակիցներից ներգրաված ժամկետային փոխառություններ
3256 Ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակիցներից ներգրաված ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3257 Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակիցներից ներգրաված ժամկետային փոխառություններ
3258 Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակիցներից ներգրաված ժամկետային փոխառությունների դիմաց

հաշվեգրված տոկոսներ
3259 Ռեզիդենտ իրավաբանական անձ մասնակիցներից ներգրաված ժամկետային փոխառություններ
3260 Ռեզիդենտ իրավաբանական անձ մասնակիցներից ներգրաված ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3261 Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ մասնակիցներից ներգրաված ժամկետային փոխառություններ
3262 Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ մասնակիցներից ներգրաված ժամկետային փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ

33 Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ

331 Վարկեր գանձապետարանից
3311 Վարկեր գանձապետարանից
3312 Գանձապետարանի վարկերի դիմաց հաշվեգրված տոկոսներ

332 Այլ պարտավորություններ կառավարության նկատմամբ
3321 Այլ պարտավորություններ կառավարության նկատմամբ
3322 Կառավարության նկատմամբ այլ պարտավորությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ

34 Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր, առևտրական և հեջավորման նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ

341 Վարկային կազմակերպության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր
3411 Վարկային կազմակերպության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր
3412 Վարկային կազմակերպության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս

342 Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր
3421 Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր
3422 Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս
3423 Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար
3424 Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ

343 Վարկային կազմակերպության կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսեր
3431 Վարկային կազմակերպության կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսեր

344 Թողարկված այլ արժեթղթեր
3441 Թողարկված այլ արժեթղթեր
3442 Վարկային կազմակերպության կողմից թողարկված այլ արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ

345 Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ
3451 Ֆյուչերս
3452 Ֆորվարդ
3453 Օպցիոն
3454 Սվոպ
3455 Այլ ածանցյալ գործիքներ

346 Հեջավորման ածանցյալ գործիքներ
3461 Ֆյուչերս
3462 Ֆորվարդ
3463 Օպցիոն
3464 Սվոպ
3465 Այլ ածանցյալ գործիքներ

35 Այլ վճարվելիք գումարներ

351 Վճարման ենթակա շահաբաժիններ
3511 Վճարման ենթակա շահաբաժիններ ռեզիդենտներին
3512 Վճարման ենթակա շահաբաժիններ ոչ ռեզիդենտներին

352 Պարտավորություն ռեպո համաձայնագրերի գծով
3521 Պարտավորություն ռեպո համաձայնագրերի գծով ռեզիդենտ բանկերի նկատմամբ
3522 Պարտավորություն ռեպո համաձայնագրերի գծով ռեզիդենտ վարկային կազմակերպությունների նկատմամբ
3523 Պարտավորություն ռեպո համաձայնագրերի գծով ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ
3524 Պարտավորություն ռեպո համաձայնագրերի գծով այլ ռեզիդենտների նկատմամբ
3525 Պարտավորություն ռեպո համաձայնագրերի գծով ոչ ռեզիդենտների նկատմամբ

353 Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ
3531 Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով ռեզիդենտներին վճարվելիք գումարներ
3532 Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով ոչ ռեզիդենտներին վճարվելիք գումարներ

354 Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ
3541 Ֆինանսական վարձակալության գծով ռեզիդենտներին վճարվելիք գումարներ
3542 Հաշվեգրված տոկոսներ ֆինանսական վարձակալության դիմաց ռեզիդենտների գծով
3543 Ֆինանսական վարձակալության գծով ոչ ռեզիդենտներին վճարվելիք գումարներ
3544 Հաշվեգրված տոկոսներ ֆինանսական վարձակալության դիմաց ոչ ռեզիդենտների գծով

355 Այլ պարտավորություններ
3551 Այլ պարտավորություններ ռեզիդենտների նկատմամբ
3552 Ռեզիդենտների նկատմամբ այլ պարտավորությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ
3553 Այլ պարտավորություններ ոչ ռեզիդենտների նկատմամբ
3554 Ոչ ռեզիդենտների նկատմամբ այլ պարտավորությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ

36 Պարտավորություններ տրամադրված չեկերի գծով

361 Պարտավորություններ տրամադրված չեկերի գծով
3611 Ռեզիդենտների նկատմամբ պարտավորություններ չեկերի գծով
3612 Ոչ ռեզիդենտների նկատմամբ պարտավորություններ չեկերի գծով

37 Կրեդիտորական պարտքեր

371 Հաշվարկներ վարկային կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև
- 3711 Հաշվարկներ վարկային կազմակերպության և իր ռեզիդենտ մասնաճյուղերի միջև
- 3712 Հաշվարկներ վարկային կազմակերպության և իր ոչ ռեզիդենտ մասնաճյուղերի միջև

372 Կրեդիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով
- 3721 Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով
- 3722 Կրեդիտորական պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով
- 3723 Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի ու տուրքերի գծով
- 3724 Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով

373 Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր
- 3731 Հիմնական աշխատողներին վճարվելիք աշխատավարձ
- 3732 Պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձ
- 3733 Այլ ներքին կրեդիտորական պարտքեր
- 3734 Արտաքին կրեդիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ
- 3735 Արտաքին կրեդիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ
- 3736 Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ռեզիդենտների նկատմամբ
- 3737 Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ոչ ռեզիդենտների նկատմամբ

38 Հետաձգված հարկային պարտավորություններ

381 Հետաձգված հարկային պարտավորություններ
- 3811 Հետաձգված հարկային պարտավորություններ

39 Ակտիվներին վերաբերող շնորհներ

391 Ակտիվներին վերաբերող շնորհներ
- 3911 Ակտիվներին վերաբերող շնորհներ

40 Պահուստներ

401 Պահուստներ
- 4011 Պահուստներ

41 Ստացված ֆինանսական եկամուտներ տրամադրված ֆինանսական վարձակալությունից

411 Ստացված ֆինանսական եկամուտներ ռեզիդենտներին տրամադրված ֆինանսական վարձակալությունից
- 4111 Ստացված ֆինանսական եկամուտներ ռեզիդենտներին տրամադրված ֆինանսական վարձակալությունից

412 Ստացված ֆինանսական եկամուտներ ոչ ռեզիդենտներին տրամադրված ֆինանսական վարձակալությունից
- 4112 Ստացված ֆինանսական եկամուտներ ոչ ռեզիդենտներին տրամադրված ֆինանսական վարձակալությունից

ԿԱՐԳ 5 ԿԱՊԻՏԱԼ

50 Կանոնադրական կապիտալ

501 Արտոնյալ բաժնետոմսեր
- 5011 Արտոնյալ բաժնետոմսեր - անվանական արժեք
- 5012 Արտոնյալ բաժնետոմսեր - էմիսիոն եկամուտ

502 Սովորական բաժնետոմսեր
- 5021 Սովորական բաժնետոմսեր - անվանական արժեք
- 5022 Սովորական բաժնետոմսեր - էմիսիոն եկամուտ

503 Կանոնադրական կապիտալ կոոպերատիվ և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպությունների համար
- 5031 Կանոնադրական կապիտալ կոոպերատիվ և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպությունների համար

504 Չվճարված կապիտալ
- 5041 Չվճարված կապիտալ

51 Պահուստներ

511 Գլխավոր պահուստ
- 5111 Գլխավոր պահուստ

512, 513 Վերագնահատման պահուստներ
- 5121 Շենքերի և շինությունների վերագնահատման պահուստ
- 5122 Այլ հիմնական միջոցների վերագնահատման պահուստ
- 5123 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս
- 5124 Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով շահույթ/վնաս
- 5125 Ասոցիացված կազմակերպությունում իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի վարկային կազմակերպության բաժնեմասը
- 5126 Համատեղ վերահսկվող միավորներում իրականացված վերագնահատումներից առաջացած

շահույթի/վնասի վարկային կազմակերպության բաժնեմասը
5127 Դուստր բանկերում ներդրումների վերագնահատումից իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի վարկային կազմակերպության բաժնեմասը
5128 Դուստր վարկային կազմակերպություններում իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի վարկային կազմակերպության բաժնեմասը
5129 Այլ դուստր ընկերություններում իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի վարկային կազմակերպության բաժնեմասը
5131 Ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստ

52 Հետ գնված կապիտալ

521 Հետ գնված կապիտալ
5211 Բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության հետ գնված սեփական արտոնյալ բաժնետոմսեր
5212 Բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության կողմից հետ գնված սեփական սովորական բաժնետոմսեր
5213 Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության կողմից հետ գնված բաժնեմասեր
5214 Կոոպերատիվ հանդիսացող վարկային կազմակերպության կողմից հետ գնված փայամասեր

53 Չբաշխված շահույթ

531 Չբաշխված շահույթ
5311 Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս
5312 Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս
532 Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթի ճշգրտում
5321 Էական սխալների ուղղման արդյունքում առաջացած ճշգրտում
5322 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած ճշգրտում

ԿԱՐԳ 6 ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

60 Տոկոսային եկամուտներ

601 Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից
6011 Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ բանկերում բանկային հաշիվների միջոցներից
6012 Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտ բանկերում բանկային հաշիվների միջոցներից
6013 Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդներից
6014 Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդներից
6015 Տոկոսային եկամուտներ կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշիվների միջոցներից
602 Տոկոսային եկամուտներ բանկերին տրված վարկերից և ռեպո համաձայնագրերից
6021 Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ բանկերին տրված վարկերից
6022 Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտ բանկերին տրված վարկերից
6023 Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտ բանկերին տրամադրված օվերնայթներից
6024 Տոկոսային եկամուտներ ռեզիդենտների հետ կնքված ռեպո համաձայնագրերից
6025 Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտների հետ կնքված ռեպո համաձայնագրերից
603 Տոկոսային եկամուտներ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերից (փոխառություններից)
6031 Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերից
6032 Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերից
604 Տոկոսային եկամուտներ ֆիզիկական անձանց տրված վարկերից (փոխառություններից)
6041 Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրված վարկերից
6042 Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրված վարկերից
6043 Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ ֆիզիկական անձանց վարկային քարտերով տրված վարկերից
6044 Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց վարկային քարտերով տրված վարկերից
605 Տոկոսային եկամուտներ իրավաբանական անձանց և հիմնարկներին տրված վարկերից (փոխառություններից)
6051 Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ իրավաբանական անձանց տրված վարկերից
6052 Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց տրված վարկերից
6053 Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ հիմնարկներին տրված վարկերից
6054 Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտ հիմնարկներին տրված վարկերից
6055 Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ իրավաբանական անձանց վարկային քարտերով տրված վարկերից
6056 Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց վարկային քարտերով տրված վարկերից
6057 Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ հիմնարկներին վարկային քարտերով տրված վարկերից
6058 Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտ հիմնարկներին վարկային քարտերով տրված վարկերից
606 Տոկոսային եկամուտներ վարկային կազմակերպության աշխատակիցներին և վարկային կազմակերպության հետ կապված անձանց տրված վարկերից (փոխառություններից)
6061 Տոկոսային եկամուտներ վարկային կազմակերպության աշխատակիցներին տրված վարկերից
6062 Տոկոսային եկամուտներ վարկային կազմակերպության աշխատակիցներին տրված վարկային քարտերից
6063 Տոկոսային եկամուտներ վարկային կազմակերպության հետ կապված ռեզիդենտ անձանց տրված վարկերից
6064 Տոկոսային եկամուտներ վարկային կազմակերպության հետ կապված ոչ ռեզիդենտ անձանց տրված

վարկերից
6065 Տոկոսային եկամուտներ վարկային կազմակերպության հետ կապված ռեզիդենտ անձանց վարկային քարտերով տրված վարկերից
6066 Տոկոսային եկամուտներ վարկային կազմակերպության հետ կապված ոչ ռեզիդենտ անձանց վարկային քարտերով տրված վարկերից

607 Տոկոսային եկամուտներ ներդրումներից
6071 Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթերից
6072 Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական տոկոսային արժեթղթերից
6073 Տոկոսային եկամուտներ ՀՀ ոչ պետական արժեթղթերից
6074 Տոկոսային եկամուտներ այլ երկրների պետական առանց տոկոսի արժեթղթերից
6075 Տոկոսային եկամուտներ այլ երկրների պետական տոկոսային արժեթղթերից
6076 Տոկոսային եկամուտներ այլ երկրների ոչ պետական արժեթղթերից

608 Տոկոսային եկամուտ ֆինանսական վարձակալությունից
6081 Տոկոսային եկամուտ ռեզիդենտներին տրամադրված ֆինանսական վարձակալությունից
6082 Տոկոսային եկամուտ ոչ ռեզիդենտներին տրամադրված ֆինանսական վարձակալությունից

609 Այլ տոկոսային եկամուտներ
6091 Այլ տոկոսային եկամուտներ

61 Եկամուտ այլ ձեռնարկություններում ներդրումներից

610 Եկամուտ այլ կազմակերպություններում ներդրումներից
6101 Եկամուտ շահաբաժիններից
6102 Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից զուտ շահույթ/վնաս
6103 Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս
6104 Դուստր բանկերում ներդրումներից զուտ շահույթ/վնաս
6105 Դուստր վարկային կազմակերպություններում ներդրումներից զուտ շահույթ/վնաս
6106 Այլ դուստր ընկերություններում ներդրումներից զուտ շահույթ/վնաս

62 Կորուստների վերականգնում (փոխհատուցում)

621 Կորուստների վերականգնում
6211 Վարկերի գծով կորուստների վերականգնում
6212 Դեբիտորական պարտքերի գծով կորուստների վերականգնում
6213 Մինչև մարման ժամկետը պահվող և այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների գծով կորուստների վերականգնում

63 Միջնորդավճարներ

631 Միջնորդավճարներ
6311 Միջնորդավճարներ ռեզիդենտներից
6312 Միջնորդավճարներ ոչ ռեզիդենտներից

64 Այլ եկամուտ

641 Այլ եկամուտ
6411 Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից
6412 Երաշխիքներից, հոժարագրերով գործառնություններից, հավատարմագրային կառավարման գործառնություններից ստացված եկամուտներ
6414 Ֆակտորինգից ստացված եկամուտներ
6419 Այլ եկամուտներ

642, 643 Օգուտներ
6421 Հիմնական միջոցների օտարումից ստացված օգուտներ
6422 Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ
6423 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ
6424 Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների վաճառքից ստացված օգուտներ
6425 Արտարժույթի առուվաճառքից ստացված օգուտներ
6426 Արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ
6427 Այլ գործառնություններից ստացված օգուտներ
6428 Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված օգուտներ
6429 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված օգուտներ
6430 Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից օգուտներ
6431 Հեջավորման ածանցյալ գործիքների վերագնահատումից օգուտներ
6432 Հեջավորման ածանցյալ գործիքների վաճառքից օգուտներ

65 Արտասովոր եկամուտներ

651 Արտասովոր եկամուտներ
6511 Արտասովոր եկամուտներ

66 Միջմասնաճյուղային եկամուտներ (ծախսեր)

661 Միջմասնաճյուղային եկամուտներ (ծախսեր)
6611 Միջմասնաճյուղային եկամուտներ (ծախսեր)

67 Նախորդ ժամանակաշրջանների եկամուտներ

671 Նախորդ ժամանակաշրջանների եկամուտներ

6711 Նախորդ ժամանակաշրջանների եկամուտներ էական սխալների ուղղման արդյունքում
6712 Նախորդ ժամանակաշրջանների եկամուտներ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում

ԿԱՐԳ 7 ԾԱԽՍԵՐ

70 Տոկոսային ծախսեր
71

701 Տոկոսային ծախսեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունների դիմաց

7011 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ բանկերից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց
7012 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց
7013 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց
7014 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց
7015 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ բանկերից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց
7016 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց
7017 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց
7018 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց

702, 703 Տոկոսային ծախսեր ցպահանջ փոխառությունների դիմաց

7021 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտներից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց
7022 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտներից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց
7023 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց
7024 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց
7025 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ հիմնարկներից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց
7026 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ հիմնարկներից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց
7027 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակիցներից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց
7028 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակիցներից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց
7029 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ իրավաբանական անձ մասնակիցներից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց
7030 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ մասնակիցներից ներգրավված ցպահանջ փոխառությունների դիմաց

704, 705 Տոկոսային ծախսեր ժամկետային փոխառությունների դիմաց

7041 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտներից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց
7042 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտներից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց
7043 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ իրավաբանական անձանցից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց
7044 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանցից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց
7045 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ հիմնարկներից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց
7046 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ հիմնարկներից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց
7047 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակիցներից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց
7048 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակիցներից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց
7049 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ իրավաբանական անձ մասնակիցներից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց
7050 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ մասնակիցներից ներգրավված ժամկետային փոխառությունների դիմաց

706 Տոկոսային ծախսեր ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների դիմաց

7061 Տոկոսային ծախսեր գանձապետարանից ստացված վարկերի դիմաց

707 Տոկոսային ծախսեր ստացված վարկերի դիմաց

7071 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ բանկերից ստացված վարկերի դիմաց
7072 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ բանկերից ստացված վարկերի դիմաց
7073 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ բանկերի կողմից տրամադրված օվերդրաֆտների դիմաց
7074 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ բանկերի կողմից տրամադրված օվերդրաֆտների դիմաց
7075 Տոկոսային ծախսեր ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի դիմաց
7076 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի դիմաց
7077 Տոկոսային ծախսեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի դիմաց

708 Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի դիմաց

7081 Տոկոսային ծախսեր ռեզիդենտների հետ ռեպո համաձայնագրերի դիմաց
7082 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտների հետ ռեպո համաձայնագրերի դիմաց

709 Այլ տոկոսային ծախսեր

7091 Տոկոսային ծախսեր վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի դիմաց
3791 Բանկի կողմից թողարկված ՀՀ դրամով արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ
7092 Տոկոսային ծախսեր ռեզիդենտների հետ ֆինանսական վարձակալության դիմաց
7093 Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական վարձակալության դիմաց
7094 Տոկոսային ծախսեր այլ պարտավորությունների դիմաց

72 Հատկացումներ պահուստներին

721 Հատկացումներ պահուստներին

7211 Հատկացումներ վարկերի ու դեբիտորական պարտքերի ընդհանուր պահուստին
7212 Հատկացումներ վարկերի ու դեբիտորական պարտքերի հատուկ պահուստին
7213 Մինչև մարման ժամկետը պահվող և այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների արժեզրկումներից կորուստ
7215 Ծախսեր չաշխատող ակտիվների՝ նախորդ ժամանակաշրջանում հաշվեգրված տոկոսների գծով

73 Միջնորդավճարներ, տույժեր ու տուգանքներ և այլ գործառնական ծախսեր

731 Միջնորդավճարներ, տույժեր ու տուգանքներ և այլ գործառնական ծախսեր

7311 Միջնորդավճարների ծախսեր ռեզիդենտների գծով
7312 Միջնորդավճարների ծախսեր ոչ ռեզիդենտների գծով
7313 Տուգանքների և տույժերի գծով ծախսեր
7314 Երաշխիքների, պարտամուրհակների ընդունման և լիազորագրային գործառնությունների գծով ծախսեր
7315 Ծախսեր ֆակտորինգի գծով
7316 Այլ գործառնական ծախսեր

74 Կառավարչական և հասարակական կապերի գծով ծախսեր

741 Ծախսեր անձնակազմի գծով

7411 Հիմնական աշխատողներին տրվող աշխատավարձ
7412 Պայմանագրային աշխատողներին տրվող աշխատավարձ
7413 Պարգևատրումներ և լրավճարներ
7414 Արձակուրդների և ոչ աշխատանքային օրերի համար վճարումներ
7415 Հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով
7416 Անձնակազմի ուսուցման ծախսեր
7417 Անձնակազմի այլ ծախսեր

742, 743 Կառավարչական ծախսեր

7421 Վարկային կազմակերպության շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության ծախսեր
7422 Վարկային կազմակերպության շենքի տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր
7423 Վարկային կազմակերպության սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր
7424 Անվտանգության ապահովման ծախսեր
7425 Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր
7426 Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր
7427 Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր
7428 Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր
7429 Գործուղման ծախսեր
7430 Վարկային կազմակերպության փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման գծով ծախսեր
7431 Գրասենյակային ծախսեր
7432 Այլ կառավարչական ծախսեր
7433 Ապահովագրության գծով ծախսեր
7434 Կազմակերպչական ծախսեր

744 Հասարակական կապերի գծով ծախսեր

7441 Գովազդի ծախսեր
7442 Ներկայացուցչական ծախսեր
7443 Հասարակական կապերի գծով այլ ծախսեր
7444 Անդամավճարներ

745 Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր

7451 Ամորտիզացիոն ծախսեր - շենքեր, շինություններ
7452 Ամորտիզացիոն ծախսեր - գույք և գրասենյակային սարքավորումներ
7453 Ամորտիզացիոն ծախսեր - կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա
7454 Ամորտիզացիոն ծախսեր - փոխադրամիջոցներ
7455 Ամորտիզացիոն ծախսեր - այլ հիմնական միջոցներ
7456 Ամորտիզացիոն ծախսեր - ֆինանսական վարձակալությամբ հիմնական միջոցներ

746 Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր

7461 Ամորտիզացիոն ծախսեր - համակարգչային ծրագրեր
7462 Ամորտիզացիոն ծախսեր - լիցենզիաներ և վստահագրեր
7463 Ամորտիզացիոն ծախսեր - հեղինակային իրավունքներ
7466 Ամորտիզացիոն ծախսեր - այլ ոչ նյութական ակտիվներ

75 Կորուստներ և արտասովոր ծախսեր

751, 752 ***Կորուստներ***

7511 Կորուստներ հիմնական միջոցների օտարումից
7512 Կորուստներ հիմնական միջոցների վերագնահատումից

7513 Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից
7514 Կորուստներ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վաճառքից
7515 Կորուստներ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների վաճառքից
7516 Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից
7517 Կորուստներ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից
7518 Կորուստներ արտարժույթի առուվաճառքի գործառնություններից
7519 Արտարժույթի վերագնահատումից կորուստներ
7520 Կորուստներ բանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով և հուշադրամներով գործառնություններից
7521 Կորուստներ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից
7522 Կորուստներ ակտիվների արժեզրկումից
7523 Կորուստներ վճարային գործիքներով գործառնություններից
7524 Հեջավորման ածանցյալ գործիքների վերագնահատումից կորուստներ
7525 Հեջավորման ածանցյալ գործիքների վաճառքից կորուստներ
7526 Կորուստներ այլ գործառնություններից

753 Արտասովոր ծախսեր

7531 Արտասովոր ծախսեր

76 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

761 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

7611 Ընթացիկ հարկի գծով ծախս (փոխհատուցում)
7612 Հետաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում)

77 Նախորդ ժամանակաշրջանների ծախսեր

771 Նախորդ ժամանակաշրջանների ծախսեր

7711 Նախորդ ժամանակաշրջանների ծախսեր էական սխալների ուղղման արդյունքում
7712 Նախորդ ժամանակաշրջանների ծախսեր հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում

ԿԱՐԳ 8 ՀԵՏՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

80 Պահանջներ և պարտավորություններ երաշխավորությունների և ածանցյալ գործիքների գծով

801 Տրամադրված երաշխավորություններ

8011 Վարկային երաշխավորություններ
8012 Այլ երաշխավորություններ
8013 Վարկային երաշխավորություններ վարկային կազմակերպության հետ կապված անձանց գծով
8014 Այլ երաշխավորություններ վարկային կազմակերպության հետ կապված անձանց գծով

802 Վարկային գծեր և քարտեր

8021 Վարկային գծերի առավելագույն սահմանաչափեր
8022 Վարկային գծերի չօգտագործված մասը
8023 Վարկային քարտերի սահմանաչափեր
8024 Վարկային քարտերի չօգտագործված մասը

804 Ածանցյալ գործիքներ

8041 Ֆյուչերս
8042 Ֆորվարդ
8043 Օպցիոն
8044 Սվոպ
8045 Այլ ածանցյալ գործիքներ

81 Գրավ և երաշխավորություններ

811 Ստացված գրավ

8111 Պետական արժեթղթեր
8112 Այլ արժեթղթեր
8113 Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ
8114 Թանկարժեք զարդեր, ոսկու ջարդոն և թանկարժեք քարեր
8115 Անշարժ գույք և այլ հիմնական միջոցներ
8116 Պատրաստի արտադրանք և ապրանքներ
8117 Դրամական միջոցներ
8119 Այլ գրավ

812 Ստացված երաշխավորություններ

8121 Վարկային երաշխավորություններ
8122 Այլ երաշխավորություններ

813 Տրամադրված գրավ

8131 Պետական արժեթղթեր
8132 Այլ արժեթղթեր
8133 Անշարժ գույք և այլ հիմնական միջոցներ
8134 Դրամական միջոցներ
8139 Այլ գրավ

82 Դուրսգրումներ

821 Դուրսգրումներ

8211 Ծախսերով դուրս գրված վարկեր
8212 Ծախսերով դուրս գրված դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ
8213 Ակտիվներ դուրս գրված գլխավոր պահուստի միջոցներից
8214 Դուրս գրված տոկոսներ վարկերից
8215 Ծախսերով դուրս գրված արժեթղթեր

83 Գործառնական վարձակալություն

831 Գործառնական վարձակալությամբ օգտագործվող

8311 Շենքեր
8312 Փոխադրամիջոցներ, սարքավորումներ և այլ հիմնական միջոցներ
8313 Այլ ակտիվներ

84 Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ

841 Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ

8411 Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող արժեթղթեր
8412 Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող այլ ակտիվներ

85 Արժեքների պահպանում

851 Ի պահ ընդունված արժեքներ

8511 Պետական արժեթղթեր
8512 Այլ արժեթղթեր
8513 Թանկարժեք մետաղներ
8515 Այլ արժեքավոր իրեր

852 Ի պահ տրված արժեքներ

8521 Պետական արժեթղթեր
8522 Այլ արժեթղթեր
8523 Թանկարժեք մետաղներ
8524 Այլ արժեքավոր իրեր

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի հունվարի 27-ի թիվ 42-Ն որոշմամբ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝
_____ Տ. Սարգսյան
«__ » _____ 2003 թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2003 թվականի մարտի 10-ի թիվ 190-Ա հրամանով
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար՝
_____ Վ. Խաչատրյան
«__ » _____ 2003 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգում» ներկայացված ձևակերպումները չեն ներառում տվյալ հաշվի կամ ենթաբաժնի բոլոր հաշվապահական թղթակցությունները: Վարկային կազմակերպությունները կարող են կատարել հրահանգում չներկայացված հաշվապահական ձևակերպումներ, եթե վերջիններս համապատասխանում են սույն հրահանգի տրամաբանությանը և չեն հակասում գործող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերին:

Վարկային կազմակերպությունները հաշվային պլանում կարող են ինքնուրույն բացել հաշիվներ՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղյակ պահելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին:

Սույն հրահանգի իմաստով՝ «ռեզիդենտ» և «ոչ ռեզիդենտ» տերմինների սահմանումները տրված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի մայիսի 14-ի թիվ 173 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և բանկային վիճակագրության ձեռնարկում»:

Սույն հրահանգի իմաստով՝ պետական մասնակցությամբ իրավաբանական անձինք են համարվում այն իրավաբանական անձինք, որոնց կանոնադրական կապիտալում պետական մասնակցությունը կազմում է 50 տոկոս և ավելի: Ոչ պետական մասնակցությամբ իրավաբանական անձինք են համարվում այն իրավաբանական անձինք, որոնց կանոնադրական կապիտալում պետական մասնակցությունը բացակայում է կամ կազմում 50 տոկոսից պակաս:

Սույն հրահանգում ներկայացված քաղաքացիական իրավունքի մնացած այլ սուբյեկտների սահմանումները տրված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում:

ԿԱՐԳ 1 - 2 ԱԿՏԻՎՆԵՐ

ԲԱԺԻՆ 10
«Դրամական ակտիվներ»

Բաժին 10-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 101 «Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր», 102 «Բանկային հաշիվներ»:

Այս խմբի հաշիվներում հաշվառումը վարվում է դրամաշրջանառությունը կարգավորող օրենսդրությանը համապատասխան:

Ենթաբաժին 101
«Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր»

101 ենթաբաժինը նախատեսված է վարկային կազմակերպության տրամադրության տակ գտնվող կանխիկ դրամական միջոցների և վճարային փաստաթղթերի հաշվառման համար: Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են վարկային կազմակերպության դրամարկղեր, բանկոմատներ մուտքագրված կանխիկ դրամական միջոցները, իսկ կրեդիտում՝ ելքագրված կանխիկ դրամական միջոցները:

1011 «Կանխիկ դրամ դրամարկղում» - այս հաշվում արտացոլվում է վարկային կազմակերպության դրամարկղերում Հայաստանի Հանրապետության դրամի և արտարժույթի առկայությունն ու շարժը:

1012 «Կանխիկ դրամ ճանապարհին» - այս հաշվում հաշվառվում է ճանապարհին գտնվող կանխիկ դրամը:

Հաշիվը դեբետագրվում է վարկային կազմակերպության դրամարկղից վարկային կազմակերպության ստորաբաժանումներ, բանկոմատներ և այլ կազմակերպություններ կանխիկ դրամ փոխանցելու դեպքում, մինչև փաստաթղթերի ստացումը՝

Դտ - 1012

Կտ - 1011:

Հաշիվը կրեդիտագրվում է՝

ա) վարկային կազմակերպության դրամարկղից վարկային կազմակերպության ստորաբաժանումներ, բանկոմատներ և այլ կազմակերպություններ փոխանցված կանխիկ դրամը ստորաբաժանումների, այլ կազմակերպությունների դրամարկղեր և բանկոմատներ մուտքագրելու դեպքում՝

Դտ - ստացող կազմակերպությունների հաշիվներ, 1013

Կտ - 1012.

բ) վարկային կազմակերպության ստորաբաժանումներից, այլ կազմակերպություններից և բանկոմատներից ստացված կանխիկ դրամը վարկային կազմակերպության դրամարկղ մուտքագրելու դեպքում՝

Դտ - 1011

Կտ - 1012:

1013 «Կանխիկ դրամ բանկոմատներում (ավտոմատ գանձման սարքեր)» - այս հաշվում արտացոլվում է վարկային կազմակերպության բանկոմատներում կանխիկ Հայաստանի Հանրապետության դրամի ու արտարժույթի առկայությունն ու շարժը:

Հաշիվը դեբետագրվում է վարկային կազմակերպության բանկոմատներում կանխիկ դրամ մուտքագրելու դեպքում՝

Դտ - 1013

Կտ - 1012:

Հաշիվը կրեդիտագրվում է՝

ա) վարկային կազմակերպության բանկոմատներից կանխիկ դրամը վարկային կազմակերպության դրամարկղ փոխանցելու դեպքում՝

Դտ - 1012

Կտ - 1013.

բ) քարտերի հիման վրա հաճախորդներին վճարված կանխիկ դրամի դիմաց հաճախորդների քարտային հաշիվները դեբետագրելու դեպքում՝

Դտ - Հաճախորդների պլաստիկ քարտերի (վարկային) հաշիվներ

Կտ - 1013:

1014 «Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության կողմից գնված այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են՝ չեկերը և այլ վճարային փաստաթղթերը:

Հաշիվը դեբետագրվում է վարկային կազմակերպության կողմից ճանապարհային չեկեր գնելիս՝

Դտ - 1015

Կտ - Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է վարկային կազմակերպության կողմից ճանապարհային չեկերը վաճառելիս կամ ճանապարհային չեկերի դիմաց վճար ստանալիս՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 1015:

Ենթաբաժին 102
«Բանկային հաշիվներ»

102 ենթաբաժինը նախատեսված է բանկերում ՀՀ դրամով և արտարժույթով բանկային հաշիվների, կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշիվների և ցպահանջ ու ժամկետային ավանդների հաշիվների միջոցների հաշվառման համար: Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են մուտք եղած, իսկ կրեդիտում՝ ելք եղած դրամական միջոցները:

1021 «Բանկային հաշիվներ ռեզիդենտ բանկերում» - այս հաշվում արտացոլվում են ռեզիդենտ բանկերում վարկային կազմակերպության բանկային հաշիվներում դրամական միջոցների առկայությունն ու շարժը:

1022 «Ռեզիդենտ բանկերում բանկային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսներ» - հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերում վարկային կազմակերպությունների բանկային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է ռեզիդենտ բանկերում վարկային կազմակերպության բանկային հաշիվների միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

Դտ - 1022

Կտ - 6011:

Հաշիվը կրեդիտագրվում է ռեզիդենտ բանկերում վարկային կազմակերպության բանկային հաշիվների միջոցների դիմաց տոկոսներ ստանալիս՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 1022:

1023 «Բանկային հաշիվներ ոչ ռեզիդենտ բանկերում» - այս հաշվում արտացոլվում են ոչ ռեզիդենտ բանկերում վարկային կազմակերպության բանկային հաշիվներում դրամական միջոցների առկայությունն ու շարժը:

1024 «Ոչ ռեզիդենտ բանկերում բանկային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսներ» - հաշիվը նախատեսված է ոչ ռեզիդենտ բանկերում վարկային կազմակերպությունների բանկային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է ոչ ռեզիդենտ բանկերում վարկային կազմակերպության բանկային հաշիվների միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

Դտ - 1024

Կտ - 6012:

Հաշիվը կրեդիտագրվում է ոչ ռեզիդենտ բանկերում վարկային կազմակերպության բանկային հաշիվների միջոցների դիմաց տոկոսներ ստանալիս՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 1024:

1025 «Ոչ ռեզիդենտ բանկերին տրամադրված օվերնայթից ստացվելիք տոկոսներ» - հաշիվը նախատեսված է ոչ ռեզիդենտ բանկերին տրամադրված օվերնայթից ստացվելիք տոկոսների հաշվառման համար: Հաշվեգրելիս ձևակերպվում է՝

Դտ - 1025

Կտ - 6023 «Տոկոսային եկամուտներ ոչ ռեզիդենտ բանկերին տրամադրված օվերնայթներից»:

1026 «Կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշիվ ռեզիդենտ բանկերում» - հաշիվն օգտագործվում է նոր ստեղծվող վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալի ձևավորման և գործող վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալի համալրման նպատակով՝ մինչև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով կանոնադրական կապիտալի գրանցումը, որից հետո այս հաշիվը փակվում է, իսկ դրանում հաշվառված միջոցներն օգտագործվում են վարկային կազմակերպության հայեցողությամբ:

Հաշիվը դեբետագրվում է կանոնադրական կապիտալի ձևավորման և համալրման դեպքում՝

Դտ - 1026

Կտ - 3736 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ռեզիդենտների նկատմամբ», 3737 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ոչ ռեզիդենտների նկատմամբ»:

Կանոնադրական կապիտալի ձևավորումից կամ համալրումից հետո այս հաշիվը փակվում է:

1027 «Ստացվելիք տոկոսներ ռեզիդենտ բանկերում կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշվի միջոցներից» - հաշիվն օգտագործվում է վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալի ձևավորման և համալրման նպատակով բացված հաշվի մնացորդների դիմաց տոկոսների հաշվեգրման համար:

Հաշիվը դեբետագրվում է կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշվի միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

Դտ - 1027

Կտ - 6015 «Տոկոսային եկամուտներ կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշիվների միջոցներից»:

Հաշիվը կրեդիտագրվում է կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշվի միջոցների դիմաց տոկոսներ ստանալիս՝

Դտ -Դրամական միջոցներ

Կտ – 1027:

ԲԱԺԻՆ 11

«Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ»

Բաժին 11-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 111 «ՀՀ պետական արժեթղթեր», 112 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 113 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 114 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 115 «Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր», 116 «Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ», 117 «Ածանցյալ գործիքներ»:

Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի համաձայն: Բաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում ակտիվների ձեռքբերումը, դրանց արժեքի ավելացումը և տոկոսների կուտակումը, իսկ կրեդիտում՝ դրանց օտարումը, արժեքի նվազումն ու կուտակված տոկոսների ստացումը կամ դուրսգրումը:

Ներդրումները սկզբնական ճանաչման ժամանակ գրանցվում են ձեռքբերման արժեքով, այնուհետև՝ վերագնահատվում իրական արժեքով: Արտարժույթով արտահայտված ակտիվները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով՝ համաձայն ՀՀՀՀ 21 ստանդարտի:

Ենթաբաժին 111

«ՀՀ պետական արժեթղթեր»

Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն օգտագործվում են Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար:

1111 «ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության պետական զեղչատոկոսային (դիսկոնտային) և անտոկոս արժեթղթերի հաշվառման համար: Հաշիվը դեբետագրվում է արժեթուղթը ձեռք բերելիս՝ ձեռքբերման արժեքի չափով՝

Դտ - 1111

Կտ - Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է արժեթղթի վաճառքի կամ մարման դեպքում:

Արժեթուղթը իրացնելիս.

ա) վաճառքի գինը գերազանցում է հաշվեկշռային արժեքը՝ դրական վերագնահատման դեպքում՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 1111

Կտ - 1114

Կտ - 6422 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ».

բ) վաճառքի գինը գերազանցում է հաշվեկշռային արժեքը և ձեռքբերման արժեքը, բացասական վերագնահատման դեպքում՝

Դտ - Դրամական միջոցներ

Դտ - 1114

Կտ - 1111

Կտ - 6422 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ».

գ) վաճառքի գինը բարձր է հաշվեկշռային արժեքից և ցածր՝ ձեռքբերման գնից բացասական վերագնահատման դեպքում՝

Դտ - Դրամական միջոցներ

Դտ - 1114
Կտ - 1111
Կտ - 6422 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ».
դ) վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից և բարձր՝ ձեռքբերման գնից դրական վերագնահատման դեպքում՝
Դտ - Դրամական միջոցներ
Դտ - 7513 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»
Կտ - 1111
Կտ - 1114.
ե) վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից և ձեռքբերման գնից բացասական վերագնահատման դեպքում՝
Դտ - Դրամական միջոցներ
Դտ - 1114
Դտ - 7513 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»
Կտ - 1111.
զ) վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից և ձեռքբերման գնից դրական վերագնահատման դեպքում՝
Դտ - Դրամական միջոցներ
Դտ - 7513 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»
Կտ - 1111
Կտ - 1114:

1112 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության պետական տոկոսային (կուպոնային) արժեթղթերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1111 հաշվի դեպքում:

1113 «ՀՀ պետական արժեթղթերից ստացվելիք տոկոսներ» - հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերից ստացվելիք տոկոսների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է տոկոսները հաշվեգրելիս՝
Դտ - 1113
Կտ - 6071, 6072:
Հաշիվը կրեդիտագրվում է տոկոսներն ստանալիս՝
Դտ - Դրամական միջոցներ
Կտ - 1113:

1114 «ՀՀ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ» - հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերի շուկայական գների փոփոխություններն արտացոլելու համար: Հաշվի մնացորդն ավելացվում կամ հանվում է ձեռքբերման արժեքից՝ իրական արժեքն արտացոլելու համար:

Հաշիվը դեբետագրվում է արժեթղթի իրական արժեքը բարձրանալու դեպքում՝
Դտ - 1114
Կտ - 6428 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված օգուտներ»:
Հաշիվը կրեդիտագրվում է արժեթղթի իրական արժեքը նվազելու դեպքում՝
Դտ - 7516 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից»
Կտ - 1114:

Ենթաբաժին 112
«ՀՀ ոչ պետական արժեթղթեր»

Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն օգտագործվում են Հայաստանի Հանրապետության ոչ պետական մարմինների կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար:

1121 «Ներդրումներ արտոնյալ բաժնետոմսերում» - այստեղ հաշվառվում են վարկային կազմակերպության ներդրումներն այլ կազմակերպությունների թողարկած արտոնյալ բաժնետոմսերում:

Հաշիվը դեբետագրվում է բաժնետոմսերը ձեռք բերելիս՝ ձեռքբերման արժեքի չափով՝
Դտ - 1121
Կտ - Դրամական միջոցներ:
Հաշիվը կրեդիտագրվում է բաժնետոմսերը վաճառելիս՝
ա) վաճառքի գինը բարձր է հաշվեկշռային արժեքից՝ դրական վերագնահատման դեպքում՝
Դտ - Դրամական միջոցներ
Կտ - 1121
Կտ - 1128
Կտ - 6422.
բ) վաճառքի գինը գերազանցում է հաշվեկշռային արժեքը և ձեռքբերման արժեքը, բացասական վերագնահատման դեպքում՝
Դտ - Դրամական միջոցներ
Դտ - 1121
Կտ - 1128
Կտ - 6422 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ».

գ) վաճառքի գինը բարձր է հաշվեկշռային արժեքից և ցածր՝ ձեռքբերման գնից բացասական վերագնահատման դեպքում՝

Դտ - Դրամական միջոցներ

Դտ - 1121

Կտ - 1128

Կտ - 6422 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ».

դ) վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից և բարձր՝ ձեռքբերման գնից դրական վերագնահատման դեպքում՝

Դտ - Դրամական միջոցներ

Դտ - 7513 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»

Կտ - 1121

Կտ - 1128.

ե) վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից և ձեռքբերման գնից բացասական վերագնահատման դեպքում՝

Դտ - Դրամական միջոցներ

Դտ - 1128

Դտ - 7513 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»

Կտ - 1121.

զ) վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից և ձեռքբերման գնից դրական վերագնահատման դեպքում՝

Դտ - Դրամական միջոցներ

Դտ - 7513 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից»

Կտ - 1121

Կտ - 1128:

1122 «Ներդրումներ սովորական բաժնետոմսերում» - այստեղ հաշվառվում են վարկային կազմակերպության ներդրումներն այլ կազմակերպությունների թողարկած սովորական բաժնետոմսերում: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1121 հաշվի դեպքում:

1123 «Այլ փայամասնակցություններ» - այստեղ հաշվառվում է վարկային կազմակերպության փայամասնակցությունը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1121 հաշվի դեպքում:

1124 «Ստացվելիք շահաբաժիններ» - այս հաշվում հաշվառվում են 1121, 1122, 1123 հաշիվների գծով ստացվելիք շահաբաժինները:

Հաշիվը դեբետագրվում է թողարկողի կողմից շահաբաժինները հայտարարելու դեպքում՝

Դտ - 1124 «Ստացվելիք շահաբաժիններ»

Կտ - 6101 «Եկամուտ շահաբաժիններից»:

Հաշիվը կրեդիտագրվում է շահաբաժիններն ստանալիս՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 1124 «Ստացվելիք շահաբաժիններ»:

1125 «ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթեր» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1112 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթեր» հաշվի դեպքում:

1126 «ՀՀ ոչ պետական արժեթղթերից ստացվելիք տոկոսներ» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1113 «ՀՀ պետական արժեթղթերից ստացվելիք տոկոսներ» հաշվի դեպքում:

1127 «ՀՀ ոչ պետական առանց տոկոսի արժեթղթեր» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1111 «ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթեր» հաշվի դեպքում:

1128 «ՀՀ ոչ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ» - հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթերի շուկայական գների փոփոխություններն արտացոլելու համար: Հաշվի մնացորդն ավելացվում կամ հանվում է ձեռքբերման արժեքից՝ իրական արժեքն արտացոլելու համար:

Հաշիվը դեբետագրվում է արժեթղթի իրական արժեքը բարձրանալու դեպքում՝

Դտ - 1128

Կտ - 6428 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված օգուտներ»:

Հաշիվը կրեդիտագրվում է արժեթղթի իրական արժեքը նվազելու դեպքում՝

Դտ - 7516 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից»

Կտ - 1128:

Ենթաբաժին 113

«Այլ երկրների պետական արժեթղթեր»

Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն օգտագործվում են այլ երկրների թողարկած պետական արժեթղթերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 111 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 114

«Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր»

Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն օգտագործվում են այլ երկրների թողարկած ոչ պետական արժեթղթերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 111 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 115
«Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր»

Այս ենթաբաժնի հաշիվներն օգտագործում է ռեպո համաձայնագրերում արժեթղթեր գնող վարկային կազմակերպությունը: 1151-1159 հաշիվների դեբետում գրանցվում են արժեթղթերի ձեռքբերման, իսկ կրեդիտում՝ վաճառքի ծևակերպումները: 1160 հաշվում արտացոլվում են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի շուկայական գների փոփոխությունները՝ դեբետում՝ գների աճը, կրեդիտում՝ գների նվազումը:

Հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի սկզբունքներին համապատասխան և «ՀՀ տարածքում գործող բանկերի ռեպո և հակադարձ ռեպո գործարքների հաշվապահական հաշվառման կարգի» համաձայն:

Ենթաբաժին 116
«Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվներն օգտագործվում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ ֆակտորինգային այնպիսի գործարքների հաշվառման համար, որոնց գծով պահանջները վարկային կազմակերպությունը մտադիր չէ պահել մինչև վճարում ստանալը, այլ վաճառելու է մինչև մարման (վճարման) ժամկետը: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ առևտրական նպատակներով պահվող արժեթղթերի դեպքում:

Ենթաբաժին 117
«Ածանցյալ գործիքներ»

Այս ենթաբաժնի հաշիվներն օգտագործվում են առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքների հաշվառման նպատակով:

Հաշվեկշռում ածանցյալ գործարքն արտացոլվում է պայմանագրի ձեռքբերման օրվանից: Հաշվառումը տարվում է իրական արժեքով՝ վերագնահատման արդյունքն արտացոլելով եկամուտներում կամ ծախսերում: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 32, ՀՀՀՀՍ 39 ստանդարտների և այլ կարգերի համաձայն:

ԲԱԺԻՆ 12
«Պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

Բաժին 12-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 121 «Ավանդներ», 122 «Բանկերին տրված վարկեր (փոխառություններ)», 123 «Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր (փոխառություններ)», 124 «Դեպոնացված միջոցներ»:

Հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՀՀՀՀՍ), Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա: Բաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց են տրվում բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ վարկային կազմակերպության պահանջների աճը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը: 124 «Դեպոնացված միջոցներ» ենթաբաժնում արտացոլվում են բանկերում կամ ֆինանսական կազմակերպություններում դեպոնացված (սառեցված) գումարները:

Արտարժույթով արտահայտված միջոցները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով՝ համաձայն ՀՀՀՀՍ 21-ի:

ԲԱԺԻՆ 13
«Ռեպո համաձայնագրեր»

Բաժին 13-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 131 «Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ», 132; 133 «Ռեպո համաձայնագրեր իրավաբանական անձանց, ֆիզիկական անձանց և հիմնարկների հետ»:

Հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ռեպո և հակադարձ ռեպո գործարքների հաշվապահական հաշվառման կարգի» համաձայն:

Բաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում բանկերի, ֆինանսական կազմակերպությունների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց, հիմնարկների նկատմամբ վարկային կազմակերպության պահանջների աճը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը:

ԲԱԺԻՆ 14
«Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ»

Բաժին 14-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 141 «ՀՀ պետական արժեթղթեր», 142 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 143 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 144 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 145 «Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»: Բաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց են տրվում ակտիվների ձեռքբերումը, դրանց արժեքի ավելացումը և տոկոսների կուտակումը, իսկ կրեդիտում՝ դրանց օտարումը, արժեքի նվազումն ու կուտակված տոկոսների ստացումը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի համաձայն: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 11 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ» բաժնի հաշիվների դեպքում, բացառությամբ՝ մեկ տարբերության. իրական արժեքով վերագնահատման ժամանակ վերագնահատման արդյունքը վարկային կազմակերպության ընտրությամբ արտացոլվում է կամ եկամուտներում (ծախսերում), կամ կապիտալում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների շուկայական գնի ճշտման 1414, 1428, 1434, 1448 հաշիվներն արժեթղթերի շուկայական գնի փոփոխության դեպքում թղթակցում են կամ 6429 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատու-

մից ստացված օգուտներ» և 7517 «Կորուստներ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից» հաշիվների, կամ 5123 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ /վնաս» հաշվի հետ:

ԲԱԺԻՆ 15

«Հաճախորդներին տրված վարկեր (փոխատվություններ)»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 151 «Ֆիզիկական անձանց տրված վարկեր (փոխառություններ)», 152; 153 «Իրավաբանական անձանց տրված վարկեր (փոխառություններ)», 154 «Հիմնարկներին տրված վարկեր (փոխառություններ)», 155 «Վարկային կազմակերպության աշխատակիցներին տրված վարկեր (փոխառություններ)», 156 «Վարկային կազմակերպության հետ կապված անձանց տրված վարկեր (փոխառություններ)», 157 «Վարկերի հնարավոր կորուստների ծածկման պահուստներ», 158; 159 «Չճանաչված տոկոսային եկամուտ»:

Հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀ 39-ի, «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» և այլ նորմատիվ ակտերի համաձայն: ՀՀՀՀ 21-ի համաձայն՝ այս հաշիվների արտարժութային մնացորդները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանվող հաշվարկային փոխարժեքով:

Բաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում վարկերի, փոխատվությունների տրամադրումը, դրանց դիմաց տոկոսների հաշվեգրումը, իսկ կրեդիտում՝ վարկերի ու փոխատվությունների մարումը, տոկոսների ստացումը, ինչպես նաև մայր գումարի ու տոկոսների դուրսգրումը:

Ենթաբաժին 151

«Ֆիզիկական անձանց տրված վարկեր (փոխառություններ)»

Այս հաշիվներում հաշվառվում են վարկային կազմակերպության կողմից ֆիզիկական անձանց և ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտներին տրամադրված վարկերը, դրանց դիմաց հաշվեգրված տոկոսները: Հաշվեգրված տոկոսների հաշիվներում արտացոլվում են ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտներին տրված վարկերի գծով տոկոսները:

Ենթաբաժին 152, 153

«Իրավաբանական անձանց տրված վարկեր (փոխառություններ)»

Ենթաբաժնի հաշիվներում հաշվառվում են վարկային կազմակերպության կողմից իրավաբանական անձանց տրամադրված վարկերը, դրանց դիմաց հաշվեգրված տոկոսները:

Ենթաբաժին 154

«Հիմնարկներին տրված վարկեր»

Այս հաշիվներում հաշվառվում են վարկային կազմակերպության կողմից հիմնարկներին տրամադրված վարկերը, դրանց դիմաց հաշվեգրված տոկոսները:

Ենթաբաժին 155

«Վարկային կազմակերպության աշխատակիցներին տրված վարկեր (փոխառություններ)»

Այս հաշիվներում հաշվառվում են վարկային կազմակերպության աշխատակիցներին տրամադրված վարկերը, դրանց դիմաց հաշվեգրված տոկոսները:

Ենթաբաժին 156

«Վարկային կազմակերպության հետ կապված անձանց տրված վարկեր (փոխառություններ)»

Այս հաշիվներում հաշվառվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն վարկային կազմակերպության հետ կապված անձանց տրամադրված վարկերը, դրանց դիմաց հաշվեգրված տոկոսները:

Ենթաբաժին 157

«Վարկերի հնարավոր կորուստների ծածկման պահուստներ»

Այս հաշիվներում հաշվառվում է վարկերի հնարավոր կորուստների համար ստեղծվող ընդհանուր և հատուկ պահուստներում միջոցների շարժը՝ տրված վարկերի համար: Հաշիվները կոնտրակտիվային են, հաշվառումը տարվում է ՀՀՀՀ 39-ի և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն:

Ենթաբաժին 158, 159

«Չճանաչված տոկոսային եկամուտ»

Հաշիվը կոնտրակտիվային է: Այն հակակշիռ է կուտակված ստացվելիք տոկոսների հաշիվներին: Հաշվառումը տարվում է «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն:

«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն՝ ակտիվը չաշխատող դասակարգելու պահին ակտիվի գծով հաշվեգրված տոկոսային եկամուտները գրանցվում են որպես չճանաչված տոկոսային եկամուտ՝

Դտ - Տոկոսային եկամուտ

Կտ - 158; 159 «Չճանաչված տոկոսային եկամուտ»:

Չաշխատող ակտիվների գծով տոկոսների հաշվեգրումը շարունակվում է հետևյալ ձևակերպմամբ՝

Դտ - Ստացվելիք տոկոսներ

Կտ - 158; 159 «Չճանաչված տոկոսային եկամուտ»:

ԲԱԺԻՆ 16, 17

«Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 161 «Հաշվարկներ վարկային կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև», 162;163 «Երաշխիքներ», 164 «Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր», 165;166 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ», 167;168 «Ստացվելիք շահաբաժիններ», 169 «Հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով ստացվելիք գումարներ», 170 «Ստացվելիք այլ գումարներ», 171 «Հեջավորման ածանցյալ գործիքներ»:

Բաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում վարկային կազմակերպության ունեցած պահանջների ավելացումը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը:

Ենթաբաժին 161

«Հաշվարկներ վարկային կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև»

Այս ենթաբաժնում հաշվառվում են այն գումարները, որոնք առաջանում են վարկային կազմակերպության և մասնաճյուղերի միջև փոխադարձ հաշվարկների արդյունքում: Հաշվետվությունը ներկայացնելու կամ հրապարակելու ժամանակ այս հաշիվը ենթակա է զրոյացման: Զրոյացման արդյունքում առաջացած մնացորդը դասակարգվում է համապատասխան հաշիվներին: Եթե դա անհնար է, ապա անհրաժեշտ է առաջացած մնացորդը գրանցել 1704 «Ստացվելիք այլ գումարներ այլ ռեզիդենտներից», 1705 «Ստացվելիք այլ գումարներ ոչ ռեզիդենտներից» կամ 3551 «Այլ պարտավորություններ ռեզիդենտների նկատմամբ», 3553 «Այլ պարտավորություններ ոչ ռեզիդենտների նկատմամբ» հաշիվների վրա: Հաջորդ օրը մնացորդը վերականգնվում է սույն ենթաբաժնի հաշիվներին:

Ենթաբաժին 162, 163

«Երաշխիքներ»

1621 «Երաշխիքներով կատարված վճարումներ ռեզիդենտ բանկերի համար» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության կողմից ռեզիդենտ բանկերի համար տրված երաշխիքների դիմաց կատարված վճարումները: Երաշխիքների հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» 37-ի համաձայն: Այս պահանջների արժեզրկման դեպքում սրանց գծով կատարվում է պահուստավորում և դուրսգրում՝ ըստ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»:

Հաշիվը դեբետագրվում է տրված երաշխիքների դիմաց վճարում կատարելիս՝

Դտ - 1621

Կտ - Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է՝

ա) վճարված գումարի դիմաց փոխհատուցում ստանալիս՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 1621.

բ) տրված անհուսալի երաշխիքները հաշվեկշռից դուրս գրելիս՝

Դտ - Ակտիվների հնարավոր կորուստների դուրսգրման պահուստների հաշիվներ

Կտ - 1621:

1622 «Ստացվելիք վճարներ ռեզիդենտ բանկերի համար տրված երաշխիքների գծով» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության կողմից ռեզիդենտ բանկերի համար տրված երաշխիքների դիմաց ստացվելիք վճարները:

Հաշիվը դեբետագրվում է ստացվելիք վճարների գումարի չափով՝

Դտ - 1622

Կտ - 6412 «Երաշխիքներից, հոժարագրերով, հավատարմագրային կառավարման գործառնություններից ստացված եկամուտներ»:

Հաշիվը կրեդիտագրվում է վճարներն ստանալիս՝

Դտ - Դրամական միջոցներ, հաճախորդ վարկային կազմակերպության բանկային հաշիվ

Կտ - 1622:

1623 «Երաշխիքներով կատարված վճարումներ ռեզիդենտ վարկային կազմակերպությունների համար» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1621 հաշվի դեպքում:

1624 «Ստացվելիք վճարներ ռեզիդենտ վարկային կազմակերպությունների համար տրված երաշխիքների գծով» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1622 հաշվի դեպքում:

1625 «Երաշխիքներով կատարված վճարումներ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների համար» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1621 հաշվի դեպքում:

1626 «Ստացվելիք վճարներ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների համար տրված երաշխիքների գծով»- հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1622 հաշվի դեպքում:

1627 «Երաշխիքներով կատարված վճարումներ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1621 հաշվի դեպքում:

1628 «Ստացվելիք վճարներ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար տրված երաշխիքների գծով» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1622 հաշվի դեպքում:

1629 «Երաշխիքներով կատարված վճարումներ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1621 հաշվի դեպքում:

1630 «Ստացվելիք վճարներ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար տրված երաշխիքների գծով» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1622 հաշվի դեպքում:

1631 «Երաշխիքներով կատարված վճարումներ ոչ ռեզիդենտների համար» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1621 հաշվի դեպքում:

1632 «Ստացվելիք վճարներ ոչ ռեզիդենտների համար տրված երաշխիքների գծով» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1622 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 164
«Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր»

Այս ենթաբաժնի հաշիվներն օգտագործում է ռեպո համաձայնագրերում արժեթղթեր վաճառող վարկային կազմակերպությունը: Հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի սկզբունքներին համապատասխան և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ռեպո և հակադարձ ռեպո գործարքների հաշվապահական հաշվառման կարգի» համաձայն:

Ենթաբաժին 165, 166
«Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական վարձակալության հաշվառման համար: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի:

1651 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ բանկերին տրամադրված ֆինանսական վարձակալությունից» - հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերին տրամադրված ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները (տոկոսների և հիմնական գումարի գծով բոլոր ստացվելիք մուտքերի ամվանական (չզեղչված) արժեքը) հաշվառելու համար:

Հաշիվը դեբետագրվում է հիմնական միջոցները ֆինանսական վարձակալությամբ ռեզիդենտ բանկերին տրամադրելիս՝

Դտ - 1651

Կտ - Հիմնական միջոցներ

Կտ - 411 «Ձստացված ֆինանսական եկամուտներ տրամադրված ֆինանսական վարձակալությունից» հաշիվներ:

Հաշիվը կրեդիտագրվում է ռեզիդենտ բանկերին տրամադրված ֆինանսական վարձակալության գծով լրիվ կամ մասնակի վճարում ստանալիս՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 1651:

1653 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ վարկային կազմակերպություններին տրամադրված ֆինանսական վարձակալությունից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1651 հաշվի դեպքում:

1655 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ֆինանսական վարձակալությունից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1651 հաշվի դեպքում:

1657 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց տրամադրված ֆինանսական վարձակալությունից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1651 հաշվի դեպքում:

1658 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ոչ պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց տրամադրված ֆինանսական վարձակալությունից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1651 հաշվի դեպքում:

1659 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված ֆինանսական վարձակալությունից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1651 հաշվի դեպքում:

1661 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված ֆինանսական վարձակալությունից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1651 հաշվի դեպքում:

1663 «Ստացվելիք գումարներ այլ ռեզիդենտների տրամադրված ֆինանսական վարձակալությունից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1651 հաշվի դեպքում:

1665 «Ստացվելիք գումարներ ոչ ռեզիդենտներին տրամադրված ֆինանսական վարձակալությունից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1651 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 167, 168
«Ստացվելիք շահաբաժիններ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են կապակցված (ասոցիացված, համատեղ կամ դուստր) կազմակերպություններում ներդրումներից ստանալիք շահաբաժինների հաշվառման համար:

Ներդրումները հաշվառման ինքնարժեքի մեթոդի դեպքում

167, 168 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են ստացվելիք շահաբաժինները հայտարարելուց հետո՝

Դտ - 167, 168 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվներ

Կտ - 6101 «Եկամուտ շահաբաժիններից»

167, 168 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվները կրեդիտագրվում են շահաբաժիններն ստանալիս՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 167, 168 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվներ:

Ներդրումները հաշվառման բաժնեմասնակցության մեթոդի դեպքում

167, 168 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են ստացվելիք շահաբաժինները հայտարարելուց հետո՝

Դտ - «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվներ

Կտ - Համապատասխան ներդրման հաշիվ

167, 168 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվները կրեդիտագրվում են շահաբաժինները ստանալիս՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 167, 168 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվներ:

Ենթաբաժին 169

«Հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից հավատարմագրային կառավարման գործառնություններից ստացվելիք գումարների հաշվառման համար: Վարկային կազմակերպության կողմից կառավարվող ակտիվները չեն գրանցվում այս հաշիվների տակ, քանի որ դրանք վարկային կազմակերպության սեփականությունը չեն:

1691 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ բանկերից հավատարմագրային կառավարման գործառնություններից» - այս հաշվում հաշվառվում են ռեզիդենտ բանկերից ստացվելիք գումարները՝ նրանց մատուցված հավատարմագրային կառավարման ծառայությունների համար:

Հաշիվը դեբետագրվում է ստանալիք գումարները (տոկոսներ, միջնորդավճարներ կամ տուգանքներ) հաշվեգրելիս՝

Դտ - 1691

Կտ - 6412 «Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով գործառնություններից, հավատարմագրային կառավարման գործառնություններից ստացված եկամուտներ»:

Հաշիվը կրեդիտագրվում է հաշվեգրած գումարները հավաքագրելիս՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 1691:

1692 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ վարկային կազմակերպություններից հավատարմագրային կառավարման գործառնություններից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1691 հաշվի դեպքում:

1693 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից հավատարմագրային կառավարման գործառնություններից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1691 հաշվի դեպքում:

1694 «Ստացվելիք գումարներ ոչ ռեզիդենտ բանկերից հավատարմագրային կառավարման գործառնություններից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1691 հաշվի դեպքում:

1695 «Ստացվելիք գումարներ ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից հավատարմագրային կառավարման գործառնություններից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1691 հաշվի դեպքում:

1696 «Ստացվելիք գումարներ այլ ռեզիդենտներից հավատարմագրային կառավարման գործառնություններից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1691 հաշվի դեպքում:

1697 «Ստացվելիք գումարներ այլ ոչ ռեզիդենտներից հավատարմագրային կառավարման գործառնություններից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1691 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 170

«Ստացվելիք այլ գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են այլ ստացվելիք գումարների հաշվառման համար:

Ստացվելիք գումարները հաշվեգրելիս դեբետագրվում են 170 ենթաբաժնի հաշիվները և կրեդիտագրվում՝ տվյալ գործարքի գծով թղթակցող հաշիվները:

Վճարումն ստանալիս տրվում է՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 170 «Ստացվելիք այլ գումարներ» ենթաբաժնի հաշիվներ:

Ենթաբաժին 171

«Հեջավորման ածանցյալ գործիքներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են հեջավորման ածանցյալ գործիքների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 32-ի, ՀՀՀՀՍ 39-ի և կարգերի համաձայն:

ԲԱԺԻՆ 18

«Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 181 «Դեբիտորական պարտքեր», 182 «Կանխավճարներ աշխատակիցներին և մատակարարներին» 183 «Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով», 184 «Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ»: Բացառությամբ 184 «Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ» ենթաբաժնի հաշիվների, մնացած բոլոր հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում վարկային կազմակերպության ունեցած պահանջների ավելացումը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը: Ըստ ՀՀՀՀՍ 21-ի՝ այս հաշիվների արտարժութային մնացորդները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանվող հաշվարկային փոխարժեքով:

Ենթաբաժին 181

«Դեբիտորական պարտքեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են բյուջեի և այլ ռեզիդենտ ու ոչ ռեզիդենտ անձանց նկատմամբ դեբիտորական պարտքերի հաշվառման համար:

1811 «Այլ դեբիտորական պարտքեր բյուջեի նկատմամբ» - այս հաշվում հաշվառում են այլ գործառնությունների գծով բյուջեի նկատմամբ դեբիտորական պարտքերը:

1812 «Դեբիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ» - այս հաշվում հաշվառվում են ռեզիդենտներից ստացվելիք գումարները:

1813 «Դեբիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ» - այս հաշվում հաշվառվում են ոչ ռեզիդենտներից ստացվելիք գումարները:

Ենթաբաժին 182

«Կանխավճարներ աշխատակիցներին և մատակարարներին»

1821 «Կանխավճարված աշխատավարձ» - այս հաշվում հաշվառվում է վարկային կազմակերպության աշխատակիցներին կանխավճարային կարգով վճարված աշխատավարձը:

Հաշիվը դեբետագրվում է կանխավճարը տալիս՝

Դտ - 1821

ԿՏ - Դրամական միջոցներ:

Կանխավճարված աշխատավարձի գծով դեբիտորական պարտքը հաշվարկված աշխատավարձի հետ մարելիս՝

Դտ - 3731 «Հիմնական աշխատողներին վճարվելիք աշխատավարձ», 3732 «Պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձ»

Կտ - 1821:

1822 «Վարկային կազմակերպության աշխատակիցներին տրված առհաշիվ գումարներ» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության աշխատակիցներին առհաշիվ տրված այնպիսի գումարները, ինչպիսիք են՝ գործուղումների հետ կապված կանխավճարները, վճարներն ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար և այլն:

Հաշիվը դեբետագրվում է առհաշիվ գումարներ տրամադրելիս՝

Դտ - 1822

Կտ - Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է առհաշիվ տրված գումարի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն ստանալիս: 1822 հաշվի գումարը դուրս է գրվում այն հաշիվների վրա, որոնց գծով օգտագործվել են այդ միջոցները՝

Դտ - Ծախսեր, ակտիվային հաշիվներ և պասիվային հաշիվներ

Կտ - 1822:

1823 «Կանխավճարներ ռեզիդենտ մատակարարներին» - այս հաշվում հաշվառվում են ռեզիդենտներին ապրանքների և ծառայությունների համար տրված կանխավճարները: Ապրանքների ստացման կամ ծառայությունների մատուցման դեպքում կանխավճարներն այս հաշվից փոխանցվում են համապատասխան ակտիվի կամ ծախսի հաշիվ:

Հաշիվը դեբետագրվում է կանխավճար տալիս՝

Դտ - 1823

Կտ - Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է համապատասխան ապրանքները կամ ծառայությունները ստանալիս՝

Դտ - Ծախսեր, ակտիվային հաշիվներ

Կտ - 1823:

1824 «Կանխավճարներ ոչ ռեզիդենտ մատակարարներին» - այս հաշվում հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1823 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 183

«Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են շահութահարկի, եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովագրության գծով վճարված կանխավճարների հաշվառման համար:

1831 «Կանխավճարներ շահութահարկի գծով» - այս հաշվում հաշվառում են շահութահարկի գծով բյուջեին վճարված կանխավճարները:

Կանխավճար կատարելիս ձևակերպվում է՝

Դտ - 1831

Կտ - Դրամական միջոցներ:

Պարտավորության ժամկետը լրանալիս կանխավճարները դուրս են գրվում այս հաշվից՝ թղթակցելով պարտավորությունների համապատասխան հաշվի հետ՝

Դտ - 3721 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով»

Կտ - 1831:

1832 «Կանխավճարներ ավելացված արժեքի հարկի գծով» - այս հաշվում հաշվառում են ավելացված արժեքի հարկի գծով բյուջեին վճարված կանխավճարները: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1831 հաշվի դեպքում:

1833 «Այլ կանխավճարված հարկեր և տուրքեր» - այս հաշվում հաշվառում են այլ հարկերի և տուրքերի գծով բյուջեին վճարված կանխավճարները: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1831 հաշվի դեպքում:

1834 «Կանխավճարներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով» - այս հաշվում հաշվառում են պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով կատարված կանխավճարները: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1831 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 184

«Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները կոնտրակտիվային են և ցույց են տրվում բացասական նշանով: Հաշվառումը տարվում է «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն:

ԲԱԺԻՆ 19

«Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 191 «ՀՀ պետական արժեթղթեր», 192 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 193 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 194 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 195;196;197 «Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ», 198 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստ»:

Բաժնում ընդգրկված բոլոր հաշիվները (բացառությամբ՝ «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստ» հաշվի) ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում վարկային կազմակերպության ունեցած պահանջների ավելացումը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների սկզբնական գրանցումը կատարվում է ձեռքբերման արժեքով (անվանական արժեքին գումարած հավելավճար կամ հանած զեղչատոկոս), իսկ այնուհետև՝ ամորտիզացված արժեքով: Սկզբնական գրանցման ժամանակ մինչև ձեռքբերումն ակտիվի գծով կուտակված և չվճարված տոկոսների գումարով վարկային կազմակերպությունը դեբետագրում է ստացվելիք տոկոսների հաշիվները: Զեղչատոկոսի կամ հավելավճարի համար գործում են առանձին հաշիվներ, դրանց գումարը դուրս է գրվում (ամորտիզացվում) եկամուտների հաշվին՝ օգտագործելով էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդը: Եթե վարկային կազմակերպությունն այս կարգի ակտիվները վերադասակարգում է որպես առևտրական նպատակներով պահվող կամ վաճառքի համար մատչելի ակտիվներ, ապա գրանցումը կատարվում է դրանց՝ տվյալ օրվա շուկայական (իրական) գնի համաձայն: Այն դեպքում, երբ ներդրումները վերադասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող ակտիվներ, ապա գնահատման ժամանակ առաջացած շահույթը կամ վնասը, հաշվարկված որպես իրական արժեքի և մինչև մարման ժամկետը պահվող ներդրման հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերություն, գրանցվում է եկամուտների հաշվետվության մեջ՝ որպես իրացված շահույթ կամ վնաս: Եթե ակտիվը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի, ապա վերագնահատման արդյունքը, որպես իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերություն, գրանցվում է կամ հաշվեկշռի կապիտալի 5123 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» հաշվում, կամ եկամուտներում (ծախսերում):

Ըստ ՀՀՀՀՍ 21-ի՝ այս հաշիվների արտարժութային մնացորդները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանվող հաշվարկային փոխարժեքով:

Ենթաբաժին 191

«ՀՀ պետական արժեթղթեր»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար: Եթե արժեթղթերը ձեռք են բերվել անվանականից բարձր կամ ցածր արժեքով, ապա հավելավճարի կամ զեղչատոկոսի համար օգտագործվում են առանձին հաշիվներ:

1911 «ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության պետական զեղչատոկոսային (դիսկոնտային) և անտոկոս արժեթղթերի հաշվառման համար: Զեղչատոկոսային արժեթղթերից եկամուտը ստացվում է անվանական արժեքի ու ձեռքբերման գնի տարբերություն հանդիսացող զեղչի (դիսկոնտի) ամորտիզացիայի միջոցով:

Հաշիվը դեբետագրվում է արժեթուղթը ձեռք բերելիս՝

Դտ - 1911 (անվանական արժեքով)

Կտ - 1912 «ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս» (ձեռքբերման գնի և անվանական արժեքի տարբերության չափով)

Կտ - Դրամական միջոցներ (ձեռքբերման արժեքով):

Հաշիվը կրեդիտագրվում է արժեթղթի մարման դեպքում՝

Կտ - 1911

Դտ - Դրամական միջոցներ:

1912 «ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս» - այս հաշվում հաշվառվում է մինչև մարման ժամկետը պահվող Հայաստանի Հանրապետության պետական զեղչատոկոսով (դիսկոնտային) արժեթղթերի զեղչատոկոսը: Մինչև արժեթղթի մարման ժամկետը բանկը էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով կատարում է զեղչատոկոսի ամորտիզացիա՝ այն դուրս գրելով եկամուտների հաշվին՝

Դտ - 1912 «ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս»

Կտ - 6071 «Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթերից»:

Ամորտիզացիայի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. ենթադրենք, բանկը ձեռք է բերել 1000 դրամ անվանական արժեքով 3 ամիս ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերը ձեռք են բերվել յուրաքանչյուրը՝ 942.3 դրամով: Ընդունենք, որ ամորտիզացիայի հաշվարկը կատարվում է ամսական կտրվածքով, հետևաբար, եկամտաբերությունը նույնպես պետք է հաշվել ամսական կտրվածքով: Ներկա արժեքի բանաձևով գտնում ենք, որ 1000 դրամ ապագա արժեքի, 942.3 դրամ ներկա արժեքի և 3 ամիս ժամանակահատվածի համար ամսական եկամտաբերությունը կազմում է 2%:

942.3 ձեռքբերման արժեքը բազմապատկվում է 0.02-ով (2%): Արդյունքը՝ 18.85 դրամ, իրենից ներկայացնում է ամորտիզացիայի գումարն առաջին ամսվա համար: 18.85 դրամն ավելանում է 942.3 դրամ ձեռքբերման արժեքին, և ստացվում է նոր հաշվեկշռային արժեքը: Երկրորդ և երրորդ ամիսների համար նույնպես 0.02-ը բազմապատկվում է պարտատոմսի ընթացիկ արժեքին՝ ստանալով ամորտիզացիայի գումարը: Երրորդ ամսվա վերջում հաշվեկռային արժեքը հավասարվում է 1000-ի: Այսինքն՝ զեղչատոկոսն ամբողջությամբ ամորտիզացված է:

Արժեթղթի մարման օրը 1000 դրամ արժեքով կատարվում է հետևյալ ձևակերպումը՝

Կտ - 1911

Դտ - Դրամական միջոցներ:

1913 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթեր» - այս հաշվում հաշվառում են տոկոսային եկամուտ բերող պետական արժեթղթերը: Այս ներդրումները կարող են ձեռք բերվել ինչպես անվանական արժեքով, այնպես էլ դրանից բարձր կամ ցածր գնով՝ կախված արժեթղթերի կուպոնային և շուկայական տոկոսադրույքների մակարդակից:

Հաշիվը դեբետագրվում է Հայաստանի Հանրապետության պետական տոկոսային արժեթղթեր ձեռք բերելիս:

Եթե արժեթուղթը ձեռք է բերվել զեղչով, ապա տրվում է հետևյալ ձևակերպումը՝

Դտ - 1913 (անվանական արժեքով)

Կտ - 1914 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս»

Կտ - Դրամական միջոցներ (ձեռքբերման գնով):

Եթե արժեթուղթը ձեռք է բերվել հավելավճարով, ապա տրվում է հետևյալ ձևակերպումը՝

Դտ - 1913 (անվանական արժեքով)

Դտ - 1915 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթերի հավելավճար»

Կտ - Դրամական միջոցներ (ձեռքբերման գնով):

1914 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս» - հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոսի հաշվառման համար: Զեղչատոկոսի ամորտիզացիան կատարվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով:

Մինչև արժեթղթի մարման ժամկետը բանկը կատարում է զեղչատոկոսի ամորտիզացիա՝ այն դուրս գրելով եկամուտների հաշվին՝

Դտ - 1914 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս» (էֆեկտիվ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամտի և ստացվելիք կուպոնային տոկոսների տարբերության գումարով)

Կտ - 6072 «Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական տոկոսային արժեթղթերից»:

1915 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթերի հավելավճար» - հաշիվը նախատեսված է Հայաստանի Հանրապետության պետական տոկոսային արժեթղթերի հավելավճարի հաշվառման համար: Հավելավճարի ամորտիզացիան կատարվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով:

Մինչև արժեթղթի մարման ժամկետը վարկային կազմակերպությունը կատարում է հավելավճարի ամորտիզացիա՝ այն դուրս գրելով եկամուտներից՝

Դտ - 6072 «Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական տոկոսային արժեթղթերից»

Կտ - 1915 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթերի հավելավճար» (էֆեկտիվ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամտի և ստացվելիք կուպոնային տոկոսների տարբերության գումարով):

1916 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ» - հաշիվը նախատեսված է ՀՀ պետական տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է՝

ա) Հայաստանի Հանրապետության պետական տոկոսային արժեթղթերի ձեռքբերման դեպքում, գնի մեջ ներառված կուտակված, բայց դեռևս չվճարված տոկոսների չափով՝

Դտ - 1916 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ»

Կտ - Դրամական միջոցներ.

բ) ՀՀ պետական տոկոսային արժեթղթերի գծով տոկոսներ հաշվեգրելիս՝

Դտ - 1916 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ» (կուպոնային տոկոսադրույք բազմապատկած անվանական արժեք)

Կտ - 6072 «Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական տոկոսային արժեթղթերից»:

Հաշիվը կրեդիտագրվում է Հայաստանի Հանրապետության պետական տոկոսային արժեթղթերի տոկոսները ստանալիս՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 1916 «ՀՀ պետական տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ»:

Ենթաբաժին 192

«ՀՀ ոչ պետական արժեթղթեր»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթերի հաշվառման համար: Եթե արժեթղթերը ձեռք են բերվել անվանականից բարձր կամ ցածր արժեքով, ապա հավելավճարի կամ զեղչատոկոսի համար օգտագործվում են առանձին հաշիվներ: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 191 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 193

«Այլ երկրների պետական արժեթղթեր»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են այլ երկրների պետական մարմինների կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար: Եթե արժեթղթերը ձեռք են բերվել անվանականից բարձր կամ ցածր արժեքով, ապա հավելավճարի կամ զեղչատոկոսի համար օգտագործվում են առանձին հաշիվներ: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 191 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 194

«Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են այլ երկրների ոչ պետական արժեթղթերի հաշվառման համար: Եթե արժեթղթերը ձեռք են բերվել անվանականից բարձր կամ ցածր արժեքով, ապա հավելավճարի կամ զեղչատոկոսի համար օգտագործվում են առանձին հաշիվներ: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 191 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 195, 196, 197

«Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարները հաշվառելու համար:

1951 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ բանկերի հետ ֆակտորինգային գործառնություններից» - այս հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերի հետ ֆակտորինգային գործառնությունների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է ֆակտորինգային գործառնության գծով վճարում կատարելիս՝ պահանջի ամբողջ գումարի չափով՝

Դտ - 1951

Կտ - 1952 «Ռեզիդենտ բանկերի հետ ֆակտորինգային գործառնությունների զեղչատոկոս»

Կտ - Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է ֆակտորինգային գործառնության գծով ստանալիք գումարը հավաքագրելիս՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 1951:

1952 «Ռեզիդենտ բանկերի հետ ֆակտորինգային գործառնությունների զեղչատոկոս» - հաշիվը նախատեսված է ֆակտորինգային գործառնության ստացվելիք զեղչատոկոսը հաշվառելու համար:

Հաշիվը կրեդիտագրվում է ֆակտորինգային գործառնության գծով վճարում կատարելիս՝ ստացվելիք զեղչատոկոսի գումարի չափով՝

Դտ - 1951

Կտ - 1952

Վարկային կազմակերպությունը կարող է հաշվեգրել ֆակտորինգային գործառնության գծով եկամուտներ միայն այն դեպքում, եթե դրանց հավաքագրումը հավանական է համարում: Հակառակ դեպքում եկամուտ ճանաչվում է գումարը հավաքագրելիս՝

Դտ - 1952

Կտ - 6414 «Ֆակտորինգից ստացված եկամուտներ»:

1953 «Ռեզիդենտ բանկերի հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք տոկոսներ» - այս հաշիվը նախատեսված է այն դեպքերի համար, երբ բացի զեղչատոկոսից, վարկային կազմակերպությունը ստանում է նաև տոկոսներ:

Ֆակտորինգային գործառնությունից ստացվելիք տոկոս հաշվեգրելիս ձևակերպվում է՝

Դտ - 1953

Կտ - 6414 «Ֆակտորինգից ստացված եկամուտներ»:

1954 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ վարկային կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնություններից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1951 հաշվի դեպքում:

1955 «Ռեզիդենտ վարկային կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնությունների զեղչատոկոս» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1952 հաշվի դեպքում:

1956 «Ռեզիդենտ վարկային կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք տոկոսներ» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1953 հաշվի դեպքում:

1957 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնություններից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1951 հաշվի դեպքում:

1958 «Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնությունների զեղչատոկոս» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1952 հաշվի դեպքում:

1959 «Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք տոկոսներ» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1953 հաշվի դեպքում:

1960 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց հետ ֆակտորինգային գործառնություններից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1951 հաշվի դեպքում:

1961 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ոչ պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց հետ ֆակտորինգային գործառնություններից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1951 հաշվի դեպքում:

1962 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ոչ առևտրային իրավաբանական անձանց հետ ֆակտորինգային գործառնություններից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1951 հաշվի դեպքում:

1963 «Ռեզիդենտ իրավաբանական անձանց հետ ֆակտորինգային գործառնությունների զեղչատոկոս» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1952 հաշվի դեպքում:

1964 «Ռեզիդենտ իրավաբանական անձանց հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք տոկոսներ» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1953 հաշվի դեպքում:

1965 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հետ ֆակտորինգային գործառնություններից»- հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1951 հաշվի դեպքում:

1966 «Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հետ ֆակտորինգային գործառնությունների զեղչատոկոս» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1952 հաշվի դեպքում:

1967 «Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք տոկոսներ» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1953 հաշվի դեպքում:

1968 «Ստացվելիք գումարներ այլ ռեզիդենտների հետ ֆակտորինգային գործառնություններից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1951 հաշվի դեպքում:

1969 «Այլ ռեզիդենտների հետ ֆակտորինգային գործառնությունների զեղչատոկոս» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1952 հաշվի դեպքում:

1970 «Այլ ռեզիդենտների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք տոկոսներ» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1953 հաշվի դեպքում:

1971 «Ստացվելիք գումարներ ոչ ռեզիդենտների հետ ֆակտորինգային գործառնություններից» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1951 հաշվի դեպքում:

1972 «Ոչ ռեզիդենտների հետ ֆակտորինգային գործառնությունների զեղչատոկոս» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1952 հաշվի դեպքում:

1973 «Ոչ ռեզիդենտների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք տոկոսներ» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1953 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 198

«Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստ»

1981 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստ» - հաշվառումը տարվում է «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի» և ՀՀՀՀՍ 39-ով սահմանված սկզբունքների համաձայն:

Արժեզրկման պահուստին հատկացումներ կատարվում են՝ հիմք ընդունելով ներդրումների փոխհատուցվող գումարը: Այն սահմանվում է համաձայն ՀՀՀՀՍ 39 ստանդարտի՝ որպես հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Հաշիվը կրեդիտ ագրվում է ակտիվների արժեզրկման նախանշանի առկայության դեպքում դրանց փոխհատուցվող գումարի և հաշվեկշռային արժեքի տարբերության չափով՝

Դտ-7213 «Մինչև մարման ժամկետը պահվող և այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների արժեզրկումներից կորուստ»

Կտ - 1981:

Հաշիվը դեբետագրվում է՝

ա) ներդրումների աժեզրկման կորուստի վերականգնման դեպքում՝

Դտ -1981

Կտ - 6213 «Մինչև մարման ժամկետը պահվող և այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների գծով կորուստների վերականգնում».

բ) ներդրումների լրիվ արժեզրկման դեպքում՝

ակտիվի հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստի» հաշվին՝

Դտ - 1981

Կտ - Համապատասխան ներդրման հաշիվ:

ԲԱԺԻՆ 20

«Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 201;202 «Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում», 203;204 «Ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում», 207 «Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների արժեզրկման պահուստ»:

Այս բաժնում հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 27 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և դուստր ընկերություններում ներդրումների հաշվառում», ՀՀՀՀՍ 28 «Ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվառում», ՀՀՀՀՍ 31 «Համատեղ ձեռնարկումներում մասնակցության արտացոլումը ֆինանսական հաշվետվություններում» և ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտների համաձայն:

Ըստ ՀՀՀՀՍ 21-ի՝ այս հաշիվների արտարժութային մնացորդները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանվող հաշվարկային փոխարժեքով:

Ենթաբաժին 201, 202

«Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են կապակցված կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հաշվառման համար:

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառման դեպքում ներդրումը սկզբնապես գրանցվում է ինքնարժեքով (ձեռքբերման արժեքով), իսկ հետո ճշգրտվում է ձեռքբերումից հետո կապակցված կազմակերպության զուտ ակտիվներում վարկային կազմակերպության բաժնեմասի փոփոխությունների չափով: Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում է կապակցված կազմակերպության գործունեության արդյունքներում վարկային կազմակերպության բաժնեմասը:

Հաշիվը դեբետագրվում է կապակցված կազմակերպություններում ներդրումը կատարելիս՝

Դտ - 201, 202

Կտ - Դրամական միջոցներ:

Եթե ներդրումը ձեռք է բերվել այլ ակտիվների կամ վարկային կազմակերպության բաժնետոմսերի փոխանակման միջոցով՝

Դտ - 201, 202

Կտ - Այլ ակտիվներ, 50 «Կանոնադրական կապիտալ»:

Ձեռքբերման ամսաթվից հետո կապակցված կազմակերպության շահույթի կամ վնասի վարկային կազմակերպության բաժնեմասը գրանցվում է 201;202 ենթաբաժնի հաշիվներին՝

ա) Դտ - 201, 202

Կտ - 610 «Եկամուտ այլ կազմակերպություններում ներդրումներից» բաժնի 6102, 6104, 6105, 6106 հաշիվներ

կամ

բ) Դտ - 610 «Եկամուտ այլ կազմակերպություններում ներդրումներից» բաժնի 6102, 6104, 6105, 6106 հաշիվներ

Կտ - 201, 202:

Այս ներդրումների արժեզրկման հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի համաձայն:

Ենթաբաժին 203, 204

«Ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են կապակցված կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումների հաշվառման համար:

Ինքնարժեքի մեթոդի կիրառման դեպքում ներդրումը գրանցվում է ինքնարժեքով (ձեռքբերման արժեքով): Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներդրումներից եկամուտներն արտացոլվում են միայն այն չափով, որքանով որ վարկային կազմակերպության շահաբաժին է ստանում ներդրման օբյեկտի՝ ձեռքբերման ամսաթվից հետո կուտակված չբաշխված զուտ շահույթից:

Հաշիվը դեբետագրվում է կապակցված կազմակերպություններում ներդրում կատարելիս, ձեռքբերման արժեքով՝

Դտ – 203, 204

Կտ - Դրամական միջոցներ:

Եթե ներդրումը ձեռք է բերվել այլ ակտիվների կամ վարկային կազմակերպության բաժնետոմսերի փոխանակման միջոցով՝

Դտ – 203, 204

Կտ - Այլ ակտիվներ, 50 «Կանոնադրական կապիտալ»:

Կապակցված կազմակերպության կողմից շահաբաժինները հայտարարելուց հետո դրանք գրանցվում են 167, 168 «Ստացվելիք շահաբաժիններ» հաշիվներում:

Այս ներդրումների արժեզրկման հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի համաձայն:

Ենթաբաժին 207

«Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների արժեզրկման պահուստ»

2071 «Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների արժեզրկման պահուստ» - հաշվառումը տարվում է «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի» և ՀՀՀՀՍ 39 ստանդարտի համաձայն: Պահուստին հատկացումներ կատարվում են՝ հիմք ընդունելով ներդրումների փոխհատուցվող գումարը: Այն սահմանվում է որպես ներդրման վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնը:

Հաշիվը կրեդիտագրվում է ինվեստիցիոն արժեթղթերի արժեզրկման նախանշանի առկայության դեպքում արժեթղթերի փոխհատուցվող գումարի և հաշվեկշռային արժեքի տարբերության չափով՝

Դտ - 7213 «Մինչև մարման ժամկետը պահվող և այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների արժեզրկումներից կորուստ»

Կտ - 2071:

Հաշիվը դեբետագրվում է՝

ա) արժեզրկումից կորուստի վերականգնման դեպքում՝

Դտ - 2071

Կտ - 6213 «Մինչև մարման ժամկետը պահվող և այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների գծով կորուստների վերականգնում».

բ) լրիվ արժեզրկման դեպքում՝

ներդրման հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում «Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների արժեզրկման պահուստ» հաշվից: Ընդ որում, նախ՝ դուրս է գրվում ներդրման գծով առկա գուդվիլը (եթե այդպիսին գոյություն ունի), ապա՝ ներդրման արժեքը»՝

Դտ - 2071

Կտ - Համապատասխան ներդրման հաշիվ:

ԲԱԺԻՆ 21

«Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում»

Այս բաժնում հաշվառվում են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման կամ բարելավման համար կատարված, սակայն դեռևս չկապիտալացված ծախսումները:

2111 «Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում» - այս հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության հիմնական միջոցներ ձեռք բերելու կամ կառուցելու վրա կատարված ծախսումները հաշվառելու համար:

Կապիտալ ներդրումների գծով ռեզիդենտներին տրամադրված գումարները կատարողական ակտերի հիման վրա վերագրանցվում են որպես կապիտալ ներդրումներ վարկային կազմակերպության հիմնական միջոցներում՝

Դտ - 2111 «Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում»

Կտ - 1823, 1824:

Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցի օբյեկտը շահագործման հանձնելիս՝

Դտ - Հիմնական միջոցների համապատասխան հաշիվ

Կտ - 2111:

2111 հաշիվը օգտագործվում է նաև առկա հիմնական միջոցների բարելավմանն ուղղվող ծախսերի հաշվառման համար: Բարելավման աշխատանքներն ավարտելուց հետո այդ ծախսումները կապիտալացվում են՝ ավելացվելով հիմնական միջոցների արժեքին կամ դուրս են գրվում բանկի ծախսերով: Կատարված ծախսումների կապիտալացման կամ ծախսերով դուրսգրման չափանիշները ներկայացված են ՀՀՀՀՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտում:

2121 «Կապիտալ ներդրումներ ոչ նյութական ակտիվներում» - այս հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության ոչ նյութական ակտիվների բարելավման վրա կատարված ծախսումները հաշվառելու համար: Հաշվառման սկզբունքը նույնն է, ինչ որ 2111 հաշվի դեպքում: Բարելավման աշխատանքներն ավարտելուց հետո այդ ծախսումները կապիտալացվում են՝ ավելացվելով ոչ նյութական ակտիվների արժեքին կամ դուրս են գրվում վարկային կազմակերպության ծախսերով:

ԲԱԺԻՆ 22

«Ոչ նյութական ակտիվներ»

Այս բաժնում ընդգրկված են հետևյալ ենթահաշիվները՝ 221 «Ոչ նյութական ակտիվներ», 222 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»: Ոչ նյութական ակտիվների և դրանց ամորտիզացիայի հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտի համաձայն: Ըստ ՀՀՀՀՍ 21 ստանդարտի՝ արտարժույթով ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ձեռքբերման ամսաթվին գրանցվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած այդ օրվա հաշվարկային փոխարժեքով, իսկ հետագայում չեն ենթարկվում արտարժութային վերագնահատման:

Ենթաբաժին 221

«Ոչ նյութական ակտիվներ»

2211 «Համակարգչային ծրագրեր» - հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության ձեռք բերած կամ բանկի կողմից մշակված համակարգչային ծրագրերի գծով կատարված ծախսումները հաշվառելու համար: Համակարգչային ծրագրերի գծով կատարված ծախսումները հաշվեկշռում ճանաչվում են որպես ակտիվ և պարբերաբար դուրս են գրվում (ամորտիզացվում են) հաշվարկված օգտակար տևողության ընթացքում:

2212 «Լիցենզիաներ և վստահագրեր» - հաշիվը նախատեսված է լիցենզիաների և վստահագրերի ձեռքբերման նպատակով վարկային կազմակերպության կատարած ծախսումների հաշվառման համար: Նշված ծախսումները հաշվեկշռում ճանաչվում են որպես ակտիվ և պարբերաբար դուրս են գրվում (ամորտիզացվում են) հաշվարկված օգտակար տևողության ընթացքում:

2213 «Հեղինակային իրավունքներ» - հաշիվը նախատեսված է հեղինակային իրավունքների ձեռքբերման նպատակով վարկային կազմակերպության կատարած ծախսումների հաշվառման համար: Նշված ծախսումները հաշվեկշռում ճանաչվում են որպես ակտիվ և պարբերաբար դուրս են գրվում (ամորտիզացվում են) հաշվարկված օգտակար տևողության ընթացքում:

2214 «Այլ ոչ նյութական ակտիվներ» - այս հաշվում հաշվառվում են այն ոչ նյութական ակտիվները, որոնց հաշվառման համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

Ենթաբաժին 222
«Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են 221 «Ոչ նյութական ակտիվներ» ենթաբաժնի ակտիվների ամորտիզացիայի (մաշվածքի) գումարները հաշվառելու համար: Հաշիվները հակակշռային են: Հաշիվների կրեդիտում գրանցվում են ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսերի կուտակումները:

ԲԱԺԻՆ 23
«Հիմնական միջոցներ»

Այս բաժնում ընդգրկված է երկու ենթահաշիվ՝ 231 «Հիմնական միջոցներ» և 232 «Հիմնական միջոցների ամորտիզացիա»: Հիմնական միջոցների և դրանց ամորտիզացիայի հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի համաձայն: Ըստ ՀՀՀՀՍ 21 ստանդարտի՝ արտարժույթով ձեռք բերված հիմնական միջոցները ձեռքբերման ամսաթվին գրանցվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած այդ օրվա հաշվարկային փոխարժեքով, իսկ հետագայում չեն ենթարկվում արտարժութային վերագնահատման:

Ենթաբաժին 231
«Հիմնական միջոցներ»

2311 «Հող» - այս հաշվում հաշվառվում են ներդրումներ հողում, սովորաբար՝ շինարարական նպատակներով:

Հաշիվը դեբետագրվում է հողի ձեռքբերման դեպքում՝ գնման գնի և հողի վերագնահատման արդյունքում՝ հողի իրական և հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է հողի օտարման դեպքում՝ հաշվեկշռային արժեքի չափով և հողի վերագնահատման արդյունքում՝ հողի իրական և հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

2312 «Շենքեր, շինություններ» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության շենքերում (տարածքում) կատարված ընդհանուր ներդրումները:

Հաշիվը դեբետագրվում է շենքի և շինությունների ձեռքբերման և հետագայում դրանց օգտակար ծառայությունն ավելացնելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում: Հաշիվը դեբետագրվում է նաև շենքի և շինությունների վերագնահատման արդյունքում՝ շենքի և շինությունների իրական հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է շենքի և շինությունների օտարման և դուրսգրման դեպքում: Հաշիվը կրեդիտագրվում է նաև շենքի և շինությունների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

2313 «Գույք և գրասենյակային սարքավորումներ» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության գործունեության համար օգտագործվող գույքի և գրասենյակային սարքավորումների (օրինակ՝ սեղան, աթոռ, պահարան, բազկաթոռ, դարակաշար, չհրկիզվող պահարան և այլն) համար կատարված ներդրումները:

Հաշիվը դեբետագրվում է գույքի և գրասենյակային սարքավորումների ձեռքբերման և հետագայում դրանց օգտակար ծառայությունը երկարացնելու ու բարելավելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում, ինչպես նաև գույքի ու գրասենյակային սարքավորումների վերագնահատման արդյունքում համախառն հաշվեկշռային արժեքի ավելացման չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է գույքի և գրասենյակային սարքավորումների օտարման ու դուրսգրման և գույքի ու գրասենյակային սարքավորումների վերագնահատման արդյունքում համախառն հաշվեկշռային արժեքի նվազման չափով:

2314 «Կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա» - այս հաշվում հաշվառվում են բանկի գործունեության համար օգտագործվող համակարգիչների և հաղորդակցման սարքավորումների համար կատարված ներդրումները:

Հաշիվը դեբետագրվում է կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա ձեռք բերելու և հետագայում դրանց օգտակար ծառայությունն ավելացնելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում: Հաշիվը դեբետագրվում է նաև նշված ներդրումների վերագնահատման արդյունքում համախառն հաշվեկշռային արժեքի ավելացման չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկայի օտարման և դուրսգրման դեպքում: Հաշիվը կրեդիտագրվում է նաև նշված ներդրումների վերագնահատման արդյունքում համախառն հաշվեկշռային արժեքի նվազման չափով:

2315 «Փոխադրամիջոցներ» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության գործունեության համար օգտագործվող փոխադրամիջոցների համար կատարված ներդրումներ:

Հաշիվը դեբետագրվում է փոխադրամիջոցների ձեռքբերման և հետագայում դրանց օգտակար ծառայությունը ավելացնելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում: Հաշիվը դեբետագրվում է նաև փոխադրամիջոցների վերագնահատման արդյունքում համախառն հաշվեկշռային արժեքի ավելացման չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է փոխադրամիջոցների օտարման և դուրսգրման, ինչպես նաև փոխադրամիջոցների վերագնահատման արդյունքում համախառն հաշվեկշռային արժեքի նվազման չափով:

2316 «Այլ հիմնական միջոցներ» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության գործունեության համար օգտագործվող այն հիմնական միջոցների համար կատարված ներդրումները, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2412, 2413, 2414, 2415 հաշիվների դեպքում:

2317 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության կողմից վարձակալության վերցված հիմնական միջոցները: Ակտիվի արժեքը պարբերաբար դուրս է գրվում (ամորտիզացվում է) կամ ակտիվի օգտակար տևողության, կամ վարձակալության տևողության ընթացքում (ներառելով ցանկացած հնարավոր վերակազմման ժամանակաշրջան, որի ընթացքում վարձակալությունը կնորացվի)՝ կախված նրանից, թե որ ժամկետն է ավելի կարճ, և արդյոք վարկային կազմակերպությունը հնարավորություն կունենա ձեռք բերել տվյալ ակտիվը վարձակալության ժամկետը լրանալուց հետո: Երբ վարձակալության ժամկետը ավարտվում է, ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալող վարկային կազմակերպությանը կամ վերադարձվում է վարձատուին:

Հաշիվը դեբետագրվում է հիմնական միջոցների վարձակալության վերցման դեպքում՝

Դտ - 2317

Կտ - 3541, 3543 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»:

Հաշիվը դեբետագրվում է նաև վարձակալության վերցված հիմնական միջոցների վերագնահատման, նաև դրանցում կապիտալ ներդրումների կատարման դեպքում:

Վարձակալության վերցված հիմնական միջոցների գնման դեպքում հաշիվը կրեդիտագրվում է՝

Դտ - Հիմնական միջոցներ

Կտ - 2317:

Ենթաբաժին 232
«Հիմնական միջոցների ամորտիզացիա»

Հաշիվների այս ենթաբաժնում հաշվառվում են հիմնական միջոցների ամորտիզացիայի գումարները: Հիմնական միջոցների ամորտիզացիան կատարվում է դրանց օգտակար ծառայության ընթացքում՝ վարկային կազմակերպության կողմից ընտրված մեթոդով: Հաշիվների կրեդիտում գրանցվում են հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերի կուտակումները:

ԲԱԺԻՆ 24
«Շահագործումից դուրս հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»

Ենթաբաժին 241
«Շահագործումից դուրս հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են ծառայությունից դուրս գտնվող և/կամ օտարման ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվառման համար: Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ծառայությունից դուրս գալու ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի չափով այս հաշիվները դեբետագրվում են՝

Ծառայությունից դուրս գտնվող ակտիվներն ամորտիզացիայի ենթակա չեն:

Հաշիվները կրեդիտագրվում են դեռևս չշահագործված ակտիվները շահագործման հանձնելիս՝

Դտ - Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Կտ - 241 «Շահագործումից դուրս հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»:

Հաշիվները կրեդիտագրվում են նաև ծառայությունից դուրս հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարման դեպքում: Օտարման արդյունքում դրանց վաճառքի գնի և դրանց հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերությունը դեբետագրվում/կրեդիտագրվում է ակտիվների օտարումից առաջացող վնասների կամ օգուտների հաշիվներին:

ԲԱԺԻՆ 25
«Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում»

Այս բաժնում ընդգրկվում է երկու ենթաբաժին՝ 251 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում» և 252 «Շահագործումից դուրս հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում»: Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի համաձայն:

ԲԱԺԻՆ 26
«Արագամաշ առարկաներ»

Արագամաշ առարկաների հաշվառումը կատարվում է ՀՀՀՀՍ 2-ի համաձայն: Ձեռքբերման պահին արագամաշ առարկաները հաշվեկշռում գրանցվում են ինքնարժեքով՝

Դտ - 2611

Կտ - Դրամական միջոցներ:

Հաշիվները կրեդիտագրվում են տնտեսական նյութերը և արագամաշ առարկաներն օգտագործման հանձնելու համար պահեստից դուրս գրելիս՝

Դտ - համապատասխան ծախսի հաշիվ

Կտ - 2611:

ԲԱԺԻՆ 27

«Այլ ակտիվներ»

Այս բաժնում ներառված հաշիվները նախատեսված են վարկային կազմակերպության կողմից բռնագանձված գրավի, հետաձգված հարկային ակտիվների, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում սառեցված հաշիվների, ինչպես նաև այլ ակտիվների համար, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

2711 «Բռնագանձված գրավ-անշարժ գույք» - հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության կողմից տրամադրված և անշարժ գույքով ապահովված վարկերի և փոխատվությունների չմարման դեպքում բռնագանձված գրավի առարկայի հաշվառման համար:

Նշված վարկերն ու փոխատվությունները դուրս են գրվում հաշվեկշռից ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստների հաշիվների միջոցներով, իսկ գրավը ճանաչվում է հաշվեկշռում վերջինիս իրական արժեքի և փոխառուի նկատմամբ պահանջի (ներառյալ գործառնական ծախսերը) նվազագույն մեծությամբ՝ միաժամանակ այդ գումարը ճանաչելով եկամուտ:

Դտ - 2711

Կտ - 621 «Կորուստների վերականգնում»:

Այս հաշվում հաշվառված ակտիվների նկատմամբ ամորտիզացիա չի հաշվարկվում: Գրավը վաճառելիս բանկը տալիս է հետևյալ ձևակերպումները՝

ա) վաճառքի գինը հավասար է գրավի հաշվեկշռային արժեքին՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 2711.

բ) վաճառքի գինը բարձր է գրավի հաշվեկշռային արժեքից՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 2711

Կտ - 3734 «Արտաքին կրեդիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ», 3735 «Արտաքին կրեդիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ».

գ) վաճառքի գինը ցածր է գրավի հաշվեկշռային արժեքից՝

Դտ - Դրամական միջոցներ

Դտ - 7527 «Կորուստներ այլ գործառնություններից»

Կտ - 2711:

2712 «Բռնագանձված գրավ- այլ ակտիվներ» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2711 հաշվի դեպքում:

2713 «Հետաձգված հարկային ակտիվներ» - այս հաշիվը նախատեսված է նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետևանքով առաջացած շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 12 «Շահութահարկ» ստանդարտում:

2714 «Սառեցված հաշիվներ ռեզիդենտների մոտ» - սրանք բանկերում կամ այլ ֆինանսական կազմակերպություններում ունեցած այն միջոցներն են, որոնց օգտագործումը կասեցված է՝ հաշվի արգելադրման կամ այլ պատճառներով:

2715 «Սառեցված հաշիվներ ոչ ռեզիդենտների մոտ» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2714 հաշվի դեպքում:

2717 «Այլ ակտիվներ» - Այս հաշվում հաշվառվում են այն ակտիվները, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

ԿԱՐԳ 3 - 4 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 30

«Բանկերից ներգրաված փոխառություններ և ստացված վարկեր»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 301 «Բանկերից ներգրավված փոխառություններ», 302 «Բանկերից ստացված վարկեր»:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 301

«Բանկերից ներգրավված փոխառություններ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված ցպահանջ և ժամկետային փոխառությունների, ինչպես նաև դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների հաշվառման համար:

Տոկոսները հաշվեգրելիս այս ենթաբաժնի հաշիվները զուգակցում են 701 «Տոկոսային ծախսեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունների դիմաց» ենթաբաժնի հաշիվների դեբետի հետ:

Ենթաբաժին 302
«Բանկերից ստացված վարկեր»

Այս ենթաբաժինը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերից ստացված վարկերի և օվերդրաֆտների, ինչպես նաև դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների հաշվառման համար:

Տոկոսները հաշվեգրելիս այս ենթաբաժնի հաշիվները թղթակցում են 707 «Տոկոսային ծախսեր ստացված վարկերի դիմաց» ենթաբաժնի հաշիվների դեբետի հետ:

ԲԱԺԻՆ 31
«Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված փոխառություններ և ստացված վարկեր»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 311, 312 «Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ցպահանջ և ժամկետային փոխառություններ», 313 «Այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր», 314 «Ռեպո համաձայնագրեր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ», 315, 316 «Ռեպո համաձայնագրեր իրավաբանական անձանց, ֆիզիկական անձանց և հիմնարկների հետ»:

Այս բաժնի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ բաժին 30-ի դեպքում: Ռեպո համաձայնագրերի հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի սկզբունքներին համապատասխան և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ռեպո և հակադարձ ռեպո գործարքների հաշվապահական հաշվառման կարգի» համաձայն:

ԲԱԺԻՆ 32
«Պարտավորություններ այլ փոխառուների նկատմամբ»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 321, 322, 323 «Հաճախորդներից ներգրաված ցպահանջ փոխառություններ», 324, 325 «Հաճախորդներից ներգրաված ժամկետային փոխառություններ»: Այս բաժնի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ բաժին 30-ի դեպքում:

ԲԱԺԻՆ 33
«Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 331 «Վարկեր գանձապետարանից», 332 «Այլ պարտավորություններ կառավարության նկատմամբ»: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ բաժին 30-ի դեպքում:

ԲԱԺԻՆ 34
«Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր, առևտրական և հեջավորման նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 341 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր», 342 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր», 343 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսեր», 344 «Թողարկված այլ արժեթղթեր», 345 «Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ», 346 «Հեջավորման ածանցյալ գործիքներ»: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 32 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումը և ներկայացումը» և ՀՀՀՀՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում» ստանդարտների սկզբունքներին համապատասխան:

Ենթաբաժին 341
«Վարկային կազմակերպության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր»

3411 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի հաշվառման համար:

Վարկային կազմակերպության կողմից թողարկված զեղչատոկոսային արժեթուղթը հաշվեկշռում գրանցվում է անվանական արժեքով, հետևյալ ձևակերպմամբ՝

Դտ - Դրամական միջոցներ

Դտ - 3412 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս» (անվանական արժեքի և իրացման գնի տարբերության չափով)

Կտ - 3411 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր»:

Հաշիվը դեբետագրվում է թողարկված արժեթղթերի մարման դեպքում՝

Դտ - 3411 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր»

Կտ - Դրամական միջոցներ:

3412 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս» - հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության կողմից թողարկված զեղչատոկոսային արժեթղթերի զեղչի հաշվառման համար:

Զեղչատոկոսի ամորտիզացիան իրականացվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով, հետևյալ ձևակերպմամբ՝

Դտ - 7091 «Տոկոսային ծախսեր վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի դիմաց»

Կտ - 3412 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս»:

Ենթաբաժին 342

«Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր»

3421 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր» - այս հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի հաշվառման համար:

Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերը հաշվեկշռում գրանցվում են իրենց անվանական արժեքով: Եթե արժեթուղթը վաճառվել է զեղչատոկոսով կամ հավելավճարով, ապա վաճառքի գնի ու անվանական արժեքի տարբերության գումարները գրանցվում են, համապատասխանաբար՝ 3422 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս» կամ 3423 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար» հաշիվներում:

Թողարկված տոկոսային արժեթղթերը տեղաբաշխելիս տրվում են հետևյալ ձևակերպումները՝

ա) զեղչատոկոսի դեպքում՝

Դտ - Դրամական միջոցներ

Դտ - 3422 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս»

Կտ - 3421 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր»:

բ) հավելավճարի դեպքում՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 3421 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր»

Կտ - 3423 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար»:

Արժեթղթերի մարման դեպքում տրվում են հետևյալ ձևակերպումները՝

Դտ - 3421 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր»

Կտ - Դրամական միջոցներ:

3422 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս» - հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի զեղչի հաշվառման համար:

Զեղչատոկոսի ամորտիզացիան իրականացվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով, հետևյալ ձևակերպմամբ՝

Դտ - 7091 «Տոկոսային ծախսեր վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի դիմաց»

Կտ - 3422 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս»:

3423 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար» - հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի հավելավճարի հաշվառման համար:

Հավելավճարի ամորտիզացիան իրականացվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով, հետևյալ ձևակերպմամբ՝

Դտ - 3423 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար»

Կտ - 7091 «Տոկոսային ծախսեր վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի դիմաց»:

3424 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ» - հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի գծով վճարվելիք տոկոսների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է վճարվելիք տոկոսները հաշվեգրելիս՝

Դտ - 7091 «Տոկոսային ծախսեր վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի դիմաց»

Կտ - 3424 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ»:

Հաշիվը դեբետագրվում է արժեթղթերի դիմաց տոկոսներ վճարելիս՝

Դտ - 3424 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ»

Կտ - Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 343

«Վարկային կազմակերպության կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսեր»

ՀՀՀՀՍ 32 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումը և ներկայացումը» ստանդարտի համաձայն՝ այն արտոնյալ բաժնետոմսերը, որոնք բավարարում են ֆինանսական պարտավորության բնութագրին, հաշվեկշռում ճանաչվում են որպես այդպիսին: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ մնացած ֆինանսական պարտավորությունների դեպքում:

Ենթաբաժին 344

«Թողարկված այլ արժեթղթեր»

Այս ենթաբաժինը նախատեսված է վարկային կազմակերպության կողմից թողարկված այլ արժեթղթերի և դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ մնացած ֆինանսական պարտավորությունների դեպքում:

Ենթաբաժին 345

«Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ»

Այս ենթաբաժնի հաշիվներն օգտագործվում են առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքների հաշվառման նպատակով:

Հաշվեկշռում ածանցյալ գործարքն արտացոլվում է պայմանագրի ձեռքբերման օրվանից: Հաշվառումը տարվում է իրական արժեքով՝ վերագնահատման արդյունքն արտացոլելով եկամուտներում կամ ծախսերում:

Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 32, ՀՀՀՀՍ 39 ստանդարտների և այլ կարգերի համաձայն:

Ենթաբաժին 346
«Հեջավորման ածանցյալ գործիքներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են հեջավորման ածանցյալ գործիքների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 32, ՀՀՀՀՍ 39 ստանդարտների և այլ կարգերի համաձայն:

ԲԱԺԻՆ 35
«Այլ վճարվելիք գումարներ»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 351 «Վճարման ենթակա շահաբաժիններ», 352 «Պարտավորություն ռեպո համաձայնագրերի գծով», 353 «Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ», 354 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ», 355 «Այլ պարտավորություններ»:

Ենթաբաժին 351
«Վճարման ենթակա շահաբաժիններ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին վարկային կազմակերպության կողմից թողարկված արտոնյալ և հասարակ բաժնետոմսերի դիմաց վճարվելիք շահաբաժինների հաշվառման համար: Շահաբաժիններ հայտարարելիս վարկային կազմակերպությունը ձևակերպում է՝

Դտ - 5311 «Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս», 5312 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս»

Կտ - 351:

Շահաբաժինները վճարելիս՝

Դտ - 351

Կտ - Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 352
«Պարտավորություն ռեպո համաձայնագրերի գծով»

Այս ենթաբաժինն օգտագործում է ռեպո համաձայնագրերում արժեթղթեր գնող վարկային կազմակերպությունը: Հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ռեպո և հակադարձ ռեպո գործարքների հաշվապահական հաշվառման կարգի» համաձայն:

Ենթաբաժին 353
«Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ»

3531 «Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով ռեզիդենտներին վճարվելիք գումարներ» - այս հաշվում հաշվառվում են հավատարմագրային կառավարման գծով ռեզիդենտներին վճարվելիք գումարները: Որպես կանոն, այդ գումարներն իրենցից ներկայացնում են կառավարվող միջոցներից ստացված եկամուտները: Կառավարման տակ գտնվող միջոցները հաշվեկշռում չեն արտացոլվում, և դրա համար տարվում է առանձին հաշվառում:

Հաշիվը կրեդիտագրվում է հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով ռեզիդենտներին վճարվելիք գումարները հաշվեգրելիս՝

Դտ - 7314 «Երաշխիքների, պարտամուրհակների ընդունման, ակրեդիտիվներով և լիազորագրային գործառնությունների գծով ծախսեր»

Կտ - 3531

Հաշիվը դեբետագրվում է հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով ռեզիդենտներին վճարում կատարելիս՝

Դտ - 3531

Կտ - Դրամական միջոցներ:

3532 «Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով ոչ ռեզիդենտներին վճարվելիք գումարներ» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 3531 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 354
«Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի համաձայն:

3541 «Ֆինանսական վարձակալության գծով ռեզիդենտներին վճարվելիք գումարներ» - հաշիվը նախատեսված է ռեզիդենտներին ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցների վարձակալության վերցման դեպքում՝

Դտ - 2317 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»

Կտ - 3541:

Հաշիվը դեբետագրվում է վարձավճարները վճարելիս՝

Դտ - 3541

Կտ - Դրամական միջոցներ:

3542 «Հաշվեգրված տոկոսներ ֆինանսական վարձակալության դիմաց ռեզիդենտների գծով» - հաշիվը նախատեսված է ռեզիդենտների գծով ֆինանսական վարձակալության դիմաց հաշվեգրված տոկոսները հաշվառելու համար:

Հաշիվը կրեդիտագրվում է ֆինանսական վարձակալության դիմաց տոկոսներ հաշվեգրելիս՝

Դտ - 7092 «Տոկոսային ծախսեր ռեզիդենտների հետ ֆինանսական վարձակալության դիմաց»

Կտ - 3542:

Հաշիվը դեբետագրվում է ֆինանսական վարձակալության դիմաց տոկոսներ վճարելիս՝

Դտ - 3542

Կտ - Դրամական միջոցներ:

3543 «Ֆինանսական վարձակալության գծով ոչ ռեզիդենտներին վճարվելիք գումարներ» - հաշիվը նախատեսված է ոչ ռեզիդենտներին ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 3541 հաշվի դեպքում:

3544 «Հաշվեգրված տոկոսներ ֆինանսական վարձակալության դիմաց ոչ ռեզիդենտների գծով» - հաշիվը նախատեսված է ոչ ռեզիդենտների գծով ֆինանսական վարձակալության դիմաց հաշվեգրված տոկոսները հաշվառելու համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 3542 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 355

«Այլ պարտավորություններ»

Այս ենթաբաժնում հաշվառվում են այն պարտավորություններն ու դրանց գծով հաշվեգրված տոկոսները, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

ԲԱԺԻՆ 36

«Պարտավորություններ տրամադրված չեկերի գծով»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժնից՝ 361 «Պարտավորություններ տրամադրված չեկերի գծով»:

Ենթաբաժին 361

«Պարտավորություններ տրամադրված չեկերի գծով»

Այս ենթաբաժնում հաշվառվում են վարկային կազմակերպության կողմից տրամադրված չեկերի գծով հաճախորդի նկատմամբ պարտավորությունները:

Չեկերի տրամադրման դեպքում՝ նշված չեկերը հաշվառելիս՝

Դտ - 1011, 1012

Կտ - 361 «Պարտավորություններ տրամադրված չեկերի գծով»:

Չեկերի դիմաց վճարում կատարելիս՝

Դտ - 361 «Պարտավորություններ տրամադրված չեկերի գծով»

Կտ - Դրամական միջոցներ:

ԲԱԺԻՆ 37

«Կրեդիտորական պարտքեր»

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 371 «Հաշվարկներ վարկային կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև», 372 «Կրեդիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով», 373 «Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր»:

Ենթաբաժին 371

«Հաշվարկներ վարկային կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև»

Այս ենթաբաժնում հաշվառվում են այն գումարները, որոնք առաջանում են վարկային կազմակերպության և մասնաճյուղերի միջև փոխադարձ հաշվարկների արդյունքում: Հաշվետվությունը ներկայացնելու կամ հրապարակելու ժամանակ այս ենթաբաժնի հաշիվները ենթակա են զրոյացման: Զրոյացման արդյունքում առաջացած մնացորդը դասակարգվում է համապատասխան հաշիվներին: Եթե դա անհնար է, ապա անհրաժեշտ է առաջացած մնացորդը գրանցել 1704 «Ստացվելիք այլ գումարներ այլ ռեզիդենտներից», 1705 «Ստացվելիք այլ գումարներ ոչ ռեզիդենտներից» կամ 3551 «Այլ պարտավորություններ ռեզիդենտների նկատմամբ», 3553 «Այլ պարտավորություններ ոչ ռեզիդենտների նկատմամբ» հաշիվների վրա: Հաշվետվությունը ներկայացնելու կամ հրապարակելու հաջորդ օրը մնացորդը վերականգնվում է այս ենթաբաժնի հաշիվներին:

Ենթաբաժին 372

«Կրեդիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»

3721 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով» - այս հաշիվը նախատեսված է հաշվարկված շահութահարկի գծով վարկային կազմակերպության պարտավորությունների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է հաշվարկված շահութահարկի գումարի չափով՝

Դտ - 7611 «Ընթացիկ հարկի գծով ծախս (փոխհատուցում)»

Կտ - 3721 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով»

Հաշիվը դեբետագրվում է շահութահարկի գծով պարտավորությունները դուրս գրելիս՝ թղթակցելով 1831 «Կանխավճարներ շահութահարկի գծով» հաշվի հետ՝

Դտ - 3721 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով»

3722 «Կրեդիտորական պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով» - այս հաշիվը նախատեսված է հաշվարկված ավելացված արժեքի հարկի գծով բանկի պարտավորության հաշվառման համար: «Կրեդիտորներ ԱԱՀ-ի գծով» հաշիվը թղթակցում է այն ակտիվային հաշիվների հետ, որոնց գծով հաշվարկվել է հարկը:

Հաշիվը դեբետագրվում է ԱԱՀ-ի գծով պարտավորությունները դուրս գրելիս՝ թղթակցելով 1832 «Կանխավճարներ ԱԱՀ-ի գծով» հաշվի հետ՝

Դտ - 3722 «Կրեդիտորներ ԱԱՀ-ի գծով»

Կտ - 1832 «Կանխավճարներ ԱԱՀ-ի գծով»:

3723 «Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի և տուրքերի գծով» - այս հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության աշխատողների եկամտահարկի, գույքահարկի, հողի հարկի և այլ հարկերի ու տուրքերի գծով բյուջե վճարվելիք գումարների հաշվառման համար:

Եկամտահարկի գծով ձևակերպվում է՝

Դտ - 3731 «Հիմնական աշխատողներին վճարվելիք աշխատավարձ», 3732 «Պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձ»

Կտ - 3723:

Մնացած հարկերի և տուրքերի գծով ձևակերպվում է՝

Դտ - 7427 «Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր»

Կտ - 3723:

Հարկերի գծով պարտավորությունները մարելիս՝

Դտ - 3723

Կտ - Դրամական միջոցներ:

3724 «Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով» - հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության աշխատողների աշխատավարձից և վարկային կազմակերպության միջոցներից պարտադիր սոցիալական ապահովագրության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար:

Վճարվելիք գումարի չափով տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը՝

Դտ - 7415 «Հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»

Կտ - 3724:

Պարտավորությունները մարելիս՝

Դտ - 3724

Կտ - Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 373

«Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր»

3731 «Հիմնական աշխատողներին վճարվելիք աշխատավարձ» - հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության հիմնական աշխատողներին վճարվելիք աշխատավարձի գումարների հաշվառման համար:

Վճարվելիք աշխատավարձի գումարի չափով կատարվում է հետևյալ ձևակերպումը՝

Դտ - 7411 «Հիմնական աշխատողներին տրվող աշխատավարձ»

Կտ - 3731:

Աշխատավարձ վճարելիս՝

Դտ - 3731

Կտ - Դրամական միջոցներ:

3732 «Պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձ» - հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձի գումարների հաշվառման համար:

Վճարվելիք աշխատավարձի գումարի չափով կատարվում է հետևյալ ձևակերպումը՝

Դտ - 7412 «Պայմանագրային աշխատողներին տրվող աշխատավարձ»

Կտ - 3732:

Աշխատավարձ վճարելիս՝

Դտ - 3732

Կտ - Դրամական միջոցներ:

3733 «Այլ ներքին կրեդիտորական պարտքեր» - այս հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության աշխատողների նկատմամբ այլ պարտավորությունների հաշվառման համար:

3734 «Արտաքին կրեդիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ» - այս հաշիվը նախատեսված է ապրանքների կամ ծառայությունների դիմաց ռեզիդենտներին վճարվելիք գումարների հաշվառման համար:

3735 «Արտաքին կրեդիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ» - այս հաշիվը նախատեսված է ապրանքների կամ ծառայությունների դիմաց ոչ ռեզիդենտներին վճարվելիք գումարների հաշվառման համար:

3736 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ռեզիդենտների նկատմամբ» - հաշիվն օգտագործվում է նոր ստեղծվող վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալի ձևավորման և գործող վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի համալրման նպատակով՝ մինչև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով կանոնադրական կապիտալի գրանցումը, որից հետո այս հաշիվը փակվում է, իսկ դրանում հաշվառված միջոցներն օգտագործվում են վարկային կազմակերպության հայեցողությամբ:

Հաշիվը դեբետագրվում է կանոնադրական կապիտալի ձևավորման և համալրման դեպքում՝

Դտ - Կանոնադրական կապիտալի համալրման հաշիվ

Կտ - 3736:

Կանոնադրական կապիտալի ձևավորումից կամ համալրումից հետո այս հաշիվը փակվում է:

3737 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ոչ ռեզիդենտների նկատմամբ» - տես 3736 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ռեզիդենտների նկատմամբ» հաշիվը:

ԲԱԺԻՆ 38
«Հետաձգված հարկային պարտավորություններ»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 381
«Հետաձգված հարկային պարտավորություններ»

3811 «Հետաձգված հարկային պարտավորություններ» - այս հաշիվը նախատեսված է հարկվող ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած շահութահարկի գծով հետաձգված հարկային պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հետաձգված հարկային պարտավորությունների հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 12 «Շահութահարկ» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 39
«Ակտիվներին վերաբերող շնորհներ»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 391
«Ակտիվներին վերաբերող շնորհներ»

3911 «Ակտիվներին վերաբերող շնորհներ» - հաշիվը նախատեսված է ակտիվներին վերաբերող շնորհների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ակտիվներին վերաբերող շնորհների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 40
«Պահուստներ»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 401
«Պահուստներ»

4011 «Պահուստներ» - այս հաշիվը նախատեսված է որպես պարտավորություն ճանաչվող պահուստների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Պահուստներ ձևավորվում են բանկային երաշխիքների և այլ պարտավորությունների գծով: Պահուստների հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 41
«Չստացված ֆինանսական եկամուտներ տրամադրված ֆինանսական վարձակալությունից»

Այս բաժինը բաղկացած է երկու ենթաբաժիններից՝ 411 «Չստացված ֆինանսական եկամուտներ ռեզիդենտներին տրամադրված ֆինանսական վարձակալությունից» և 412 «Չստացված ֆինանսական եկամուտները ոչ ռեզիդենտներին տրամադրված ֆինանսական վարձակալությունից»: Բաժնի հաշիվները նախատեսված են ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական վարձակալության գծով չվաստակած ֆինանսական եկամուտների (ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների և դրանց զեղչված արժեքի տարբերությունը) հաշվառման համար: Ընդ որում, չվաստակած ֆինանսական եկամտի գումարը որոշելիս գործարքի հետ կապված ծախսումները հաշվում են: Չվաստակած ֆինանսական եկամտի, ինչպես նաև գործարքի հետ կապված ծախսումների որոշման և գնահատման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 39 և ՀՀՀՀՍ 17-ում:

Formatted
Formatted
Formatted
Formatted

ԿԱՐԳ 5 ԿԱՊԻՏԱԼ

ԲԱԺԻՆ 50
«Կանոնադրական կապիտալ»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 501
«Արտոնյալ բաժնետոմսեր»

5011 «Արտոնյալ բաժնետոմսեր-անվանական արժեք» - հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է բաժնետոմսերի անվանական արժեքով: Հաշիվը

կրեդիտագրվում է արտոնյալ բաժնետոմսերի (այդ թվում՝ նաև լրացուցիչ) թողարկման դեպքում:

5012 «Արտոնյալ բաժնետոմսեր-էմիսիոն եկամուտ» - այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից արտոնյալ բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և բաժնետոմսերի անվանական արժեքի միջև եղած դրական կամ բացասական տարբերությունը:

Ենթաբաժին 502
«Սովորական բաժնետոմսեր»

5021 «Սովորական բաժնետոմսեր- անվանական արժեք» - հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է բաժնետոմսերի անվանական արժեքով: Հաշիվը կրեդիտագրվում է սովորական բաժնետոմսերի (այդ թվում նաև՝ լրացուցիչ) թողարկման դեպքում:

5022 «Սովորական բաժնետոմսեր-էմիսիոն եկամուտ» - այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից սովորական բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և բաժնետոմսերի անվանական արժեքի միջև եղած դրական կամ բացասական տարբերությունը:

Ենթաբաժին 503
«Կանոնադրական կապիտալ կոոպերատիվ և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպությունների համար»

5031 «Կանոնադրական կապիտալ կոոպերատիվ և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպությունների համար» - հաշիվը նախատեսված է կոոպերատիվ և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի միջոցների հաշվառման համար:

Ենթաբաժին 504
«Չվճարված կապիտալ»

Formatted
Formatted

5041 «Չվճարված կապիտալ» - հաշիվը ակտիվային, կարգավորող է: Այն նախատեսված է կազմակերպության չվճարված կապիտալի առկայության և շարժի հաշվառման համար: Դեբետում արտացոլվում է մասնակիցների պարտքը կազմակերպության կապիտալում ներդրումների գծով, ինչպես նաև բաժնետիրական ընկերությունների թողարկած, բայց չտեղաբաշխած բաժնետոմսերի անվանական արժեքը, իսկ կրեդիտում՝ այդ պարտքի մարումը, չմարված պարտքերի կամ թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին կապիտալի նվազեցումը: Այս հաշվի մնացորդը դեբետային է և իրենից ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ մասնակիցների պարտքը կազմակերպության կապիտալում ներդրումների գծով և տեղաբաշխված, բայց չվճարված բաժնետոմսերի անվանական արժեքը: Այս դասի ընդհանուր գումարում ներառվում է բացասական նշանով:

ԲԱԺԻՆ 51
«Պահուստներ»

Ենթաբաժին 511
«Գլխավոր պահուստ»

5111 «Գլխավոր պահուստ» - այս հաշվում հաշվառվում է այն պահուստը, որն ստեղծվում է վարկային կազմակերպության տրամադրության տակ մնացած շահույթից՝ չնախատեսված ծախսերի փոխհատուցման նպատակով:

Ենթաբաժին 512
«Վերագնահատման պահուստներ»

5121 «Շենքերի և շինությունների վերագնահատման պահուստ» - այս հաշվում հաշվառվում է շենքերի և շինությունների պարբերաբար վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը՝ հաշվեկշռային արժեքը գերազանցող գումարի չափով: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 16-ի համաձայն, ընդ որում, որևէ հիմնական միջոցի որևէ տեսակի վերագնահատման դեպքում վերագնահատվում են տվյալ դասի բոլոր հիմնական միջոցները: Վերագնահատումը կատարվում է վարկային կազմակերպության կողմից և հաստատվում անկախ կազմակերպության կողմից: Վերագնահատման արդյունքում շենքերի և շինությունների հաշվեկշռային արժեքի նվազումը դեբետագրվում է 7512 «Կորուստներ հիմնական միջոցների վերագնահատումից» հաշվին: Եթե նախկինում այդ հիմնական միջոցը վերագնահատվել է, և արդյունքը կրեդիտագրվել է «Շենքերի և շինությունների վերագնահատման պահուստ» հաշվին, ապա նվազման գումարը դուրս է գրվում այդ հաշվից: Վերագնահատումից հետո ամորտիզացիոն ծախսերը եկամուտների և ծախսերի հաշվետվությունում ավելի մեծ լինելու դեպքում ամորտիզացիոն ծախսերի ավելացած գումարը տեղափոխվում է այս հաշվից «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» հաշվին: Հիմնական միջոցների իրացման դեպքում այս հաշվի մնացորդները նույնպես ուղղակիորեն փոխանցվում են «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» հաշվին:

5122 «Այլ հիմնական միջոցների վերագնահատման պահուստ» - այս հաշվում հաշվառվում է այլ հիմնական միջոցների (բացառությամբ՝ շենքերի և շինությունների) պարբերաբար վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը՝ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը գերազանցող գումարի չափով: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 16-ի համաձայն, ընդ որում, որևէ հիմնական միջոցի որևէ տեսակի վերագնահատման դեպքում վերագնահատվում են տվյալ դասի բոլոր հիմնական միջոցները: Վերագնահատումը կատարվում է վարկային կազմակերպության կողմից և հաստատվում անկախ կազմակերպության կողմից: Վերագնահատման արդյունքում հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի նվազումը դեբետագրվում է 7512 «Կորուստներ հիմնական միջոցների վերագնահատումից» հաշվին: Եթե նախկինում այդ հիմնական միջոցը վերագնահատվել է, և արդյունքը կրեդիտագրվել է «Շենքերի և շինությունների վերագնահատման պահուստ» հաշվին, ապա նվազման գումարը դուրս է գրվում այդ հաշվից: Վերագնահատումից հետո ամորտիզացիոն ծախսերը եկամուտների և ծախսերի հաշվետվությունում ավելի մեծ լինելու դեպքում ամորտիզացիոն

ծախսերի ավելացած գումարը տեղափոխվում է այս հաշվից «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» հաշվին: Հիմնական միջոցների իրացման դեպքում այս հաշվի մնացորդները նույնպես ուղղակիորեն փոխանցվում են «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» հաշվին:

5123 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվի մնացորդն արտացոլում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման արդյունքում կուտակված շահույթը/վնասը: Հաշվում գրանցվում են ակտիվների ճշգրտումները՝ որպես հաշվեկշռային արժեքի և վերջին իրական արժեքի միջև տարբերություն: Այս ճշգրտումները գրանցվում են «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների շուկայական արժեքի ճշտման հաշիվ» հաշվին: Երբ ակտիվը վաճառվում կամ վերադասակարգվում է առևտրային նպատակներով պահվող կարգի, ապա այդ օրվա դրությամբ կուտակված վերագնահատման արդյունքում առաջացած չիրացված շահույթը կամ վնասը դուրս է գրվում այս հաշվից՝ թղթակցելով 14 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» բաժնի ճշգրտման հաշիվների հետ, իսկ այդ օրվա իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը գրանցվում է եկամուտների և ծախսերի հաշվետվությունում՝ որպես իրացված շահույթ կամ վնաս: Եթե վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվը փոխանցվում է մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի կարգ, ապա չիրացված շահույթը կամ վնասն աննիջապես գրանցվում է հաշվեկշռի կապիտալի բաժնի 5124 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով շահույթ/վնաս» հաշվին և դուրս գրվում (ամորտիզացվում է) մինչև մարումը մնացած ժամանակաշրջանում եկամուտներին:

5124 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով շահույթ/վնաս» - տես 5123 հաշիվը:

5125 «Ասոցիացված կազմակերպությունում իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի վարկային կազմակերպության բաժնեմասը» - այս հաշվում հաշվառվում է ասոցիացված կազմակերպությունում ներդրումների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվի մնացորդն արտացոլում է ասոցիացված կազմակերպությունում ներդրումների վերագնահատման արդյունքում կուտակված շահույթը/վնասը: Այս ներդրումները վերագնահատվում են ասոցիացված կազմակերպության ակտիվների վերագնահատման հետևանքով: Հաշիվը թղթակցում է ասոցիացված կազմակերպությունների կանոնադրական կապիտալներում ներդրումների հաշիվների հետ:

5126 «Համատեղ վերահսկվող միավորներում իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի վարկային կազմակերպության բաժնեմասը» - հաշվում հաշվառվում է համատեղ վերահսկվող միավորներում մասնակցության վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվի մնացորդն արտացոլում է համատեղ վերահսկվող միավորներում մասնակցությունների վերագնահատման արդյունքում կուտակված շահույթը/վնասը: Այս ներդրումները վերագնահատվում են համատեղ վերահսկվող միավորներում ակտիվների վերագնահատման հետևանքով: Հաշիվը թղթակցում է համատեղ վերահսկվող միավորներում ներդրումների հաշիվների հետ:

5127 «Դուստր բանկերում ներդրումների վերագնահատումից իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի վարկային կազմակերպության բաժնեմասը» - այս հաշվում հաշվառվում է դուստր բանկերում ներդրումների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվի մնացորդը արտացոլում է դուստր բանկերում ներդրումների վերագնահատման արդյունքում կուտակված շահույթը/վնասը: Այս ներդրումները վերագնահատվում են դուստր բանկերի ակտիվների վերագնահատման հետևանքով: Հաշիվը թղթակցում է դուստր բանկերում ներդրումների հաշիվների հետ:

5128 «Դուստր վարկային կազմակերպություններում իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի վարկային կազմակերպության բաժնեմասը» - այս հաշվում հաշվառվում է դուստր վարկային կազմակերպություններում ներդրումների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 5127 հաշվի դեպքում:

5129 «Այլ դուստր ընկերություններում իրականացված վերագնահատումներից առաջացած շահույթի/վնասի վարկային կազմակերպության բաժնեմասը» - այս հաշվում հաշվառվում է ոչ բանկ դուստր ընկերություններում ներդրումների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 5127 հաշվի դեպքում:

5131 «Ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստ» - այս հաշվում հաշվառվում է վարկային կազմակերպության ոչ նյութական ակտիվների վերագնահատման արդյունքը: Վերագնահատման հաշվառումը ներկայացված է ՀՀՀՀՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 52
«Հետ գնված կապիտալ»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 521
«Հետ գնված կապիտալ»

Այս ենթաբաժնում հաշվառվում են վարկային կազմակերպության կողմից օրենքով սահմանված կարգով հետ գնված կապիտալի գումարները: Սեփական բաժնետոմսերը (բաժնեմասերը, փայամասերը), սովորաբար, չունեն ձայնի և շահաբաժնի իրավունք, ինչպես նաև վարկային կազմակերպությունների լուծարման դեպքում առաջացող իրավունքներ: Այս բաժնետոմսերը (բաժնեմասերը, փայամասերը) հաշվեկշռում գրանցվում են բացասական նշանով և օտարվում են օրենքով սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 53
«Չբաշխված շահույթ»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 531
«Չբաշխված շահույթ»

5311 «Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է ընթացիկ ֆինանսական տարվա զուտ շահույթը կամ վնասը, որը մնում է գլխավոր պահուստին հատկացումներ կատարելուց և շահաբաժինները վճարելուց հետո: Ընթացիկ տարվա արդյունքներն անկախ աուդիտային կազմակերպության կողմից հաստատվելուց և բաժնետերերի ժողովի կողմից ընդունվելուց հետո այս հաշիվը փակվում է՝ թղթակցելով «Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս» հաշվի հետ:

5312 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է նախորդ ֆինանսական տարիների զուտ շահույթը կամ վնասը, որը մնացել է գլխավոր պահուստին հատկացումներ կատարելուց և շահաբաժինները վճարելուց հետո: Հաշիվը թղթակցում է 5311 «Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս» հաշվի հետ:

Ենթաբաժին 532
«Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթի ճշգրտում»

Այս ենթաբաժինը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած ճշգրտումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե բանկն ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ճշգրտում են չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտում:

ԿԱՐԳ 6 ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ԲԱԺԻՆ 60
Տոկոսային եկամուտներ

Այս բաժինը նախատեսված է վարկային կազմակերպության կողմից իրականացված տարբեր գործառնություններից ստացված տոկոսային եկամտի հաշվառման համար: Բաժնում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝ 601 «Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից», 602 «Տոկոսային եկամուտներ բանկերին տրված վարկերից և ռեպո համաձայնագրերից», 603 «Տոկոսային եկամուտներ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերից (փոխառություններից)», 604 «Տոկոսային եկամուտներ ֆիզիկական անձանց տրված վարկերից (փոխառություններից)», 605 «Տոկոսային եկամուտներ իրավաբանական անձանց և հիմնարկներին տրված վարկերից (փոխառություններից)», 606 «Տոկոսային եկամուտներ վարկային կազմակերպության աշխատակիցներին և վարկային կազմակերպության հետ կապված անձանց տրված վարկերից (փոխառություններից)», 607 «Տոկոսային եկամուտներ ներդրումներից», 608 «Տոկոսային եկամուտ ֆինանսական վարձակալությունից», 609 «Այլ տոկոսային եկամուտներ»: Եկամուտ ճանաչելիս այս հաշիվները կրեդիտագրվում են՝ թղթակցելով ստացվելիք տոկոսների հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 61
«Եկամուտ այլ ձեռնարկություններում ներդրումներից»

Ենթաբաժին 610
«Եկամուտ այլ կազմակերպություններում ներդրումներից»

6101 «Եկամուտ շահաբաժիններից» - այս հաշվում հաշվառվում են այլ անձանց կանոնադրական կապիտալներում կատարված ներդրումներից ստացված շահաբաժինները: Տես 167;168 ենթաբաժնի մեկնաբանությունը:

6102 «Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից զուտ շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է ասոցիացված կազմակերպությունների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում վարկային կազմակերպության ունեցած բաժնեմասը: Տես 201, 202 ենթաբաժնի մեկնաբանությունը:

6103 «Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է համատեղ վերահսկվող միավորների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում վարկային կազմակերպության ունեցած բաժնեմասը: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 31 ստանդարտի:

6104 «Դուստր բանկերում ներդրումներից զուտ շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է դուստր բանկերի կողմից ստացված շահույթներում կամ վնասներում բանկի ունեցած բաժնեմասը: Տես 201, 202 ենթաբաժնի մեկնաբանությունը:

6105 «Դուստր վարկային կազմակերպություններում ներդրումներից զուտ շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է դուստր վարկային կազմակերպությունների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում բանկի ունեցած բաժնեմասը: Տես 201, 202 ենթաբաժնի մեկնաբանությունը:

6106 «Այլ դուստր ընկերություններում ներդրումներից զուտ շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է այլ ֆինանսական դուստր ընկերությունների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում բանկի ունեցած բաժնեմասը: Տես 201, 202 ենթաբաժնի մեկնաբանությունը:

ԲԱԺԻՆ 62
«Կորուստների վերականգնում (Փոխհատուցում)»

Ենթաբաժին 621
«Կորուստների վերականգնում»

6211 «Վարկերի գծով կորուստների վերականգնում» - այս հաշվում հաշվառվում են պահուստավորված վարկերի վերականգնումը և/կամ վարկային կազմակերպության հաշվեկշռից դուրս գրված վարկերի կամ դրանց մի մասի փոխհատուցումից ստացված միջոցները: Հաշիվը կրեդիտագրվում է՝ թղթակցելով վարկերի գծով պահուստաֆոնդի հաշվի հետ՝

Դտ - 157
Կտ - 6211:

6212 «Դեբիտորական պարտքերի գծով կորուստների վերականգնում» - այս հաշվում հաշվառվում են պահուստավորված դեբիտորական պարտքերի վերականգնումը և/կամ վարկային կազմակերպության հաշվեկշռից դուրս գրված դեբիտորական պարտքերի փոխհատուցումից ստացված միջոցները: Հաշիվը կրեդիտագրվում է՝ թղթակցելով վարկերի գծով պահուստաֆոնդի հաշվի հետ՝

Դտ - 184

Կտ - 6212:

6213 «Մինչև մարման ժամկետը պահվող և այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների գծով կորուստների վերականգնում» - այս հաշվում հաշվառվում են պահուստավորված՝ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների վերականգնումը և/կամ վարկային կազմակերպության հաշվեկշռից դուրս գրված ներդրումների փոխհատուցումից ստացված միջոցները: Հաշիվը կրեդիտագրվում է՝ թղթակցելով մինչև մարման ժամկետը պահվող և այլ անձանց կանոնադրական կապիտալներում ու համատեղ ձեռնարկումներում ներդրումների արժեզրկումների պահուստների հետ՝

Դտ - 1981, 2071

Կտ - 6213:

ԲԱԺԻՆ 63

«Միջնորդավճարներ»

Այս բաժնում հաշվառվում են վարկային կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստացված միջնորդավճարները: Հաշիվները թղթակցում են ստացվելիք ակտիվների համապատասխան հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 64

«Այլ եկամուտ»

ենթաբաժին 641

«Այլ եկամուտ»

6411 «Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից» - այս հաշվում հաշվառվում են տարբեր տույժերից և տուգանքներից ստացված եկամուտները, որոնք սահմանվում են վարկային կազմակերպության կողմից պայմանագրերի դրույթների խախտումների համար, ինչպիսիք են՝ ժամկետային ավանդների ժամկետից շուտ վերադարձը, վարկերի և վարկերի տոկոսների վճարման ուշացումը կամ այլ խախտումներ:

6412 «Երաշխիքներից, հոժարագրերով, հավատարմագրային կառավարման գործառնություններից ստացված եկամուտներ» - այս հաշվում հաշվառվում են երաշխիքներով, հոժարագրերով, հավատարմագրային կառավարման գործունեության ձևով մատուցված ծառայություններից ստացված եկամուտները: Տես 162, 163 ենթաբաժնի հաշիվների մեկնաբանությունը:

6414 «Ֆակտորինգից ստացված եկամուտներ» - տես 195, 196, 197 ենթաբաժնի հաշիվների մեկնաբանությունը:

6419 «Այլ եկամուտներ» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության կողմից այնպիսի գործառնությունների դիմաց ստացված եկամուտները, որոնց հաշվառման համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

ենթաբաժին 642, 643

«Օգուտներ»

6421 «Հիմնական միջոցների օտարումից ստացված օգուտներ» - այս հաշվում հաշվառվում են հիմնական միջոցների օտարումից ստացված օգուտները: Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցների վաճառքից եկամուտների ստացման դեպքում, հաշվեկշռում արտացոլվում են հետևյալ ձևակերպումներով՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 6421 (այն դեպքում, երբ հիմնական միջոցների վաճառքի գինը բարձր է վերջինիս հաշվեկշռային արժեքից):

6422 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ» - այս հաշվում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների դասի արժեթղթերի վաճառքից ստացված օգուտները: Վերավաճառքի համար նախատեսված արժեթղթերի օտարումից օգուտները հաշվարկվում են որպես վաճառքի գնի և հաշվեկշռային արժեքի միջև եղած դրական տարբերություն: Տես 11 բաժնի հաշիվների մեկնաբանությունը:

6423 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ» - այս հաշվում հաշվառվում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտները: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարումից օգուտները հաշվարկվում են որպես վաճառքի գնի հաշվեկշռային արժեքի միջև եղած դրական տարբերություն: Եթե ակտիվը նախկինում վերագնահատվել է, ապա վերագնահատման հաշվարկված գումարը դուրս է գրվում 5123 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» հաշվից՝ գրանցվելով եկամուտների և ծախսերի հաշվետվությունում՝ որպես իրացված շահույթ կամ վնաս: Տես 14 բաժնի հաշիվների մեկնաբանությունը:

6424 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների վաճառքից ստացված օգուտներ» - այս հաշվում հաշվառվում են մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների վաճառքից ստացված օգուտները: Օգուտը հաշվարկվում է որպես այդ արժեթղթերի վաճառքի գնի և հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերություն: Տես 19 բաժնի հաշիվների մեկնաբանությունը:

6425 «Արտարժույթի առուվաճառքից ստացված օգուտներ» - այս հաշվում հաշվառվում են արտարժույթի առուվաճառքից ստացված օգուտները: Արտարժույթի առուվաճառքի գործառնություններից առաջացած օգուտները հաշվարկվում են որպես

արտարժույթի առքի կամ վաճառքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքի տարբերություն:

Այս գործառնությունները պետք է տարբերակվեն հաշվեկշիռների համախմբման ընթացքում առաջացած փոխարժեքային տարբերություններից, որոնք գրանցվում են սեփական կապիտալում՝ 5130 «Արտերկրյա միավորի ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկման արդյունքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ» հաշվում:

6426 «Արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ» - այս հաշվում հաշվառվում են արտարժույթի վերագնահատման արդյունքում առաջացած օգուտները: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 21-ի համաձայն:

6427 «Այլ գործառնություններից ստացված օգուտներ» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության սովորական գործունեությունից դուրս գործառնություններից ստացված օգուտները:

6428 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված օգուտներ» - այս հաշվում հաշվառվում է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատման դրական տարբերությունը: Այդ գումարներով դեբետագրվում են 11 բաժնի ճշգրտման հաշիվները՝ թղթակցելով 6428 հաշվի կրեդիտի հետ:

6429 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված օգուտներ» - այս հաշվում հաշվառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման դրական տարբերությունը: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 39-ի համաձայն: Հաշիվը կիրառվում է այն դեպքում, եթե ընտրվել է ստանդարտի այն մոտեցումը, ըստ որի՝ վաճառքի համար նախատեսված արժեթղթերի վերագնահատումները գրանցվում են ֆինանսական արդյունքներում: Այդ գումարներով դեբետագրվում են 14 բաժնի ճշգրտման հաշիվները՝ թղթակցելով 6429 հաշվի կրեդիտի հետ:

6430 «Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից օգուտներ» - այս հաշիվը նախատեսված է ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի օտարումից առաջացած օգուտների հաշվառման համար: Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի օտարումից օգուտները հաշվարկվում են որպես դրանց վաճառքի գնի և հաշվեկշռային արժեքի միջև եղած դրական տարբերություն: Հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի սկզբունքներին համապատասխան և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ռեպո և հակադարձ ռեպո գործարքների հաշվապահական հաշվառման» կարգի համաձայն:

6431 «Հեջավորման ածանցյալ գործիքների վերագնահատումից օգուտներ» - այս հաշիվը նախատեսված է հեջավորման ածանցյալ գործիքների դրական վերագնահատման հաշվառման համար:

6432 «Հեջավորման ածանցյալ գործիքների վաճառքից օգուտներ» - այս հաշիվը նախատեսված է հեջավորման ածանցյալ գործիքների վաճառքից օգուտների հաշվառման համար:

ԲԱԺԻՆ 65
«Արտասովոր եկամուտներ»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 651
«Արտասովոր եկամուտներ»

6511 «Արտասովոր եկամուտներ» -այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության հիմնական գործունեությունից դուրս ստացված եկամուտները:

ԲԱԺԻՆ 66
«Միջմասնաճյուղային եկամուտներ (ծախսեր)»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 661
«Միջմասնաճյուղային եկամուտներ (ծախսեր)»

6611 «Միջմասնաճյուղային եկամուտներ (ծախսեր)» - այս հաշվում հաշվառվում են ներբանկային գործառնությունների արդյունքում առաջացած եկամուտները և ծախսերը: Մասնաճյուղերի հաշվեկշիռները միավորելիս հաշիվը զրոյացվում է:

ԲԱԺԻՆ 67
«Նախորդ ժամանակաշրջանների եկամուտներ»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 671
«Նախորդ ժամանակաշրջանների եկամուտներ»

Այս ենթաբաժինը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած նախորդ տարիների եկամուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե վարկային կազմակերպությունը ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ներառվում են հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներում): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 70, 71
«Տոկոսային ծախսեր»

Այս բաժինը նախատեսված է վարկային կազմակերպության կողմից իրականացված տարբեր գործառնություններից կրած տոկոսային ծախսերի հաշվառման համար: Բաժնում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝ 701 «Տոկոսային ծախսեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված փոխառությունների դիմաց», 702;703 «Տոկոսային ծախսեր ցպահանջ փոխառությունների դիմաց», 704;705 «Տոկոսային ծախսեր հաճախորդներից ներգրաված ժամկետային փոխառությունների դիմաց», 706 «Տոկոսային ծախսեր ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների դիմաց», 707 «Տոկոսային ծախսեր ստացված վարկերի դիմաց», 708 «Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի դիմաց», 709 «Այլ տոկոսային ծախսեր»: Ծախս ճանաչելիս այս հաշիվները դեբետագրվում են՝ թղթակցելով հաշվեգրված տոկոսների հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 72
«Հատկացումներ պահուստներին»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 721
Հատկացումներ պահուստներին

Այս ենթաբաժնում հաշվառվում են վարկերի ու դեբիտորական պարտքերի ընդհանուր ու հատուկ պահուստներին, ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին կատարվող հատկացումների, ինչպես նաև չաշխատող ակտիվների՝ նախորդ ժամանակաշրջանում հաշվեգրված տոկոսների գծով կատարված ծախսերի գումարները: Հաշվառումը տարվում է «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի», «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի» և ՀՀՀՀՍ 36 ստանդարտի համաձայն:

ԲԱԺԻՆ 73
«Միջնորդավճարներ, տույժեր ու տուգանքներ և այլ գործառնական ծախսեր»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 731
«Միջնորդավճարներ, տույժեր ու տուգանքներ և այլ գործառնական ծախսեր»

7311 «Միջնորդավճարների ծախսեր ռեզիդենտների գծով» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության կողմից ռեզիդենտներին վճարված միջնորդավճարների գծով ծախսերը:

7312 «Միջնորդավճարների ծախսեր ոչ ռեզիդենտների գծով» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության կողմից ոչ ռեզիդենտներին վճարված միջնորդավճարների գծով ծախսերը:

7313 «Տուգանքների և տույժերի գծով ծախսեր» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության վճարած տույժերի և տուգանքների գծով ծախսերը:

7314 «Երաշխիքների, պարտամուրհակների ընդունման և լիազորագրային գործառնությունների գծով ծախսեր» - այս հաշվում հաշվառվում են երաշխիքների, պարտամուրհակների ընդունման, ակրեդիտիվներով և լիազորագրային գործառնությունների գծով բանկին մատուցված ծառայությունների գծով կատարված ծախսերը:

7315 «Ծախսեր ֆակտորինգի գծով» - այս հաշվում հաշվառվում են ֆակտորինգային գործառնությունների գծով բանկի կատարած ծախսերը:

7316 «Այլ գործառնական ծախսեր» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության այն գործառնական ծախսերը, որոնց հաշվառման համար հաշվային պլանում առանձին հաշիվներ նախատեսված չեն:

ԲԱԺԻՆ 74
«Կառավարչական և հասարակական կապերի գծով ծախսեր»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 741
«Ծախսեր անձնակազմի գծով»

Այս ենթաբաժնում հաշվառվում են վարկային կազմակերպության հիմնական և պայմանագրային աշխատողներին տրվող աշխատավարձի, պարգևատրումների և լրավճարների, արձակուրդների և ոչ աշխատանքային օրերի համար վճարումների, անձնակազմի ուսուցման և անձնակազմի սպասարկման այլ ծախսերը, ինչպես նաև սոցիալական ապահովության գծով հատկացումները: Այս ենթաբաժնի հաշիվները թղթակցում են դեբիտորական և կրեդիտորական պարտքերի համապատասխան հաշիվների հետ:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 742, 743
«Կառավարչական ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են վարկային կազմակերպության շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության, շենքի, սարքավորումների ու փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման, անվտանգության ապահովման, աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների, կապի և հաղորդակցական միջոցների, փոխհատուցվող հարկերի ու տուրքերի,

վարկերի տրամադրման և վերադարձման, գործուղումների, գրասենյակային, ապահավագրության, կազմակերպչական և այլ կառավարչական ծախսերը: Այս ենթաբաժնի հաշիվները թղթակցում են դեբիտորների և կրեդիտորների համապատասխան հաշիվների կամ դրամական միջոցների հաշիվների հետ:

Ենթաբաժին 744
«Հասարակական կապերի գծով ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են գովազդի, հասարակական կապերի անդամավճարների և վարկային կազմակերպության ներկայացուցչության հետ կապված ծախսերը: Ենթաբաժնի հաշիվները թղթակցում են ակտիվների և պարտավորությունների համապատասխան հաշիվների կամ դրամական միջոցների հաշիվների հետ:

Ենթաբաժին 745
«Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են վարկային կազմակերպության հիմնական միջոցների մաշվածության ծախսերը, ինչպես նաև ֆինանսական վարձակալության պայմանագրի համաձայն վարկային կազմակերպության տիրապետության տակ գտնվող հիմնական միջոցների մաշվածության ծախսերը: Ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերը հաշվեգրելիս՝ թղթակցելով 232 «Հիմնական միջոցների ամորտիզացիա և արժեզրկում» ենթաբաժնի համապատասխան հաշիվների հետ: Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերը պետք է հիմնվեն այդ միջոցների օգտակար տևողության վրա՝ հաշվի առնելով հաշվարկված մնացորդային արժեքը, եթե սեփականության իրավունքը պետք է փոխանցվի վարկային կազմակերպությանը վարձակալության ժամկետի ավարտից հետո: Եթե սեփականության իրավունքը չի փոխանցվում բանկին վարձակալության ժամկետի ավարտից հետո, ապա ամորտիզացիոն ծախսերը պետք է հիմնվեն վարձակալության ժամանակաշրջանի վրա, եթե այն ավելի կարճ է, քան կապիտալիզացված ակտիվի հաշվարկված օգտակար տևողությունը: Կիրառվող ամորտիզացիոն մեթոդը պետք է համապատասխանի վարկային կազմակերպության կողմից ընդունված քաղաքականությանը:

Ենթաբաժին 746
«Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են վարկային կազմակերպության ոչ նյութական ակտիվների մաշվածության ծախսերը: Ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսերը հաշվեգրելիս՝ թղթակցելով 222 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա և արժեզրկում» ենթաբաժնի համապատասխան հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 75
«Կորուստներ և արտասովոր ծախսեր»

Ենթաբաժին 751, 752
«Կորուստներ»

7511 «Կորուստներ հիմնական միջոցների օտարումից» - այս հաշիվը նախատեսված է հիմնական միջոցների օտարումից առաջացած կորուստների հաշվառման համար: Հիմնական միջոցների օտարումից կորուստները հաշվարկվում են որպես հաշվեկշռային արժեքի և վաճառքի գնի միջև եղած բացասական տարբերություն: Հաշվեկշռային արժեքը որոշվում է որպես ձեռքբերման արժեքի և հաշվարկված ամորտիզացիայի տարբերություն՝ օտարման օրվա դրությամբ: Եթե ակտիվը նախկինում վերագնահատվել է, ապա վերագնահատման հաշվարկված գումարը դուրս է գրվում 5121 «Շենքերի և շինությունների վերագնահատման պահուստ» և 5122 «Այլ հիմնական միջոցների վերագնահատման պահուստ» հաշիվներից՝ թղթակցելով 5312 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» հաշվի հետ:

7512 «Կորուստներ հիմնական միջոցների վերագնահատումից» - այս հաշվում հաշվառվում է հիմնական միջոցների պարբերաբար վերագնահատումից առաջացած կորուստը: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 16-ի համաձայն, ընդ որում, որևէ հիմնական միջոցի որևէ տեսակի վերագնահատման դեպքում վերագնահատվում են տվյալ դասի բոլոր հիմնական միջոցները: Վերագնահատման արդյունքում հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի նվազումը դեբետագրվում է 7512 հաշվին: Եթե նախկինում այդ հիմնական միջոցը վերագնահատվել է, և արդյունքը կրեդիտագրվել է «Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ» հաշվին, ապա նվազման գումարը դուրս է գրվում այդ հաշվից:

7513 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վաճառքից» - այս հաշիվը նախատեսված է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների օտարումից առաջացած կորուստների հաշվառման համար: Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների օտարումից կորուստները հաշվարկվում են որպես հաշվեկշռային արժեքի և վաճառքի գնի միջև եղած բացասական տարբերություն:

7514 «Կորուստներ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վաճառքից» - այս հաշիվը նախատեսված է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարումից առաջացած կորուստների հաշվառման համար: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարումից կորուստները հաշվարկվում են որպես հաշվեկշռային արժեքի և վաճառքի գնի միջև եղած բացասական տարբերություն: Եթե ակտիվը նախկինում վերագնահատվել է, ապա վերագնահատման հաշվարկված գումարը դուրս է գրվում 5123 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» հաշվից՝ գրանցվելով եկամուտների և ծախսերի հաշվետվությունում՝ որպես իրացված շահույթ կամ վնաս:

7515 «Կորուստներ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների վաճառքից» - այս հաշիվը նախատեսված է մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների օտարումից առաջացած կորուստների հաշվառման համար: Իրացված վնասը հաշվարկվում է որպես այդ ներդրումների վաճառքի գնի և դրանց ավելի բարձր հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերություն:

7516 «Կորուստներ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից» - այս հաշվում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած կորուստները:

7517 «Կորուստներ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից» - այս հաշիվը նախատեսված է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած կորուստների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 39-ի համաձայն: Հաշիվը կիրառվում է այն դեպքում, եթե ընտրվել է ստանդարտի այն մոտեցումը, ըստ որի՝ այս ակտիվների վերագնահատումները գրանցվում են ֆինանսական արդյունքներում: Հաշվում գրանցվում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ճշգրտումները՝ որպես հաշվեկշռային արժեքի և վերջին իրական արժեքի միջև տարբերություն: Այս ճշգրտումներն արտացոլվում են 14 բաժնի ճշտման հաշիվներում:

7518 «Կորուստներ արտարժույթի առուվաճառքի գործառնություններից» - այս հաշիվը նախատեսված է արտարժույթի առուվաճառքի գործառնություններից առաջացած կորուստների հաշվառման համար: Արտարժույթի առուվաճառքի գործառնություններից առաջացած կորուստները հաշվարկվում են որպես արտարժույթի առքի կամ վաճառքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքի տարբերություն:

7519 «Արտարժույթի վերագնահատումից կորուստներ» - այս հաշիվը նախատեսված է արտարժույթի վերագնահատումից առաջացած կորուստների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 21-ի համաձայն:

7520 «Կորուստներ թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ծուլակտորներով և հուշադրամներով գործառնություններից» - հաշիվը նախատեսված է թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ծուլակտորների և հուշադրամների վերագնահատումից առաջացած կորուստների հաշվառման համար:

7521 «Կորուստներ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից» - հաշիվը նախատեսված է ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի օտարումից առաջացած կորուստների հաշվառման համար: Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի օտարումից կորուստները հաշվարկվում են որպես դրանց հաշվեկշռային արժեքի և վաճառքի գնի միջև եղած բացասական տարբերություն: Հաշվառումն իրականացվում է ՀՀՀՀՍ 39-ի սկզբունքներին համապատասխան և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ռեպո և հակադարձ ռեպո գործարքների հաշվապահական հաշվառման» կարգի համաձայն:

7522 «Կորուստներ ակտիվների արժեզրկումից» - այս հաշվում հաշվառվում են ակտիվների արժեզրկման հետ կապված կորուստները: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 36-ի համաձայն:

7523 «Կորուստներ վճարային գործիքներով գործառնություններից» - այս հաշվում հաշվառվում են վճարային գործիքներով գործառնություններից վարկային կազմակերպության կրած վնասները:

7524 «Հեջավորման ածանցյալ գործիքների վերագնահատումից կորուստներ» - այս հաշիվը նախատեսված է հեջավորման ածանցյալ գործիքների բացասական վերագնահատման հաշվառման համար:

7525 «Հեջավորման ածանցյալ գործիքների վաճառքից կորուստներ» - այս հաշիվը նախատեսված է հեջավորման ածանցյալ գործիքների վաճառքից կորուստների հաշվառման համար:

7526 «Կորուստներ այլ գործառնություններից» - այս հաշվում հաշվառվում են վարկային կազմակերպության այն գործառնություններից առաջացած կորուստները, որոնց հաշվառման համար հաշվային պլանում առանձին հաշիվներ նախատեսված չեն:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 753
«ԱՐՏԱՍՈՎՈՐ ԾԱԽՍԵՐ»

7531 «Արտասովոր ծախսեր» - այս հաշիվը նախատեսված է վարկային կազմակերպության այնպիսի ծախսերի հաշվառման համար, որոնք առաջանում են այն դեպքերից կամ գործարքներից, որոնք հստակ տարբերվում են վարկային կազմակերպության սովորական գործունեությունից, և, հետևաբար, չի ակնկալվում դրանց հաճախակի կամ պարբերաբար կրկնվելը:

ԲԱԺԻՆ 76
«ՇԱՀՈՒԲԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ (ՓոխհատուցՈՒՄ)

ԵՆԹԱԲԱԺԻՆ 761
«ՇԱՀՈՒԲԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ (ՓոխհատուցՈՒՄ)»

Այս ենթաբաժնում հաշվառվում են շահութահարկի գծով ընթացիկ և հետաձգված ծախսերը (փոխհատուցումները): Շահութահարկի հաշվառումը նկարագրված է ՀՀՀՀՍ 12 «Շահութահարկ» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 77
«ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 771
«ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ»

Այս ենթաբաժինը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած նախորդ տարիների ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե

բանկը ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ներառվում են հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներում): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտում:

ԿԱՐԳ 8 ՀԵՏՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

ԲԱԺԻՆ 80
«Պահանջներ և պարտավորություններ երաշխավորությունների, վճարային փաստաթղթերի և ածանցյալ գործիքների գծով»

ենթաբաժին 801
«Տրամադրված երաշխավորություններ»

Տրամադրված երաշխավորություններն այս ենթաբաժնի հաշիվներում գրանցվում են երաշխավորության տրման օրը: Գումարները դուրս են գրվում տրված երաշխավորության ժամկետի մարման կամ երաշխավորության դիմաց վճարում կատարելու օրը:

ենթաբաժին 802
«Վարկային գծեր և քարտեր»

Այս ենթաբաժինը նախատեսված է վարկային գծերի և քարտերի առավելագույն սահմանաչափերի և չօգտագործված մասերի հաշվառման համար: Այս գործիքներից յուրաքանչյուրի գծով միջոցների օգտագործման դեպքում նվազեցվում են չօգտագործված մասերի հաշվառման հաշիվները:

ենթաբաժին 804
«Ածանցյալ գործիքներ»

Այս ենթաբաժինը նախատեսված է արժութային, արժեթղթերի և այլ ածանցյալ գործիքների պայմանագրային արժեքի հաշվառման համար: Արժութային ածանցյալների դեպքում արտարժութային միջոցների գրանցումը կատարվում է գործարքի կնքման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքով:

ԲԱԺԻՆ 81
«Գրավ և երաշխավորություններ»

ենթաբաժին 811
«Ստացված գրավ»

Այս ենթաբաժնում հաշվառում են վարկերի և այլ փոխատվությունների դիմաց ստացված միջոցները: Գրավի առարկաներն այս ենթաբաժնի հաշիվներից դուրս են գրվում գրավատուին գրավի հետ վերադարձման կամ գրավի իրացման ժամանակ:

ենթաբաժին 812
«Ստացված երաշխավորություններ»

Այս ենթաբաժնում հաշվառում են վարկերի և այլ փոխատվությունների դիմաց ստացված երաշխավորությունները: Այստեղ հաշվառվող գումարները դուրս են գրվում երաշխավորությամբ տրված վարկերի և այլ փոխատվությունների մարման կամ երաշխավորությունների դիմաց վճարում ստանալիս:

ենթաբաժին 813
«Տրամադրված գրավ»

Այս ենթաբաժնում հաշվառվում է ստացված վարկերի և այլ փոխառությունների դիմաց տրամադրված գրավը: Այստեղ հաշվառվող գումարները դուրս են գրվում գրավով ապահովված վարկերի և այլ փոխատվությունների մարման կամ գրավի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի դեպքում:

ԲԱԺԻՆ 82
«Դուրսգրումներ»

Այս բաժնում հաշվառում են հաշվեկշռից դուրս գրված վարկերը, դեբիտորական պարտքերն ու այլ ակտիվները: Դուրս գրված գումարները կամ դրանց մի մասը այս բաժնից նվազեցվում են ակտիվների վերադարձման դեպքում: Չվերադարձված ակտիվներն այս բաժնից դուրս են գրվում գրանցման պահից հինգ տարի անց:

ԲԱԺԻՆ 83
«Գործառնական վարձակալություն»

Այս բաժնում հաշվառում են վարկային կազմակերպության կողմից գործառնական վարձակալությամբ ստացված ակտիվները:

ԲԱԺԻՆ 84

«Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ»

Այս բաժնում հաշվառում են վարկային կազմակերպության կողմից հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող արժեթղթերն ու այլ ակտիվները:

ԲԱԺԻՆ 85

«Արժեքների պահպանում»

ենթաբաժին 851

«Ի պահ ընդունված արժեքներ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ի պահ ընդունված ակտիվների հաշվառման համար: Այն դեպքում, երբ վարկային կազմակերպությանը հայտնի չէ ի պահ ընդունված արժեքների գինը, դրանք գրանցվում են 1 դրամ պայմանական արժեքով:

ենթաբաժին 852

«Ի պահ տրված արժեքներ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ի պահ տրված ակտիվների հաշվառման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Բանկում ընդհանուր կապիտալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու ուղեցույցը հաստատելու մասին*

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի և 22-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» ենթակետերը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Բանկում ընդհանուր կապիտալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու ուղեցույցը»՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի փետրվարի 6-ի ««Բանկում ընդհանուր կապիտալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու ուղեցույցը» հաստատելու մասին» թիվ 34 որոշումը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
28 մարտի 2003 թ., N 114-Ն

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի

մարտի 25-ի թիվ 114-Ն որոշմամբ

ԲԱՆԿՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԿԱՄ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» ենթակետի՝ բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմած անձի դիմումը մերժվում է, եթե անձը կամ փոխկապակցված անձինք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը սույն ուղեցույցով հիմնավորված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնա-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2003 թ. մարտի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.04.03 թ. (ՀՀԳՏ N12, 15.05.03):

կան բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձի, որպես բանկի բարձրագույն կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող անդամի, գործողությունները կարող են հանգեցնել բանկի սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը, կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը:

2. Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» ենթակետի՝ բանկում ղեկավար պաշտոն զբաղեցնել չեն կարող այն անձինք, որոնք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը սույն ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը, որպես բանկի ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել բանկի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել բանկի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը:

3. Սույն ուղեցույցի իմաստով՝ ղեկավար պաշտոն է համարվում բանկի խորհրդի նախագահի, խորհրդի նախագահի տեղակալի, խորհրդի անդամի, գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի, վարչության նախագահի, վարչության նախագահի տեղակալի, վարչության անդամի, գլխավոր հաշվապահի, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալի, վերստուգիչ հանձնաժողովի անդամի, ներքին հսկող (վերահսկիչ, հսկիչ) խմբի ղեկավարի, տարածքային ստորաբաժանման ղեկավարի (կառավարչի և գլխավոր հաշվապահի) պաշտոնները:

4. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն ուղեցույցի 1-ին և 2-րդ կետերի կիրառման նպատակով սահմանվում է, որ սույն ուղեցույցի 5-րդ կետում նշված հիմքերի առկայության դեպքում բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու նպատակով ներկայացված դիմումները քննարկվում են Կենտրոնական բանկի խորհրդի նիստում և կարող են հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու դիմումները մերժելու համար:

5. Կենտրոնական բանկի խորհրդի կողմից քննարկվում են այն անձանց դիմումները, որոնք.

5.1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործության համար ենթարկվել են քրեական պատասխանատվության.

5.2. այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործությունների համար ենթարկվել են քրեական պատասխանատվության.

5.3. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում հանդիսացել են ղեկավար կամ նշանակալից մասնակցություն ունեցող անձ, և որոնց պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում բանկը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ, կամ որոնց գործողությունների կամ անգործության հետևանքով բանկի ֆինանսական վիճակը, համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է.

5.4. այլ պետությունների բանկերում կամ ֆինանսական կամ ֆինանսավարկային հաստատություններում հանդիսացել են ղեկավար կամ նշանակալից մասնակցություն ունեցող անձ, և որոնց պաշտոնավարման ընթացքում իրենց գործողությունների կամ անգործության հետևանքով բանկը, ֆինանսական կամ ֆինանսավարկային հաստատությունը հայտարարվել են անվճարունակ կամ սնանկ.

5.5. Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունում հանդիսացել են ղեկավար կամ նշանակալից մասնակցություն ունեցող անձ, և որոնց պաշտոնավարման ընթացքում իրենց գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ.

5.6. այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ.

5.7. անձամբ, կամ իրենց հետ փոխկապակցված անձը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկի կամ վարկային կազմակերպության հանդեպ ունի ժամկետանց (կետանցված) պարտավորություն.

5.8. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից մեկով զրկվել են որակավորման վկայականից.

5.9. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հիմքերից մեկով 1 տարվա ընթացքում 3 անգամ ենթարկվել են պատասխանատվության.

5.10. հանդիսացել են բանկի ղեկավար և իրենց պաշտոնավարման ընթացքում համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի՝

ա) միտումնավոր կերպով խախտել են օրենքները և այլ իրավական ակտերը.

բ) պաշտոնավարման ընթացքում վարել են անհիմն և վտանգավոր գործունեություն, խոչընդոտել են վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողությունները.

գ) կատարել են այնպիսի գործողություններ, որոնց հետևանքով բանկը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս.

դ) գործունեության ընթացքում կատարել են անձնական շահերից բխող այնպիսի գործողություններ, որոնք հակասում են բանկի կամ բանկի հաճախորդների շահերին.

ե) անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք են դրսևորել իրենց ծառայողական պարտականություններ, այդ թվում՝ բանկի և բանկի հաճախորդների նկատմամբ ստանձնած հավատարմագրային պարտականությունների նկատմամբ.

զ) չեն կատարել Կենտրոնական բանկի հանձնարարականը կամ անտեսել են Կենտրոնական բանկի նախազգուշացումը:

6. Կենտրոնական բանկը բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու համար Կենտրոնական բանկ դիմած անձանցից պահանջում է հայտարարություն այն մասին, որ սույն ուղեցույցի 5-րդ կետում նշված հիմքերը նրանց մոտ բացակայում են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 363-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին*

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «լ» կետերը, 35-րդ հոդվածի 3-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապեության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 363Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության կարգում» (այսուհետև՝ կարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1.1. կարգի 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 41 կետ՝

«41. Սույն կարգի իմաստով՝ վարկառու է համարվում այն անձը, որը վարկատուի հանդեպ ստանձնել է կամ կարող է ստանձնել սույն կարգի 3-րդ կետում նշված պարտավորություններից որևէ մեկը».

1.2. կարգի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«13. Ընթացիկ տեղեկատվությունը ստանալու համար վարկատուն սույն կարգի թիվ 5 հավելվածով սահմանված ձևով, էլեկտրոնային եղանակով, վարկային ռեգիստր է ներկայացնում համապատասխան հարցում: Վարկային ռեգիստրի կողմից տեղեկատվությունը պետք է վարկատուին տրամադրվի հարցումը ստանալուց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ այլ տեղեկատվության, որը վարկային ռեգիստրի կողմից վարկատուին տրամադրվում է ոչ ուշ, քան հարցումը ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում: Վարկային ռեգիստրում առկա այլ տեղեկատվություն պահանջելու դեպքում վարկատուն առանձին աղյուսակով պարտավոր է կցել նաև վարկառուի վերաբերյալ իրեն անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվության ցանկը: Վարկային ռեգիստրի կողմից փաստաթղթային եղանակով տրամադրվող տեղեկատվությունը ստորագրվում է վարկային ռեգիստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից: Վերջինիս բացակայության դեպքում փաստաթղթերը ստորագրում է վարկային ռեգիստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանման՝ տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու աշխատակիցը».

1.3. կարգի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«18. Վարկատուների կողմից կատարված բոլոր հարցումները գրանցվում են վարկային ռեգիստրի կողմից: Յուրաքանչյուր ամիս, մինչև ամսվա 7-րդ աշխատանքային օրը, Կենտրոնական բանկը SիԲիէյ-ներ ցանցի միջոցով վարկատուներին է ներկայացնում վարկատուի կողմից նախորդ ամսվա ընթացքում

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2003 թ. մարտի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 16.04.03 թ. (ՀՀԳՏ N12, 15.05.03):

վարկային ռեգիստրի տեղեկատվության օգտագործման վերաբերյալ արձանագրություն (հավելված թիվ 7)».

1.4. կարգի 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«23. Վարկային ռեգիստրից տեղեկատվության ստացման համար վարկառուն պարտավոր է առձեռն ներկայացնել գրավոր դիմում (հավելված թիվ 6)՝ կից ներկայացնելով սահմանված սակագնի վճարումը հաստատող ֆինանսական փաստաթուղթը (օրինակ՝ վճարման հանձնարարական): Վարկառուի իրավաբանական անձ լինելու դեպքում դիմումը ստորագրվում և կնքվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կողմից: Վարկառուի ֆիզիկական անձ (անհատ ձեռնարկատեր) լինելու դեպքում կցվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Վարկային ռեգիստրի կողմից սույն կետով նախատեսված դիմումը բավարարվում է դիմումը ստանալու օրվանից՝ երրորդ աշխատանքային օրը».

1.5. կարգի 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«24. Դիմողը տեղեկատվությունը ստանում է առձեռն: Տեղեկատվությունը ստանալու համար վարկառուն (կամ նրա լիազորված անձը) պարտավոր է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, իսկ լիազորված անձ լինելու դեպքում՝ նաև լիազորագիր: Այն դեպքերում, երբ ներկայացված փաստաթղթերը թերի են, կամ դիմումը ներկայացրած անձն իրավունք չունի պահանջել տվյալ տեղեկատվությունը, դիմումը մերժվում է վարկային ռեգիստրի վարման համար պատասխանատու Կենտրոնական բանկի ստորաբաժանման կողմից՝ պատասխան գրությամբ, իսկ դիմողի կողմից մուծված սակագինը հետ չի վերադարձվում: Փաստաթղթերի թերի լինելու դեպքում դիմողը կարող է լրացնել կամ փոփոխել փաստաթղթերը և կրկին դիմել վարկային ռեգիստրին՝ առանց լրացուցիչ վճարում կատարելու».

1.6. կարգի 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25. Տրամադրված տեղեկատվության ամբողջականության և ճշմարտացիության համար օրենքով սահմանված պատասխանատվություն է կրում տեղեկատվությունը տրամադրող վարկատուն: Վարկային ռեգիստրից վարկառուի կարծիքով ոչ ճիշտ տեղեկատվություն ստանալու դեպքում վարկառուն կարող է գրավոր տեղեկացնել վարկային ռեգիստրին՝ մատնանշելով կասկած հարուցող տվյալները և պահանջել ճշգրտված տեղեկատվությունը: Վարկային ռեգիստրը, տվյալների արժանահավատությունը ստուգելուց և հարկ եղած դեպքում ճշգրտումներ իրականացնելուց հետո պատասխանում է վարկառուին՝ տրամադրելով ճշգրտված տեղեկատվությունը սույն կարգով սահմանված ժամկետներում».

1.7. կարգի 2-րդ հավելվածում և 2-րդ հավելվածի լրացման կարգում «արտարժույթի կոդը» բառերը փոխարինել «արժույթի կոդը» բառերով.

1.8. կարգի 6-րդ հավելվածից հանել «Նախատեսվող վարկի գումարը* (Հայաստանի Հանրապետության դրամով)» արտահայտությունը.

1.9. կարգի 8-րդ հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՀԱՎԵԼՎԱԾ 8

1. Համակարգում ձևավորվող ֆայլերի անվանումները և տիպերը

1.1. Կենտրոնական բանկում լրացվող և վարվող ստանդարտ տեղեկագրերից ձևավորվող ֆայլերը

Ֆայլի անվանումը պարունակում է 19 նիշ **(3n8d4n.LRS)**՝

- ***3n*** - վարկատուի կոդը (այն վարկատուի կոդը, որին հասցեագրված է ֆայլը),
- ***8d*** - ֆայլի ձևավորման ամսաթիվը (yyyymmdd, տարիամիսօր ֆորմատով) r,
- ***4n*** - ֆայլի հերթական համարը ձևավորման օրվա սահմաններում, ֆայլի հերթական համարը սկսվում է 0001-ով և ավարտվում է 9999,
- ***LRS*** - ֆայլի ընդլայնում:

Յուրաքանչյուր ֆայլ պարունակում է բոլոր ստանդարտ տեղեկագրերը:

1.2. Վարկատուի կողմից ուղարկվող վարկերի ֆայլերի անվանումը և տեսակը

➢ Տեղեկատվություն նոր գրանցվող կամ գործող վարկի փոփոխության վերաբերյալ

Ֆայլի անվանումը պարունակում է 19 նիշ **(3n8d4n.LRØ)**՝

- ***3n*** - վարկատուի կոդը (այն վարկատուի կոդը, որտեղ ձևավորվում է ֆայլը),
- ***8d*** - ֆայլի ձևավորման ամսաթիվը (yyyymmdd, տարիամիսօր ֆորմատով),
- ***4n*** - ֆայլի հերթական համարը ձևավորման օրվա սահմաններում, ֆայլի հերթական համարը սկսվում է 0001-ով և ավարտվում է 9999,
- ***LRØ*** - ֆայլի ընդլայնում (ընդլայնման վերջին նիշը հավասար է զրոյի):

Յուրաքանչյուր ֆայլ պարունակում է տեղեկություն 1 վարկի վերաբերյալ:

➢ Տեղեկատվություն հեռացվող վարկի վերաբերյալ

Ֆայլի անվանումը պարունակում է 19 նիշ (3n8d4n.LRD)՝

- *3n* - վարկատուի կոդը (այն վարկատուի կոդը, որտեղ ձևավորվում է ֆայլը),
- *8d* - ֆայլի ձևավորման ամսաթիվը (yyyymmdd, տարիամիսօր ֆորմատով),
- *4n* - ֆայլի հերթական համարը ձևավորման օրվա սահմաններում, ֆայլի հերթական համարը սկսվում է 0001-ով և ավարտվում է 9999,
- *LRD* - ֆայլի ընդլայնում:

Յուրաքանչյուր ֆայլ պարունակում է տեղեկություն 1 վարկի վերաբերյալ:

1.3. Կենտրոնական բանկից փոխանցվող անդորրագրի ֆայլի անվանումը և տեսակը

Կենտրոնական բանկում վարկերի մուտքագրման ընթացքում կատարվող ստուգումների արդյունքների հիման վրա ձևավորվում է անդորրագրի ֆայլ:

Ֆայլի անվանումը պարունակում է 19 նիշ (3n8d4n.LRA)՝

3n - վարկատուի կոդը (այն վարկատուի կոդը, որին հասցեագրված է ֆայլը),

8d - ֆայլի ձևավորման ամսաթիվը (yyyymmdd, տարիամիսօր ֆորմատով),

4n - ֆայլի հերթական համարը ձևավորման օրվա սահմաններում, ֆայլի հերթական համարը սկսվում է 0001-ով և ավարտվում է 9999,

LRA - ֆայլի ընդլայնում:

1.4. Վարկատուների կողմից ուղարկվող հարցման ֆայլի անվանումը և տեսակը

Ֆայլի անվանումը պարունակում է 14 նիշ (1x3n4d2n.XLS)՝

- *1x - հայտի նշանը, որը տվյալ դեպքում ներկայացվում է Q- տառով,*
- *3n - հարցում ուղարկող վարկատուի կոդը,*
- *4d - ֆայլի ձևավորման ամսաթիվը (mmdd, ամիսօր ֆորմատով),*
- *2n - հայտի հերթական համարը ձևավորման ամսաթվի սահմաններում,*
- *XLS - ֆայլի ընդլայնում:*

1.5. Կենտրոնական բանկից փոխանցվող հաշվետվությունների ֆայլերի անվանումները և տեսակները

➢ Հարցմանը պատասխանող հաշվետվություն

Ֆայլի անվանումը պարունակում է 33 նիշ(1x 8d20x.QRP)՝

- *1x - հաշվետվության կոդը, որը տվյալ դեպքում ներկայացվում է D- տառով,*
- *8d - ֆայլի ձևավորման ամսաթիվը (yyyymmdd, տարիամիսօր ֆորմատով),*
- *20x - անձնագրի կոդը կամ հարկային կոդը,*
- *QRP - ֆայլի ընդլայնում:*

➢ Պարբերաբար վարկատուներին ուղարկվող հաշվետվություն

Ֆայլի անվանումը պարունակում է 16 նիշ (1x 8d3n.QRP)՝

- *1x* - հաշվետվության տեսակը, որը տվյալ դեպքում ներկայացվում է S- տառով,
- *8d* - ֆայլի ձևավորման ամսաթիվը (yyyymmdd, տարիամիսօր ֆորմատով),
- *3n* - վարկատուի կոդը (այն վարկատուի կոդը, որին հասցեագրված է ֆայլը),
- *QRP* - ֆայլի ընդլայնում:

2. Հաղորդագրությունների կառուցվածքը և դաշտերի նկարագրությունը

Յուրաքանչյուր հաղորդագրություն բաղկացած է 3 մասից՝

վերնագիր

տեքստ

վերջաբան

Հաղորդագրությունը սկսվում է էյԷսՍիԱյԱյ) հատուկ «{» նիշով և վերջանում «}» նիշերով: Սկզբի «{» նիշից հետո առանց ազատ տեղ թողնելու՝ լրացվում է մեկ տողով վերնագիրը, որն ավարտվում է էյԷսՍիԱյԱյ «↵» նիշով:

Հաղորդագրության վերնագրում նշվում է՝

3x - ֆայլի ընդլայնումը,

5n - հաղորդագրությունն ուղարկող վարկատուի կոդը,
5n - հաղորդագրությունը ստացող վարկատուի կոդը:

Բուն հաղորդագրությունը կազմվում է դաշտերից: Դաշտերը պետք է լրացվեն համաձայն տվյալ դաշտի լրացման կանոնների և ֆորմատների: Հաղորդագրության տեքստային մասը բաղկացած է «Դաշտի կոդ»-ից և «Դաշտի պարունակություն»-ից: Հաղորդագրության մեջ դաշտի կոդը առջևից և հետևից վերցված է զույգ կետերի մեջ, օրինակ՝ «:101:»: Դաշտի կոդից հետո դրված երկու կետից հետո, առանց ազատ տեղ թողնելու, լրացվում է դաշտի համապատասխան տեղեկատվությունը: Յուրաքանչյուր տող ավարտվում է «↵» նիշով: Վերջին դաշտի վերջին նիշը լրացնելուց հետո դրվում է «↵», և դրվում են հաջորդաբար «}» և «↵» էյԷսՍիԱյԱյ) հատուկ նիշերը: Վերջիններս իրենցից ներկայացնում են հաղորդագրության վերջաբանը:

Ստորև նկարագրված է անդորրագրի օրինակ՝

1. վերնագիր{LRA1030010600↵
2. տեքստ:A00:10601126598732↵
   :A01:106200207140001.lRa↵
   :A02:ELFF↵
   :A03:L5error↵
3. վերջաբան}↵

2.1. Ստանդարտ տեղեկագրերի կառուցվածքը

Վարկատուների տեղեկագիրը Կենտրոնական բանկի կայանից ուղարկվում է յուրաքանչյուր վարկատուի աշխատանքային կայանին և տեղեկություններ է պարունակում իր մասնաճյուղերի վերաբերյալ:

→

Պ/Օ[1]	Դաշտի կոդը	Դաշտի անվանումը	Դաշտի ֆորմատը[2]
Պ	B01	Վարկատուի կոդը	*
Պ	B02	Մասնաճյուղի կոդը	*
Պ	B03	Անվանումը	*
Պ	B04	Կարճ անվանումը	*
Պ	B05	Հասցեն	*
Օ	B06	Վարկատուի տնօրենը	*
Օ	B07	Գլխավոր հաշվապահը	*

⊣

→

Պ	C01	Արժույթի կոդը	*
Պ	C02	Անվանումը	*
Պ	C03	Միավորը	*
Պ	C04	Փոխարժեքը	*
Պ	C05	Ամսաթիվը	*

⊣

→

Պ	T01	Կոդը	*
Պ	T02	Վարկի տեսակը	*

⊣

→

Պ	S01	Կոդը	*
Պ	S02	Անվանումը	*

⊣

→

Պ	D01	Կոդը	*
Պ	D02	Աղբյուրը	*

⊣

→

[1] Պ- պարտադիր, Օ- օժանդակ:
[2] Հաղորդագրությունների դաշտերի ֆորմատները համապատասխանում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սահմանված ձևերին:

Պ	P01	Կոդը	*
Պ	P02	Սեփականության ձևը	*

⊣

→

Պ	R01	Կոդը	*
Պ	R02	Ռիսկի դասը	*

⊣

→

Պ	Z01	Կոդը	*
Պ	Z02	Մարզի անվանումը	*

⊣

Դաշտի բովանդակությունը	Դաշտի կոդը
Վարկատուների տեղեկագիրը	B01 - B07
Արժույթի տեղեկագիրը	C01 - C05
Վարկի տեսակը	T01 - T02
Ոլորտի տեղեկագիրը	S01 - S02
Վարկի տրամադրման աղբյուրը	D01 - D02
Սեփականության ձևը	P01 - P02
Վարկային ռիսկի դասը	R01 - R02
Մարզերի տեղեկագիրը	Z01 - Z02

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ :B01:Վարկատուի կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է այն վարկատուի կոդը, որին ուղարկվում է տեղեկագիրը,

Դաշտ :B02:Մասնաճյուղի կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում են ուղարկվող հաղորդագրության մեջ :B01: դաշտում նշված վարկատուի մասնաճյուղերի կոդերը,

Դաշտ :B03:Անվանումը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է :B01: դաշտում ներկայացված վարկատուի անվանումը,

Դաշտ :B04:Կարճ անվանումը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է :B01: դաշտում ներկայացված վարկատուի կարճ անվանումը,

Դաշտ :B05:Հասցեն
ֆորմատ*
այս դաշտում նշվում է :B01: դաշտում ներկայացված վարկատուի հասցեն,

Դաշտ :B06:Վարկատուի տնօրենը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է :B01: դաշտում ներկայացված վարկատուի տնօրենը,

Դաշտ :B07:Գլխավոր հաշվապահը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է :B01: դաշտում ներկայացված վարկատուի գլխավոր հաշվապահը,

Դաշտ :C01:Արժույթի կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է արժույթի կոդը,

Դաշտ :C02:Անվանումը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է :C01: դաշտում նշված արժույթի անվանումը,

Դաշտ :C03:Արժույթի միավորը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է :C01: դաշտում նշված արժույթի միավորը,

Դաշտ :C04:Արտարժույթի փոխարժեքը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է :C01: դաշտում նշված արտարժույթի փոխարժեքը,

Դաշտ :C05:Ամսաթիվը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է տեղեկագրի մուտքագրման ամսաթիվը,

Դաշտ :T01:Կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է տրամադրվող վարկի տեսակի կոդը,

Դաշտ :T02:Վարկի տեսակը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է տրամադրվող վարկի տեսակը,

Դաշտ :S01:Կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի օգտագործման ոլորտի կոդը,

Դաշտ :S02:Անվանումը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է ոլորտի անվանումը,

Դաշտ :D01:Կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի տրամադրման աղբյուրի կոդը,

Դաշտ :D02:Աղբյուրը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է տրամադրման աղբյուրի անվանումը,

Դաշտ :P01:Կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկառուի սեփականության ձևի կոդը,

Դաշտ :P02:Սեփականության ձևը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է սեփականության ձևի անվանումը,

Դաշտ :R01:Կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է տրամադրվող վարկի վարկային ռիսկի դասի կոդը,

Դաշտ :R02:Ռիսկի դասը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկային ռիսկի դասի անվանումը,

Դաշտ :Z01:Կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի տրամադրման մարզի կոդը,

Դաշտ :Z02:Մարզի անունը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է մարզի անունը:

2.2. Շտեմարանում գրանցվող վարկի կառուցվածքը

Պ/Օ	Դաշտի կոդը	Դաշտի անվանումը	Դաշտի ֆորմատը
Պ	101	Վարկային ռեգիստրի կոդը	*
Պ	102	Վարկատուի կոդը	*
Պ	103	Մասնաճյուղի կոդը	*
Պ	201	Վարկառուի կարգավիճակը	*
Պ	202	Վարկառուի անունը/անվանումը	*
Օ	203	Վարկառուի ազգանունը	*
Օ	204	Վարկառուի հայրանունը	*
Պ	205	Վարկառուի անձնագրի կոդը/հարկային կոդը	*
Պ	206	Մարզի կոդը	*
Օ	207	Հասցեն	*
Օ	208	Սեփականության ձևը	*
Պ	209	Ռեզիդենտությունը	*
Պ	210	Վարկատուի հետ կապված են/ կապված չեն	*
Օ	211	Գործադիր տնօրենը	*
Պ	212	Տարբերակի հերթական համարը	*
Պ	301	Պայմանագրի ամսաթիվը	*
Պ	302	Պայմանագրի համարը	*
Պ	303	Վարկի փոփոխության ամսաթիվը	*
Օ	304	Փաստացի մասնակի մարման ամսաթիվը	*
Պ	305	Փաստացի տրամադրված գումարի ամսաթիվը	*
Պ	306	Պայմանագրի մարման ամսաթիվը	*
Պ	307	Վարկի վիճակը	*
Օ	308	Գրավի գումարը	*
Օ	309	Գրավի առարկան	*
Օ	310	Գրավի այլ նշումներ	*
Պ	401	Վարկի տեսակը	*
Պ	402	Տրամադրման աղբյուրը	*
Պ	403	Վարկային ռիսկի դասը	*
Պ	404	Օգտագործման ոլորտը	*
Պ	405	Օգտագործման մարզը	*
Պ	406	Պայմանների վերանայման քանակը	*
Օ	407	Մասհանման գումարը	*

⊣
→

Պ	501	Արժույթի կոդը	*
Պ	502	Պայմանագրով նախատեսված գումարը	*
Պ	503	Պայմանագրով նախատեսված տոկոսը	*
Պ	504	Տրամադրված գումարը	*
Պ	505	Մարված գումարը	*
Պ	506	Փաստացի մնացորդը	*
Պ	507	Ժամկետանց պարտավորությունները	*
Պ	508	Ժամկետանց տոկոսը	*

⊣
→

Պ	601	Երաշխավորողի կարգավիճակը	*
Պ	602	Երաշխավորողի անունը / անվանումը	*
Օ	603	Երաշխավորողի հայրանունը	*
Օ	604	Երաշխավորողի ազգանունը	*
Պ	605	Անձնագրի կոդը /հարկային կոդը	*
Օ	606	Հասցեն	*
Պ	607	Մարզի կոդը	*
Պ	608	Երաշխիքի գումարը	*
Օ	609	Երաշխավորողի սեփականության ձևը	*

Պ	701	Փոխկապակցված անձի կարգավիճակը	*
Պ	702	Փոխկապակցված անձի անունը /անվանումը	*
Օ	703	Փոխկապակցված անձի հայրանունը	*
Օ	704	Փոխկապակցված անձի ազգանունը	*
Պ	705	Փոխկապակցված անձի անձնագրի կոդը / հարկային կոդը	*
Պ	706	Մարզի կոդը	*
Օ	707	Հասցեն	*
Պ	708	Վարկային ռեգիստրի կոդը (փոխկապակցված անձի վարկերի կոդերը)	*
Օ	709	Փոխկապակցված անձի սեփականության ձևը	*

Պ	901	Սեփականատիրոջ կարգավիճակը	*
Պ	902	Սեփականատիրոջ անունը /անվանումը	*
Օ	903	Սեփականատիրոջ հայրանունը	*
Օ	904	Սեփականատիրոջ ազգանունը	*
Պ	905	Սեփականատիրոջ անձնագրի կոդը / հարկային կոդը	*
Պ	906	Մարզի կոդը	*
Օ	907	Հասցեն	*
Օ	908	Սեփականատիրոջ սեփականության ձևը	*

Դաշտի բովանդակությունը	**Դաշտի կոդը**
Վարկի մանրամասները	501 - 508
Երաշխավորողները	601 - 608
Փոխկապակցված անձինք	701 - 708
Սեփականատերերը	901 - 907

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ :101:Վարկային ռեգիստրի կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի կոդը վարկային ռեգիստրում, որը պարունակում է՝
- վարկատուի կոդը,
- վարկի մուտքագրման ամսաթիվը,
- վարկի հերթական համարը տվյալ օրվա սահմաններում, հերթական համարը սկսվում է 0001-ից մինչև 9999-ը,
- ստուգիչ նիշ,

Դաշտ :102:Վարկատուի կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկը տրամադրող վարկատուի կոդը,

Դաշտ :103:Մասնաճյուղի կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկը տրամադրող վարկատուի մասնաճյուղի կոդը (եթե վարկը տրամադրվել է գլխամասի կողմից, ապա դաշտը պարտադիր հավասար է 00 (2 զրո)),

Դաշտ :201:Վարկառուի կարգավիճակը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկառուի ֆիզիկական կամ իրավաբանական անձ լինելը,

Դաշտ :202:Վարկառուի անունը/անվանումը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է՝ վարկառուի ֆիզիկական անձ լինելու դեպքում՝ անունը կամ իրավաբանական անձ լինելու դեպքում՝ անվանումը,

Դաշտ :203:Վարկառուի ազգանունը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկառուի ազգանունը,

Դաշտ :204:Վարկառուի հայրանունը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկառուի հայրանունը,

Դաշտ :205:Վարկառուի անձնագրի կոդը/հարկային կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է՝ վարկառուի ֆիզիկական անձ լինելու դեպքում՝ անձնագրի կոդը, իսկ իրավաբանական անձ լինելու դեպքում՝ հարկային կոդը,

Դաշտ :206:Մարզի կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է այն մարզի կոդը, որտեղ օգտագործվելու է վարկը,

Դաշտ :207:Հասցեն
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկառուի հասցեն,

Դաշտ :208:Սեփականության ձևը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկառուի սեփականության ձևը,

Դաշտ :209:Ռեզիդենտությունը
ֆորմատ*
այս դաշտում նշվում են վարկառուի ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ լինելու դեպքերը,

Դաշտ :210:Վարկատուի հետ կապված են/ կապված չեն
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկառուի կապվածությունը վարկատուի հետ,

Դաշտ :211:Գործադիր տնօրենը
ֆորմատ*
այս դաշտում նշվում են՝ վարկառուի իրավաբանական անձ լինելու դեպքում՝ գործադիր տնօրենի վերաբերյալ տվյալներ,

Դաշտ :212:Տարբերակի հերթական համարը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի տարբերակի հերթական համարը,

Դաշտ :301:Պայմանագրի ամսաթիվը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է պայմանագրի կնքման ամսաթիվը, համաձայն որի տրամադրվել է վարկը,

Դաշտ :302:Պայմանագրի համարը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է պայմանագրի համարը,

Դաշտ :303:Վարկի փոփոխության ամսաթիվը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկում փոփոխություն կատարելու ամսաթիվը,

Դաշտ :304:Փաստացի կատարված մասնակի մարման ամսաթիվը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է փաստացի կատարված մասնակի մարման վերջին ամսաթիվը,

Դաշտ :305:Փաստացի տրամադրված գումարի ամսաթիվը
ֆորմատ*
այս դաշտում լրացվում է վարկի փաստացի տրամադրման ամսաթիվը,

Դաշտ :306:Պայմանագրի մարման ամսաթիվը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է պայմանագրում ներկայացված մարման ամսաթիվը,

Դաշտ :307:Վարկի վիճակը
ֆորմատ
այս դաշտում նշվում է վարկի վիճակը (մարված կամ չմարված),

Դաշտ :308:Գրավի գումարը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է գրավի գնահատված արժեքը,

Դաշտ :309:Գրավի առարկան
ֆորմատ*
այս դաշտում նշվում է գրավի առարկայի տեսակը,

Դաշտ :310:Գրավի այլ նշումներ
ֆորմատ*
այս դաշտում նշվում են գրավի վերաբերյալ այլ տվյալներ,

Դաշտ :401:Վարկի տեսակը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է տրամադրված վարկի տեսակը,

Դաշտ :402:Տրամադրման աղբյուրը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի տրամադրման աղբյուրը,

Դաշտ :403:Վարկային ռիսկի դասը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի վարկային ռիսկի դասը,

Դաշտ :404:Օգտագործման ոլորտը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի օգտագործման ոլորտը,

Դաշտ :405:Օգտագործման մարզը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է այն մարզը, որտեղ կիրառվելու է վարկը,

Դաշտ :406:Պայմանների վերանայման քանակը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի վերանայումների քանակը,

Դաշտ :407:Մասհանման գումարը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի գծով ընդհանուր կամ հատուկ պահուստին կատարված մասհանման գումարը,

Դաշտ :501:Արժույթի կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի տրամադրման արժույթի կոդը,

Դաշտ :502:Պայմանագրով նախատեսված գումարը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի պայմանագրով նախատեսված գումարը,

Դաշտ :503:Պայմանագրով նախատեսված տոկոսը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի պայմանագրով նախատեսված տոկոսը,

Դաշտ :504:Տրամադրված գումարը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է տրամադրված գումարը,

Դաշտ :505:Մարված գումարը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկառուի կողմից մարված հիմնական գումարը,

Դաշտ :506:Փաստացի մնացորդը
ֆորմատ*
այս դաշտում լրացվում է վարկի փաստացի մնացորդը,

Դաշտ :507:ժամկետանց պարտավորությունները
ֆորմատ*
այս դաշտում նշվում է ժամկետանց հիմնական գումարը,

Դաշտ :508:ժամկետանց տոկոսը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է ժամկետանց հիմնական տոկոսների գումարը,

Դաշտ :601:Երաշխավորողի կարգավիճակը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկը երաշխավորողի կարգավիճակը՝ ֆիզիկական անձ է, թե իրավաբանական,

Դաշտ :602:Երաշխավորողի անունը / անվանումը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկը երաշխավորողի (կախված ֆիզիկական կամ իրավաբանական անձ լինելուց) անունը կամ անվանումը,

Դաշտ :603:Երաշխավորողի հայրանունը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է երաշխավորողի հայրանունը,

Դաշտ :604:Երաշխավորողի ազգանունը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է երաշխավորողի ազգանունը,

Դաշտ :605:Անձնագրի կոդը /հարկային կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է երաշխավորողի (կախված ֆիզիկական կամ իրավաբանական անձ լինելուց) հարկային կոդը կամ անձնագրի կոդը,

Դաշտ :606:Հասցեն
ֆորմատ*
այս դաշտում նշվում է երաշխավորողի հասցեն,

Դաշտ :607:Մարզի կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է երաշխավորողի մարզի կոդը,

Դաշտ :608:Երաշխիքի գումարը
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է երաշխավորողի երաշխիքի գումարը,

Դաշտ :609:Սեփականության ձևը
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է երաշխավորողի սեփականության ձևը,

Դաշտ :701:Փոխկապակցված անձի կարգավիճակը
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է, վարկառուի հետ փոխկապակցված անձի առկայության դեպքում, վերջինիս կարգավիճակը՝ ֆիզիկական անձ է, թե իրավաբանական,

Դաշտ :702:Փոխկապակցված անձի անունը /անվանումը
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է փոխկապակցված անձի (կախված ֆիզիկական կամ իրավաբանական անձ լինելուց) անունը կամ անվանումը,

Դաշտ :703:Փոխկապակցված անձի հայրանունը
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է փոխկապակցված անձի հայրանունը,

Դաշտ :704:Փոխկապակցված անձի ազգանունը
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է փոխկապակցված անձի ազգանունը,

Դաշտ :705:Փոխկապակցված անձի անձնագրի կոդը / հարկային կոդը
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է փոխկապակցված անձի (կախված ֆիզիկական կամ իրավաբանական անձ լինելուց) անձնագրի կոդը կամ հարկային կոդը,

Դաշտ :706:Մարզի կոդը
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է փոխկապակցված անձի մարզի կոդը,

Դաշտ :707:Հասցեն
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է փոխկապակցված անձի հասցեն,

Դաշտ :708:Վարկային ռեգիստրի կոդը (փոխկապակցված անձի վարկերի կոդերը)
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է փոխկապակցված անձի վարկի կոդը վարկային ռեգիստրում,

Դաշտ :709:Սեփականության ձևը
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է փոխկապակցված անձի սեփականության ձևը,

Դաշտ :901:Սեփականատիրոջ կարգավիճակը
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկառուի կապիտալում 10% և ավելի մասնակցություն ունեցող կամ 5-7 ամենամեծ մասնաբաժին ունեցող սեփականատերերի կարգավիճակը՝ ֆիզիկական անձ է, թե իրավաբանական,

Դաշտ :902:Սեփականատիրոջ անունը / անվանումը
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկառուի սեփականատիրոջ (կախված ֆիզիկական կամ իրավաբանական անձ լինելուց) անունը կամ անվանումը,

Դաշտ :903:Սեփականատիրոջ հայրանունը
Ֆորմատ*
այս դաշտում նշվում է սեփականատիրոջ հայրանունը,

Դաշտ :904:Սեփականատիրոջ ազգանունը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է սեփականատիրոջ ազգանունը,

Դաշտ :905:Սեփականատիրոջ անձնագրի կոդը / հարկային կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է սեփականատիրոջ (կախված ֆիզիկական կամ իրավաբանական անձ լինելուց) հարկային կոդը կամ անձնագրի կոդը,

Դաշտ :906:Մարզի կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է սեփականատիրոջ մարզի կոդը,

Դաշտ :907:Հասցեն
ֆորմատ*
այս դաշտում նշվում է սեփականատիրոջ հասցեն,

Դաշտ :908:Սեփականության ձևը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է սեփականատիրոջ սեփականության ձևը:

2.3. Հեռացվող վարկի կառուցվածքը

Պ/Օ	Դաշտի կոդը	Դաշտի անվանումը	Դաշտի ֆորմատը
Պ	101	Վարկային ռեգիստրի կոդը	*

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ :101:Վարկային ռեգիստրի կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկի կոդը վարկային ռեգիստրում, որը պարունակում է՝
- վարկի մուտքագրման ամսաթիվը,
- վարկի հերթական համարը տվյալ օրվա սահմաններում, հերթական համարը սկսվում է 0001-ից մինչև 9999-ը,
- ստուգիչ նիշ:

2.4. Անդորրագրի կառուցվածքը

Այս հաղորդագրությունը Կենտրոնական բանկի կողմից ուղարկվում է վարկատուի աշխատանքային կայանին՝ տեղեկացնելով այն մասին, թե մինչ այդ վարկատուի ծրագրային համակարգից ուղարկած ֆայլը հաջող է անցել ստուգումը, թե ոչ:

Պ/Օ	Դաշտի կոդը	Դաշտի անվանումը	Դաշտի ֆորմատը
Պ	A00	Վարկային ռեգիստրի կոդը	*
Պ	A01	Ստացված ֆայլի անվանումը	*
Պ	A02	Հաղորդագրության կոդը (ընդունված է / ընդունված չէ)	*
Օ	A03	Սխալի բովանդակությունը	*

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ :A00:Վարկային ռեգիստրի կոդը
ֆորմատ*
այս դաշտում նշվում է վարկատուի աշխատանքային կայանից ստացված հաղորդագրության մեջ առկա վարկային ռեգիստրի կոդը, որի համար ուղարկվում է անդորրագիրը,

Դաշտ :A01:Ստացված ֆայլի անվանումը
ֆորմատ*

այս դաշտում նշվում է ստացված ֆայլի անվանումը, որը պարունակում է՝
•վարկատուի կոդը,
•ուղարկման ամսաթիվը,
•հաղորդագրության հերթական համարը,
•ֆայլի ընդլայնում,

Դաշտ :A02:Հաղորդագրության կոդը
ֆորմատ*

այս դաշտում նշվում է ստացված հաղորդագրության համար ձևավորված անդորրագրի պատասխանը՝ ընդունված է, կամ մերժված լինելու դեպքում՝ սխալի կոդը,

Դաշտ :A03:Սխալի բովանդակությունը
ֆորմատ*

այս դաշտում նշվում է հաղորդագրության մեջ սխալի առկայության դեպքում՝ վերջինիս բովանդակությունը»:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
1 ապրիլի 2003 թ., N 123-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

«Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին*

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ, 55-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2001 թվականի մայիսի 31-ի թիվ 146 որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը՝ բացառությամբ կանոնակարգ 3-ի 6-րդ բաժնի 6.1-ից 6.7 կանոնների:

3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատակազմին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում կազմակերպել սույն որոշմամբ հաստատված իրավական ակտի անգլերեն և ռուսերեն պաշտոնական թարգմանությունն ու հրատարակումը՝ 20 օրինակ տպաքանակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2003 թվականի հունիսի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
2 ապրիլի 2003 թ., N 126-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2003 թ. մարտի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 16.04.03 թ. (ՀՀԳՏ N12, 15.05.03):

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2003 թվականի մարտի 25-ի թիվ 126-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3

ԲԱՆԿԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի (այսուհետև՝ բանկեր) կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգն ու ժամկետները:

ԳԼՈՒԽ II. ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Բանկերը Կենտրոնական բանկ են ներկայացնում հաշվետվությունների ներքոհիշյալ ձևերը՝ նշված պարբերականությամբ:

	Հաշվետվության անվանումը	Հաշվետվության համարը	Ներկայացման հաճախականությունը
1	*2*	*3*	*4*
1.	Հաշվեկշիռ	1	ամսական, տարեկան
2.	Հաշվեկշիռ	2	շաբաթական
3.	Հաշվետվություն $Ն1^1$, $Ն1^2$, $Ն2^1$, $Ն2^2$, Ն3, $Ն4^1$, $Ն4^2$ և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվների վերաբերյալ	3	ամսական
4.	Հաշվետվություն ՀՀ կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ	4	14-օրյա
5.	Հաշվետվություն բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ	5	ամսական, եռամսյակային, տարեկան
6.	Հաշվետվություն վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ	6	ամսական
7.	Հաշվետվություն արտարժույթի տնօրինման նորմատիվի վերաբերյալ	7	շաբաթական
8.	Հաշվետվություն ներգրավված և տեղաբաշխված միջոցների ծախսատարության և եկամտաբերության վերաբերյալ	8	ամսական
9.	Հաշվետվություն ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետայնությունների վերաբերյալ	9	ամսական
10.	Հաշվետվություն կանոնադրական կապիտալի ձևավորման վերաբերյալ	10	ամսական
11.	Հաշվետվություն նորմատիվային ընդհանուր կապիտալի փոփոխության վերաբերյալ	11	ամսական, եռամսյակային, տարեկան
12.	Հաշվետվություն բանկի դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ	12	եռամսյակային, տարեկան
13.	Հաշվետվություն դրամարկղային շրջանառության վերաբերյալ (ամփոփ և ըստ մասնաճյուղերի)	13	ամսական

14.	Հաշվետվություն «խոշոր» փոխառուների վերաբերյալ	14	ամսական
15.	Հաշվետվություն «խոշոր» պարտատերերի վերաբերյալ	15	ամսական
16.	Հաշվետվություն արտասահմանյան և հայրենական բանկերի հետ «լորո» և «նոստրո» հաշիվների վերաբերյալ	16	ամսական
17.	Հաշվետվություն նախորդող շաբաթվա ընթացքում ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույքների վերաբերյալ	17	շաբաթական
18.	Հաշվետվություն բանկի և ոչ ռեզիդենտների միջև իրականացվող գործառնությունների վերաբերյալ	18	եռամսյակային
19.	Հաշվետվություն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների վերաբերյալ	19	օրական
20.	Հաշվետվություն հաճախորդների, նրանց հաշիվների, կատարված փոխանցումների, մատուցված վճարային ծառայությունների և վճարային գործիքների վերաբերյալ	20	ամսական
21.	Հաշվետվություն արժեթղթերի թողարկման արդյունքների վերաբերյալ	21	յուրաքանչյուր թողարկման համար
22.	Հաշվետվություն բանկի կողմից թողարկված արժեթղթերի և կատարված ներդրումների վերաբերյալ	22	տարեկան
23.	Հաշվետվություն բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների, ոչ նյութական ակտիվների, ինչպես նաև այլ անձանց կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների գումարների վերաբերյալ	23	ամսական
24.	Հաշվետվություն ֆիզիկական անձանց անունով բանկերի միջոցով արտերկրից մուտք եղած և արտերկիր ուղարկված գումարների վերաբերյալ	24	եռամսյակային
25.	Հաշվետվություն բանկի աշխատակազմի վերաբերյալ	25	եռամսյակային
26.	Հաշվետվություն երաշխիքային վճարումների հաշվարկման և բանկի ավանդատուների քանակի ու ավանդների երաշխավորված գումարի վերաբերյալ	26	եռամսյակային
27.	Հրապարակվող հաշվետվություն հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ	27	եռամսյակային

ԳԼՈՒԽ III. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ


3. Բանկերը հաշվետվությունները, ծանուցումները, կից տեղեկանքները, բացառությամբ թիվ 21 և 22 ձևերի, ներկայացնում են բացառապես էլեկտրոնային փոստով՝ SWIFT համակարգի միջոցով, Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող ֆայլերին համապատասխան: Հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից բանկերին ուղարկված պաշտպանված ֆայլերով («Մայքրոսոֆթ օֆիս 97» ծրագրով), որոնց փոփոխելն արգելվում է: Այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չընդունված:

Հաշվետվություններում նշվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթվերը (օրինակ՝ շաբաթական հաշվետվություններում նշվում է կիրակի օրվա ամսաթիվը, իսկ ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում՝ ամսվա վերջին օրվա ամսաթիվը): Ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր. ամիս. տարի (օրինակ՝ 31/01/2003): Ընդ որում, հաշվետվությունները կազմելիս մեկ տարին պետք է հասկանալ 365 կամ 366 օր, այսինքն՝ օրացուցային օրերի քանակը:

Սույն կետով սահմանված պահանջներին համապատասխան՝ Կենտրոնական բանկի կողմից ընդունված հաշվետվությունները, ծանուցումները, կից տեղեկանքները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված գրավոր ապացույցներ:

4. Հաշվետվությունները մագնիսական կրիչներով կամ էլեկտրոնային փոստով ներկայացնելիս ֆայլերը կոդավորվում են համաձայն սույն կանոնակարգի 5-րդ կետի:

Ֆայլի կոդն ունի հետևյալ կառուցվածքը.



Օրինակ՝ 14200_02.xls ֆայլը «Հայագրոբանկի» թիվ 2 հաշվետվությունն է, 16300_10.xls ֆայլը՝ «Հայէկոնոմբանկի» թիվ 10 հաշվետվությունը, և այլն: Կոդավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող ֆայլերը, բացի տվյալ օրը ներկայացվող հաշվետվության ձևերից, այլ տեղեկատվություն չպետք է պարունակեն:

5. Բանկերի անվանումների հնգանիշ կոդերը.

Բանկի անվանումը		Բանկի կոդը	Բանկի անվանումը		Բանկի կոդը
1	«Հայինվեստբանկ» ՓԲԸ	11500	13	«Կրեդիտ-Երևան բանկ» ՍՊԸ	18700
2	«Ամել|ք բանկ» ՍՊԸ	11800	14	«Կոնվերս բանկ» ՓԲԸ	19300
3	«Արդշինբանկ» ԲԲԸ	12100	15	«Ինեկոբանկ» ՓԲԸ	20500
4	«Գլածոր բանկ» ՓԲԸ	12400	16	ԻԻՀ «Մել|աթ բանկ» դուստր բանկ ՓԲԸ	20800
5	«Հայագրոբանկ» ԲԲԸ	14200	17	««ԻԹԲ» միջազգային առևտրային բանկ» ՓԲԸ	21400
6	«Հայկապ» բանկ ՓԲԸ	15100	18	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ	21700
7	«Հայներարտբանկ» ՓԲԸ	15700	19	«Հայգյուղփոխբանկ» կոոպերատիվ	22000
8	«Հայխնայբանկ» ՓԲԸ	16000	20	«Արցախբանկ» ՓԲԸ	22300
9	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	16300	21	«Հունաստանի առևտրային բանկ (Հայաստան)» ՓԲԸ	23500
10	«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ	16600	22	«ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ» ՓԲԸ	23800
11	«Միջազգային ինվեստիցիոն բանկ» ՓԲԸ	17500	23	«Յունիբանկ» ՓԲԸ	24100
12	«Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ	18100	24	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ	24700

6. Թիվ 1 և 2 հաշվետվությունները լրացվում են Կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի օգոստոսի 6-ի թիվ 258-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի օգոստոսի 27-ի թիվ 629-Ն հրամանով համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանին» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի կիրառման հրահանգին» համապատասխան՝ հազար դրամներով, առանց տասնորդական միավորների:

«I խմբի արտարժույթ» և «II խմբի արտարժույթ» սյունակներում արտարժույթի խմբավորումն իրականացվում է համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի օգոստոսի 6-ի թիվ 259-Ն որոշմամբ հաստատված Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի (այսուհետև՝ Կանոնակարգ 2): Հետհաշվեկշռային հաշիվները լրացվում են հազար դրամներով: Հաշվետվությունները պետք է պարունակեն հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա (եթե բանկն աշխատել է նաև շաբաթ, կիրակի կամ օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրը, ապա՝ այդ օրվա) դրությամբ տվյալները: Բանկի կողմից ինքնուրույն բացված հաշիվները Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում չեն արտացոլվում որպես առանձին հաշիվ:

7. Թիվ 3 հաշվետվությունը բաղկացած է 4 էջից:

Առաջին էջում ներկայացվում և ամփոփվում են հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկին մասնակցող միջին ամսական ցուցանիշներն ու տնտեսական նորմատիվների փաստացի մեծությունները՝ հաշվարկված համաձայն Կանոնակարգ 2-ի: «Ընդհանուր կապիտալ» սյունակում լրացվում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի համար հաշվարկվող կապիտալի մեծությունը: Մեկ փոխառուի և բանկի հետ կապված մեկ անձի գծով բանկի ռիսկի առավելագույն չափը, անկախ այդ նորմատիվների խախտման փաստից, արտացոլվում է 7-րդ և 8-րդ սյունակներում: Եթե նորմատիվները խախտվել են մի քանի փոխառուների (անձանց) գծով, ապա հաջորդ տողերում ցույց են տրվում խախտում առաջացրած բոլոր գումարները: Բանկը հաշվետվությանը կից պարտադիր ներկայացնում է տեղեկանք՝ խախտում առաջացրած բոլոր գումարների տրամադրման պահի դրությամբ խախտման փաստի առկայության կամ բացակայության մասին:

Երկրորդ էջում ներկայացվում են ընդհանուր կապիտալի ու նրա տարրերի հաշվեկշռային և նորմատիվային մեծությունները, ինչպես նաև նորմատիվային մեծությունների հաշվարկի համար անհրաժեշտ նվազեցումները՝ ըստ ամսվա բոլոր օրերի:

Երրորդ էջում ներկայացվում են բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության՝ $Ն1^1$, $Ն1^2$ և բանկի իրացվելիության՝ $Ն2^1$, $Ն2^2$ տնտեսական նորմատիվների հաշվարկի համար անհրաժեշտ տարրերը (համապատասխան հաշվեկշռային հոդվածներ և Կանոնակարգ 2-ով նախատեսված նվազեցումներ)՝ ըստ ամսվա բոլոր օրերի:

Չորրորդ էջում ներկայացվում է բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափը՝ Ն42 տնտեսական նորմատիվի հաշվարկի համար անհրաժեշտ տարրերը: Բանկի հետ կապված անձանց տրամադրված փոխառություններ են համարվում Կանոնակարգ 2-ով սահմանված՝ բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի մեջ մտնող տարրերը: Մասնավորապես, բանկի հետ կապված անձանց տրամադրված վարկերը, այդ թվում՝ բանկային հաշվի վարկավորումը, միջբանկային վարկերը, կարտացոլվեն «ժամկետային վարկի մնացորդը» սյունակում, բանկի հետ կապված անձանց պարտավորությունների դիմաց տրված երաշխիքներն ու երաշխավորությունները, ակրեդիտիվները՝ «Հետհաշվեկշռային երաշխիքներ և երաշխավորություններ (ակրեդիտիվ)» սյունակում, իսկ մնացած բոլորը՝ «Ժամկետային այլ փոխառությունների մնացորդը» սյունակում: «Երկարաձգված» և «Ժամկետանց» միջոցներն արտացոլվում են համապատասխան միջոցների երկարաձգված և ժամկետանց սյունակներում: «Գումարը՝ համապատասխան ռիսկի կշռով» սյունակում լրացվում է բանկի հետ կապված անձանց պարտավորությունների գումարը՝ Կանոնակարգ 2-ով սահմանված կշիռներով: «Միջբանկային ավանդներ» սյունակում լրացվում են բանկի հետ կապված անձանց մոտ ներդրված ժամկետային, երկարաձգված, ժամկետանց միջբանկային ավանդները: «Միջբանկային ավանդը համապատասխան ռիսկի կշռով» սյունակում լրացվում է բանկի հետ կապված անձանց մոտ ներդրված միջբանկային ավանդների գումարը՝ Կանոնակարգ 2-ով սահմանված կշիռներով:

Արտարժութային անավարտ ժամկետային գործարքները (հետհաշվեկշռային մասով) հաշվետվության մեջ պետք է գրանցվեն գործարքի կնքման օրվա՝ Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով:

8. Թիվ 4 հաշվետվության մեջ բոլոր արժույթներով ներգրավված միջոցները ներկայացվում են համատեղ՝ մեկ էջի վրա, դրամական արտահայտությամբ, հազար դրամներով, առանց տասնորդական միավորների: Արտարժույթով ներգրավված միջոցների խմբավորումը կատարվում է Կանոնակարգ 2-ով սահմանված արտարժութային խմբերի համաձայն՝ «I խմբի արտարժույթ», «II խմբի արտարժույթ»:

9. Թիվ 5 հաշվետվությունը լրացվում է աճողական տվյալներով՝ տարեսկզբից ստացված տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների, կատարված տոկոսային և ոչ տոկոսային ծախսերի, ակտիվների հնարավոր կորուստների գծով պահուստներին կատարված հատկացումների, դուրս գրված ակտիվների վերադարձից առաջացած գումարների չափով: «Նախորդ ժամանակաշրջան» սյունակում լրացվում են նախորդ ամսվա վերջին օրվա դրությամբ աճողական տվյալները, իսկ եռամսյակային և տարեկան հաշվետվություններում, համապատասխանաբար, նախորդ եռամսյակի և նախորդ տարվա տվյալները:

Առանձին տողերի տարանջատումն ըստ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների՝ կատարվում է եկամուտների ստացման աղբյուրի տեսանկյունից: Օրինակ՝ ոչ ռեզիդենտին ռեզիդենտի կողմից թողարկված արժեթղթի վաճառքից ստացված եկամուտը պետք է արտացոլվի «Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտ» տողի «ոչ ռեզիդենտ» ենթատողում:

10. Թիվ 6 հաշվետվությունը բաղկացած է 2 էջից:

Հաշվետվության «I. Վարկային ներդրումներ, ավանդներ, լիզինգ, ֆակտորինգ և ռեպո համաձայնագրեր ըստ ժամկետների» աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ. աղյուսակում արտացոլվում են վարկային ներդրումների, ավանդների, լիզինգի, ֆակտորինգի և ռեպո համաձայնագրերի հաշվեկշռային մնացորդները: Հաշվետվության մեջ չեն ընդգրկվում Կենտրոնական բանկի հետ կնքված ֆինանսական գործարքները: Ընդ որում, ոսկով ավանդները հաշվետվության մեջ արտացոլվում են որպես արտարժութային ավանդներ, իսկ ռեպո համաձայնագրերն ընդգրկվում են ռեպո համաձայնագրերով տրամադրված գումարի չափով:

«1. Ընդամենը վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր» տողում լրացվում են միայն աղյուսակի վերջին երկու սյունակները (ընդամենը):

«Ժամկետային ակտիվներ» տողում լրացվում են բանկի ընդհանուր ժամկետային վարկերի, միջբանկային ավանդների, ֆակտորինգի, լիզինգի և ռեպո համաձայնագրերի գումարներն ըստ պայմանագրային ժամկետների: Առանձին տողերով ցույց են տրվում վարկերը՝ առանց միջբանկային վարկերի: Միջբանկային վարկերը, միջբանկային ավանդները, միջբանկային ֆակտորինգը, միջբանկային լիզինգը և միջբանկային ռեպո համաձայնագրերը ցույց են տրվում հաջորդ տողում:

«Երկարաձգված ակտիվներ» տողում ցույց են տրվում բանկի ընդհանուր վարկերի, միջբանկային ավանդների, ֆակտորինգի, լիզինգի և ռեպո համաձայնագրերի գումարներն ըստ փաստացի (այլ ոչ թե պայմանագրային) երկարաձգված օրերի՝ համապատասխան սյունակում: Ընդ որում, եթե ակտիվը երկարաձգվել է մի քանի անգամ, ապա հաշվի է առնվում ընդհանուր երկարաձգումը: Օրինակ՝ եթե ակտիվը երկարաձգվել է 3 անգամ՝ 40-ական օրով, ապա վարկի գումարը ցույց է տրվում «91-180 օր» սյունակում: Եթե ակտիվի մարման ժամկետը երկարաձգվել է նախքան մարման սկզբնական ժամկետի ավարտը, ապա երկարաձգման օրվանից ակտիվը պետք է համարել երկարաձգված՝ արտացոլելով 1.2 (երկարաձգված ակտիվներ) տողերում: Առանձին տողերով ցույց են տրվում վարկերը՝ առանց միջբանկային վարկերի: Միջբանկային վարկերը, միջբանկային ավանդները, միջբանկային ֆակտորինգը, միջբանկային լիզինգը և միջբանկային ռեպո համաձայնագրերը ցույց են տրվում հաջորդ տողում:

«Ժամկետանց ակտիվներ» տողում ցույց են տրվում բանկի ժամկետանց վարկերի, միջբանկային ավանդների, ֆակտորինգի, լիզինգի և ռեպո համաձայնագրերի գումարներն ըստ ժամկետանց և փաստացի երկարաձգված օրերի հանրագումարի՝ համապատասխան սյունակներում: Օրինակ՝ եթե ակտիվը երկարաձգված էր 80 օր, և հաշվետվության ներկայացման օրը ժամկետանց է արդեն 60 օր, ապա գումարը ցույց է տրվում տողի «91-ից 180 օր» սյունակում: Առանձին տողերով ցույց են տրվում վարկերը՝ առանց միջբանկային վարկերի: Միջբանկային վարկերը, միջբանկային ավանդները, միջբանկային ֆակտորինգը, միջբանկային լիզինգը և միջբանկային ռեպո համաձայնագրերը ցույց են տրվում հաջորդ տողում: Միևնույն ակտիվը ցույց է տրվում նշված երեք տողերից մեկում (այսինքն՝ եթե ակտիվն արդեն երկարաձգվել կամ ժամկետանց է, ապա այն ցույց է տրվում համապատասխան տողում): Ընդ որում, «1. Ընդամենը վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր» տողի վերջին երկու սյունակների թվերը պետք է հավասար լինեն 1.1, 1.2 և 1.3 տողերի «Ընդամենը» սյունակի համապատասխան թվերի հանրագումարին:

«2. Ոչ ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր» տողում նշվում է ոչ ռեզիդենտներին տրամադրված բոլոր վերոնշյալ ակտիվների գումարը, և լրացվում են միայն աղյուսակի վերջին երկու «Ընդամենը» սյունակները: 2.1, 2.2 և 2.3 տողերում նշվում են ոչ ռեզիդենտներին տրամադրված ակտիվներն ըստ համապատասխան դասակարգման: Այդ տողերը լրացվում են նույն սկզբունքով, ինչ որ 1.1, 1.2 և 1.3 տողերը:

«3. Ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր ըստ ճյուղերի» տողի ենթակետերը լրացվում են համաձայն պարտապանի ճյուղային պատկանելիության և պայմանագրերում նշված սկզբնական ժամկետների՝ գումարած երկարաձգված և ժամկետանց օրերը: Օրինակ՝ եթե ակտիվը տրամադրվել է գյուղատնտեսությանը 150 օր սկզբնական ժամկետով, գումարը գրանցվում է 3.2 տողում, «91-ից 180 օր» սյունակում: Եթե տվյալ ակտիվը երկարաձգվում է 180 օրով, գումարը տեղափոխվում է «271 օրից 1 տարի» սյունակ, իսկ 40 օր ժամկետանց դառնալու դեպքում՝ «1 տարուց ավելի» սյունակ: Երկարաձգված օրերի հաշվարկը կատարվում է հաշվետվության «1. Ընդամենը վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր» մասի երկարաձգված տողի լրացման սկզբունքի համաձայն: Ընդ որում, «3. Ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր ըստ ճյուղերի» տողում լրացվում են միայն վերջին երկու սյունակները (ընդամենը), իսկ «3.1 Արդյունաբերություն» տողի բոլոր սյունակների թվերը հավասար են այդ ենթաբաժնի բոլոր ենթակետերի թվերի հանրագումարին: «Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ» տողում ընդգրկվում են ռեստորանները, սրճարանները, հյուրանոցները, լվացքատները, ժամանցի բոլոր վայրերն ու սպասարկման բոլոր այլ գործունեությունների մեջ ընդգրկված սուբյեկտները: «Ֆինանսական հատված» տողում ընդգրկվում են բանկերին, վարկային կազմակերպություններին, ապահովագրական ընկերություններին, գրավատներին, արժութային դիլերներին և այլ բրոքերային ու դիլերային կազմակերպություններին տրված միջոցները: Իսկ սպառողական վարկեր են համարվում ֆիզիկական անձանց տրված այն վարկերը, որոնք օգտագործվում են սպառողական ծախսերի ֆինանսավորման համար, այդ թվում՝ ապրանքների ապառիկ վաճառքի վարկավորումը: «Տնտեսության այլ ճյուղեր» տողում արտացոլվում են բոլոր այն միջոցները, որոնք չեն արտացոլվել վերը նշված ճյուղային դասակարգման մեջ:

Աղյուսակի 12-րդ սյունակի բոլոր տողերում թվերը պետք է հավասար լինեն 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ սյունակների համապատասխան տողերի թվերի հանրագումարին:

Աղյուսակի 13-րդ սյունակի բոլոր տողերում թվերը պետք է հավասար լինեն 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ սյունակների համապատասխան տողերի թվերի հանրագումարին:

«II. Վարկերի, դեբիտորական պարտքերի և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների դիմաց հաշվարկվող պահուստների չափը» աղյուսակում լրացվում են տրված վարկերը, միջբանկային ավանդները, դեբիտորական պարտքերը, վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածները և վերջիններիս գծով ձևավորված պահուստները: «II. Վարկերի, դեբիտորական պարտքերի և

վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների դիմաց հաշվարկվող պահուստների չափը» և «III. Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի չափը» աղյուսակներում վարկերի, միջբանկային ավանդների, դեբիտորական պարտքերի, վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների և արժեթղթերի դասերի հաշվառումը ու դրանց գծով պահուստների ձևավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին» և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1998 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 188 որոշմամբ ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 1998 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 351 հրամանով համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգին» համապատասխան:

Երկրորդ էջը լրացվում է հետևյալ կերպ.

«IV. Չաշխատող և հետհաշվեկշռ դուրս գրված ակտիվներ՝ վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ՝ ըստ ճյուղերի» աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ.

Հաշվետվության «ռեզիդենտ» բաժնի տողերը և տողերի ենթակետերը լրացվում են համաձայն պարտապանի ճյուղային պատկանելիության: «Չաշխատող ակտիվներ» սյուներում արտացոլվում են չաշխատող դասակարգված վարկերը, ավանդները, ֆակտորինգը, լիզինգը: «Հետհաշվեկշռ դուրս գրված ակտիվներ» սյուներում լրացվում են հետհաշվեկշռ դուրս գրված վարկերը, ավանդները, ֆակտորինգը, լիզինգը: «Հետհաշվեկշռային մնացորդն ամսվա սկզբին» և «Հետհաշվեկշռային մնացորդն ամսվա վերջին» սյուներում լրացվում են համապատասխան միջոցները հաշվետու ժամանակաշրջանի սկզբում կամ վերջում: «Ամսվա ընթացքում հետհաշվեկշռ դուրս գրված ակտիվներ» սյունակում արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանում հետհաշվեկշռ դուրս գրված համապատասխան միջոցները, իսկ «Ամսվա ընթացքում հետհաշվեկշռ դուրս գրված ակտիվների վերադարձ» սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում պարտապանի կողմից վերադարձված կամ մարված միջոցները:

11. Թիվ 7 «Արտարժույթի տնօրինման նորմատիվի վերաբերյալ» հաշվետվության մեջ լրացվում են «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին» և «Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը» սյունակները:

Առաջին աղյուսակում արտարժութային դիրքերի հաշվարկը կատարվում է՝ ներառյալ համապատասխան արժույթների գծով ածանցյալ գործիքները, իսկ երկրորդում՝ առանց ածանցյալ գործիքների:

3-րդ՝ «I խումբ արտարժութային դիրք» և 4-րդ՝ «II խումբ արտարժութային դիրք» սյունակները լրացնելիս արտարժույթը խմբավորվում է համաձայն Կանոնակարգ 2-ով սահմանված արտարժութային խմբերի (երբ արտարժութային պարտավորությունները գերազանցում են ակտիվները («կարճ» դիրք), 3 և 4 սյունակներում նշված մեծությունները տրվում են բացասական նշանով):

5-րդ՝ «Համախառն արտարժութային դիրք» և 6-րդ՝ «II խումբ արտարժութային դիրք» սյունակներում լրացվում են Կանոնակարգ 2-ով սահմանված արտարժույթի տնօրինման նորմատիվի առավելագույն սահմանաչափերը:

Արտարժութային անավարտ ժամկետային գործարքները (հետհաշվեկշռային մասով) հաշվետվության մեջ պետք է գրանցվեն գործարքի կնքման օրվա՝ Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով:

12. Թիվ 8 հաշվետվությունը լրացվում է տեղաբաշխված և ներգրավված միջոցների համար՝ հիմք ընդունելով նրանց ծախսատարությունը և եկամտաբերությունը:

Հաշվետվությունը բաղկացած է 2 էջից:

Առաջին էջը լրացվում է ամսվա համար միջին օրական կտրվածքով: Միջին օրական հաշվարկում ոչ աշխատանքային օրերի տվյալների փոխարեն լրացվում են նախորդ աշխատանքային օրվա տվյալները: Երկրորդ էջը լրացվում է ամսվա վերջի օրվա դրությամբ:

«Ներգրավված միջոցներ» բաժնի համապատասխան տողերում ընգրկվում են այն պարտավորությունները, որոնց դիմաց տվյալ ամսվա ընթացքում փաստացի վճարումներ են կատարվել կամ հաշվեգրվել: Կրեդիտորական պարտքերը տվյալ բաժնի տողերում չեն ընգրկվում:

«Ներգրավված միջոցներ» բաժնի սյուներում միջոցները ներառվում են ըստ ծագման և արտարժութային պատկանելիության: Օրինակ՝ արտասահմանյան բանկերից ներգրավված ԱՄՆ դոլարով վարկերը ընգրկվում են «Ոչ ռեզիդենտներից» սյունակի «փոխարկելի արտարժույթ» ենթասյունակում: Ընդ որում, երկրորդ էջում միջոցները տարանջատվում են նաև ըստ ժամկետայնության՝ «ցպահանջ» և «ժամկետային»:

Առաջին էջում «Բանկերի թղթակցային հաշիվներ» տողում լրացվում է թղթակցային հաշիվներում հաշվառվող միջոցների միջին օրական գումարը, որոնց դիմաց տվյալ ամսում տոկոսներ են հաշվեգրվել

կամ փաստացի վճարվել՝ ներառյալ օվերնայթների դիմաց տոկոսները: Երկրորդ էջի նույն տողում լրացվում են թղթակցային հաշիվներում հաշվառվող այն գումարները, որոնց դիմաց ամսվա վերջին օրը տոկոսներ են հաշվեգրվել կամ փաստացի վճարվել՝ ներառյալ օվերնայթների դիմաց տոկոսները:

«Կենտրոնական բանկից ներգրաված միջոցներ» բաժնում լրացվում են Կենտրոնական բանկից ստացված վարկերի և օվերդրաֆտների գումարները:

«Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ և հաշիվներ» տողում լրացվում են ֆիզիկական անձանցից ներգրաված բոլոր տեսակի ցպահանջ ավանդների և հաշիվների գումարները:

«Իրավաբանական անձանց և հիմնարկների ցպահանջ ավանդներ և հաշիվներ» տողում լրացվում են իրավաբանական անձանց և հիմնարկներից ներգրաված բոլոր տեսակի ցպահանջ ավանդների և հաշիվների գումարները:

«Այլ ծախսատար պարտավորություններ» տողում լրացվում են այն բոլոր պարտավորությունները, որոնց գծով, համաձայն պայմանագրի, տոկոսներ են հաշվեգրվել կամ փաստացի վճարվել:

«Տեղաբաշխված միջոցներ» բաժնի համապատասխան տողերում ընդգրկվում են այն ակտիվները, որոնց դիմաց տվյալ ամսվա ընթացքում փաստացի վճարումներ են ստացվել կամ հաշվեգրվել:

«Տեղաբաշխված միջոցներ» բաժնի սյուներում միջոցները ներառվում են ըստ ծագման և արտարժութային պատկանելիության: Օրինակ՝ արտասահմանյան բանկերում տեղաբաշխված ԱՄՆ դոլարով ավանդները ընգրկվում են «Ոչ ռեզիդենտներին» սյունակի «փոխարկելի արտարժույթ» ենթասյունակում: Ընդ որում, երկրորդ էջում միջոցները տարանջատվում են նաև ըստ ժամկետայնության՝ «ցպահանջ» և «ժամկետային»:

Առաջին էջում «Բանկերի թղթակցային հաշիվներ» տողում լրացվում է թղթակցային հաշիվներում հաշվառվող միջոցների միջին օրական գումարը, որոնց դիմաց տվյալ ամսում տոկոսներ են հաշվեգրվել կամ փաստացի ստացվել՝ ներառյալ օվերնայթների դիմաց տոկոսները: Երկրորդ էջի նույն տողում լրացվում են թղթակցային հաշիվներում հաշվառվող այն գումարները, որոնց դիմաց ամսվա վերջին օրը տոկոսներ են հաշվեգրվել կամ փաստացի ստացվել՝ ներառյալ օվերնայթների դիմաց տոկոսները:

Առաջին էջում «Պահանջներ Կենտրոնական բանկի նկատմամբ» տողում ընդգրկվում են Կենտրոնական բանկում թղթակցային հաշիվների պահուստավորման միջին օրական գումարը (պարտադիր պահուստավորման նորմատիվի խախտման դեպքում միջին ամսական հաշվարկում ընդգրկվում է տվյալ 14-օրյակում փաստացի պահուստավորված գումարների միջինը), Կենտրոնական բանկում ներդրված ավանդների և կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշվի միջին օրական գումարները: Ընդ որում, Կենտրոնական բանկի նկատմամբ ընդհանուր պահանջներում ընդգրկվող պարտադիր պահուստավորման գումարը հաշվարկվում է ըստ օրերի միջին կշռված՝ հիմք ընդունելով 14-օրյակների միջին օրական ցուցանիշները: Օրինակ՝ եթե առաջին 14-օրյակը վերջանում է հունվարի 2-ին, երկրորդը՝ հունվարի 16-ին, երրորդը՝ հունվարի 30-ին, իսկ չորրորդը՝ փետրվարի 13-ին, ապա հունվար ամսվա պարտադիր պահուստավորման միջին օրական գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$RR = \frac{2 \times I + (16 - 2) \times II + (30 - 16) \times III + (31 - 30) \times IIII}{31}$$

որտեղ, ***RR*** - պարտադիր պահուստավորման ամսական կտրվածքով միջին օրական գումար
I - առաջին 14-օրյակի պահուստավորման ենթակա միջին օրական գումար
II - երկրորդ 14-օրյակի պահուստավորման ենթակա միջին օրական գումար
III - երրորդ 14-օրյակի պահուստավորման ենթակա միջին օրական գումար
IIII - չորրորդ 14-օրյակի պահուստավորման ենթակա միջին օրական գումար

Երկրորդ էջում Կենտրոնական բանկի նկատմամբ ընդհանուր պահանջներում ընգրկվում է պարտադիր պահուստավորման այն 14-օրյակի միջին օրական գումարը, որի միջակայքում ընկնում է ամսվա վերջին օրը (վերոնշյալ օրինակից՝ //// ցուցանիշը), տվյալ օրվա դրությամբ Կենտրոնական բանկում ներդրված ավանդների և կանոնադրական կապիտալի համալրման կուտակման հաշվում ներդրված գումարները:

«Վարկեր ֆիզիկական անձանց» տողում լրացվում են ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը՝ ներառյալ աշխատակիցներին և բանկի հետ կապված ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը, վարկային քարտերով տրամադրված վարկերը և օվերդրաֆտները: Տվյալ տողում ընդգրկվում են նաև չաշխատող վարկերը:

«Վարկեր հիմնարկներին և իրավաբանական անձանց» տողում լրացվում են հիմնարկներին և իրավաբանական անձանց տրամադրված վարկերը՝ ներառյալ բանկի հետ կապված հիմնարկներին և իրավաբանական անձանց տրամադրված վարկերը, վարկային քարտերով տրամադրված վարկերը և օվերդրաֆտները: Տվյալ տողում ընդգրկվում են նաև չաշխատող վարկերը:

«Ռեպո համաձայնագրեր» տողում լրացվում են Կենտրոնական բանկի, բանկերի, այլ ֆինանսական կազմակերպությունների, իրավաբանական անձանց, հիմնարկների և ֆիզիկական անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրերը:

«Ֆակտորինգ» տողում լրացվում են բոլոր տեսակի ֆակտորինգային հոդվածները՝ հաշվեկշռային արժեքով:

«Պետական արժեթղթեր» տողում լրացվում են բոլոր տեսակի պետական արժեթղթերը հաշվեկշռային արժեքով՝ ներառյալ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված և ռեպո համաձայնագրերով վաճառված պետական արժեթղթերը:

«Այլ արժեթղթեր» տողում լրացվում են ոչ պետական արժեթղթերը՝ հաշվեկշռային արժեքով: Սույն հաշվետվության իմաստով՝ այլ արժեթուղթ է համարվում նաև այլ անձանց կանոնադրական կապիտալում փայամասնակցությունները:

«Այլ եկամտաբեր ակտիվներ» տողում լրացվում են այն բոլոր ակտիվները, որոնց գծով, համաձայն պայմանագրի, տոկոսներ են հաշվեգրվել կամ փաստացի ստացվել:

13. Թիվ 9 հաշվետվությունը լրացվում է ըստ ակտիվների և պարտավորությունների մարմանը մնացած ժամկետների:

Այն ակտիվները, որոնք ցպահանջ չեն և չունեն հստակ սահմանված մարման ժամկետներ, համարվում են անժամկետ և արտացոլվում են «Անժամկետ» սյունակում:

Թիվ 9 հաշվետվության մեջ ակտիվների կազմում չեն ընդգրկվում հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները, վերջիններիս գծով կատարված կապիտալ ներդրումները, արագամաշ առարկաները, ինչպես նաև հետագայում ծախսերով ձևակերպման ենթակա կանխավճարները:

«Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ» տողում լրացվում են կանխիկ դրամական միջոցները և վճարային փաստաթղթերը (կանխիկ դրամը դրամարկղում, կանխիկ դրամը ճանապարհին, կանխիկ դրամը բանկոմատներում, կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը), թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորները և թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորները ճանապարհին: Ոսկու ոչ ստանդարտացված ձուլակտորները, Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ չհաստատված վճարային քարտերը հաշվետվության մեջ չեն ընդգրկվում:

«Պահանջներ Կենտրոնական բանկի նկատմամբ» տողում լրացվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկում բացված թղթակցային հաշիվների միջոցները, տեղաբաշխված ավանդները, կանոնադրական կապիտալի համալրման նպատակով Կենտրոնական բանկում միջոցները և այլ պահանջները Կենտրոնական բանկի նկատմամբ:

«Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր» տողում արտացոլվում են առևտրային նպատակով պահվող, վաճառքի համար մատչելի և մինչև մարման ժամկետը պահվող Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական մուրհակների: Ընդ որում, առևտրային նպատակով պահվող, վաճառքի համար մատչելի պետական կարճաժամկետ պարտատոմսերը արտացոլվում են հաշվետվության «ցպահանջ» սյունակում: Առանձին տողում արտացոլվում են Հայաստանի Հանրապետության պետական մուրհակները:

«Պահանջներ Հայաստանի Հանրապետության Կառավարության նկատմամբ» տողում արտացոլվում են բյուջեի նկատմամբ դեբիտորական պարտքերը, կանխավճարները բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով, հետաձգված հարկային ակտիվները: Ընդ որում, կանխավճարներն արտացոլվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հարկերի վճարման վերջին ժամկետի լրանալուն մնացած օրերի քանակին համապատասխանող սյունակում:

Հայաստանի Հանրապետության և այլ երկրների ոչ պետական արժեթղթերը, վարկային ներդրումները, միջբանկային ավանդները, ֆակտորինգի, լիզինգի, ակրեդիտիվի և երաշխավորությունների, հավատարմագրային գործառնությունների գծով ստացվելիք գումարները, ստացվելիք այլ գումարները, ռեզիդենտների և դեբիտորական պարտքերն ընդգրկվում են ըստ պայմանագրի կողմ հանդիսացող հաճախորդի պատկանելիության համապատասխան տողերում՝ պահանջներ բանկերի, ֆիզիկական անձանց, ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտների, իրավաբանական անձանց և հիմնարկների, այլ ֆինանսական կազմակերպությունների համար նախատեսված տողերում:

«Պահանջներ Հայաստանի Հանրապետության բանկերի նկատմամբ» տողում լրացվում են Հայաստանի Հանրապետության բանկերում բացված թղթակցային «նոստրո» հաշիվների միջոցները, Հայաստանի Հանրապետության միջբանկային ավանդներն ու վարկերը և այլ պահանջները Հայաստանի Հանրապետության բանկերի նկատմամբ՝ ներառյալ պահանջները ֆակտորինգի, լիզինգի, ակրեդիտիվների և երաշխավորությունների գծով, հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով ստացվելիք գումարները, նրանց կողմից թողարկված արժեթղթերը:

«Այլ պահանջներ» տողում արտացոլվում են միայն Կենտրոնական բանկի կողմից թողարկված հուշադրամները (անվանական արժեքով), առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի հեջավորման ածանցյալ գործիքները, ստացվելիք շահաբաժինները, ներդրումները այլ անձանց կանոնադրական կապիտալներում, համատեղ վերահսկող միավորներում և այլ պահանջներ:

Այն ակտիվները (օրինակ՝ պետական գանձապետական արժեթղթեր, ֆակտորինգ, ֆինանսական լիզինգ և այլն), որոնք հաշվեկշռում հաշվառվում են զեղչատոկոսով կամ հավելավճարով, այս հաշվետվության մեջ ընդգրկվում են հաշվեկշռային արժեքով՝ հաշվի առած զեղչատոկոսը կամ հավելավճարը, ինչպես նաև համապատասխան ճշգրտման հաշիվները:

Պարտավորությունների «ժամկետանց» սյունակը լրացվում է միայն այն պարտավորությունների մասով, որոնք, բացառությամբ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում գտնվողների, չեն կատարվել պարտավորությամբ սահմանված ժամկետում:

Պարտավորությունների «ցպահանջ» սյունակում լրացվում են հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող ցպահանջ, իսկ «Անժամկետ» սյունակում՝ մարման սահմանված ժամկետ չունեցող միջոցները: Ընդ որում, դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում գտնվող գործերով պարտավորությունները համարվում են ցպահանջ և լրացվում են «ցպահանջ» սյունակում:

«Պարտավորություններ Կենտրոնական բանկի նկատմամբ» տողում արտացոլվում են Կենտրոնական բանկից ներգրավված բոլոր միջոցները, պարտավորություններն ավանդների ապահովագրման գծով:

«Պարտավորություններ կառավարության նկատմամբ» տողում արտացոլվում են պարտավորությունները Հայաստանի Հանրապետության Կառավարության նկատմամբ, կրեդիտորական պարտքերը բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով, հետաձգված հարկային պարտավորությունները:

«Պարտավորություններ բանկերի կողմից թողարկված արժեթղթերի գծով» տողում արտացոլվում են բանկի կողմից թողարկված արժեթղթերը:

«Պարտավորությունների ժամկետայնության վերաբերյալ» բաժնում ներգրավված վարկերը, ավանդները, հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով վճարվելիք գումարները, ֆինանսական լիզինգի գծով վճարվելիք գումարները ընդգրկվում են ըստ պայմանագրի կողմ հանդիսացող հաճախորդի պատկանելիության՝ համապատասխան տողերում՝ «Պարտավորություններ բանկերի նկատմամբ», «Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ», «Այլ պարտավորություններ ֆիզիկական անձանց նկատմամբ», «Այլ պարտավորություններ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ» կամ «Այլ պարտավորություններ իրավաբանական անձանց և հիմնարկների նկատմամբ» տողերում:

«Այլ պարտավորություններ» տողում արտացոլվում են՝ հաշվեկշռային առևտրային նպատակով պահվող և հեջավորման ածանցյալ գործիքները, վճարման ենթակա շահաբաժինները, տարանցիկ հաշիվները, վճարային փաստաթղթերի գծով հաշվարկային պարտավորությունները, կրեդիտորական պարտավորություններն ու այլ պարտավորությունները:

«Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, անավարտ ժամկետային գործառնություններ» տողում արտացոլվում են պարտավորությունները երաշխավորությունների, վճարային փաստաթղթերի և հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների գծով:

Արտարժույթի խմբավորումը կատարվում է համաձայն Կանոնակարգ 2-ով սահմանված արտարժութային խմբերի: Հաշվետվության I և II խմբերի արտարժույթներով բաժիններում չեն արտացոլվում «Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, անավարտ ժամկետային գործառնություններ» տողում ներառվող միջոցները: «I խմբի արտարժույթով» և «II խմբի արտարժույթով» տողերում հաշվի են առնվում Կանոնակարգ 2-ի համաձայն արտարժույթի տնօրինման նորմատիվի հաշվարկի մեջ ընդգրկվող հետհաշվեկշռային անավարտ գործարքների նկատմամբ պարտավորությունները՝ ըստ գործարքի կատարման ժամկետների, համապատասխան սյունակներում:

«Փոփոխվող տոկոսադրույքներով» տողերում լրացվում են այն միջոցները, որոնք ներգրավվել կամ տեղաբաշխվել են ոչ ֆիքսված տոկոսադրույքներով (այսինքն՝ այդ միջոցների տոկոսադրույքները վերանայվում են շուկայական տոկոսադրույքների ցանկացած փոփոխության դեպքում):

«Փոփոխվող տոկոսադրույքներով» տողերում միջոցները լրացվում են ըստ տոկոսադրույքների վերանայմանը մնացած ժամկետների, այլ ոչ թե ակտիվի կամ պարտավորության մարմանը մնացած ժամկետների:

Օրինակ 1. եթե բանկը ներգրավել է մինչև 5 տարի մարման ժամկետով ավանդ, որի տոկոսադրույքները վերանայվելու են յուրաքանչյուր 3 ամիսը մեկ, ապա հաշվետվության «Փոփոխվող տոկոսադրույքներով» տողում այդ ավանդի գումարը պետք է լրացվի «91-120 օր» սյունակում, իսկ հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում նույն ավանդի գումարը կարտացոլվի «61-90 օր» սյունակում:

Օրինակ 2. եթե բանկը ներգրավել է մինչև 3 տարի մարման ժամկետով ավանդ, որի տոկոսադրույքները վերանայվելու են շուկայի ցանկացած փոփոխության դեպքում, ապա հաշվետվության «Փոփոխվող տոկոսադրույքներով» տողում այդ ավանդի գումարը պետք է լրացվի «Ցպահանջ» սյունակում:

«Ֆիքսված տոկոսադրույքներով» տողերում լրացվում են այն միջոցները, որոնք ներգրավվել և տեղաբաշխվել են ֆիքսված տոկոսադրույքներով: Ակտիվները և պարտավորությունները արտացոլվում են ըստ մարմանը մնացած ժամկետների:

«Անտոկոս» տողերում լրացվում են այն ֆիքսված տոկոսադրույքներով միջոցները, որոնք ներգրավվել կամ տեղաբաշխվել են առանց տոկոսների վճարման (ստացման) պայմանի:

Թիվ 9 հաշվետվության մեջ «I խմբի արտարժույթով» և «II խմբի արտարժույթով» տողերում արտացոլվում են վեր նշված բոլոր տողերում ընդգրկվող արտարժույթով, ինչպես նաև արտարժութային ռիսկ

պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների գումարները, բացառությամբ «Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, անավարտ ժամկետային գործառնություններ» տողի գումարի, սակայն ընդգրկելով անավարտ ժամկետային գործարքների գումարը: «Փոփոխվող», «Ֆիքսված» և «Անտոկոս» տողերի գումարները պետք է հավասար լինեն վերը նշված բոլոր տողերի համրագումարին, բացառությամբ «Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, անավարտ ժամկետային գործառնություններ» (Պարտավորությունների ժամկետայնության վերաբերյալ բաժնում), «Հաշվարկված վճարվելիք տոկոսներ» և «Հաշվարկված ստացվելիք տոկոսներ» տողերի գումարի:

14. Թիվ 10 հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր ամիս: Կանոնադրական կապիտալի փոփոխման դեպքում «ամսաթիվ» մասում նշվում է կանոնադրական կապիտալի համալրման օրը: Ամսական հաշվետվության ներկայացման ժամանակ «ամսաթիվ» մասում նշվում է հաշվետու ժամանակաշրջանի/ամսվա/ վերջին օրը: «Բանկի կազմակերպական-իրավական կարգավիճակը» մասում նշվում է, թե բանկը բաժնետիրական, սահմանափակ պատասխանատվությամբ կամ կոոպերատիվ ընկերություն է:

Թիվ 10 հաշվետվությունը լրացվում է.

ա) Բաց բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկերի կողմից՝ 1% և ավելի բաժնեմաս ունեցող բաժնետերերի գծով: Առաջին աղյուսակում մնացած բաժնետերերի բաժնեմասը լրացվում է երկու տողով, ընդ որում, ռեզիդենտների մասնակցությունը լրացվում է առաջին տողով, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ երկրորդ տողով:

բ) Փակ բաժնետիրական, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող և կոոպերատիվ բանկերի բոլոր փայատերերի (բաժնետերերի, անդամների) գծով:

Եթե մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա «Սեփականության ձևը» սյունակում անհրաժեշտ է նշել «ֆիզիկական անձ», պարտապանի բաժնեմասերի 50%-ից ավելին պետությանը պատկանելու դեպքում՝ «պետական մասնակցությամբ», մնացած դեպքերում՝ «ոչ պետական»:

«Բաժնետոմսի տեսակը (սովորական, արտոնյալ)» սյունակը լրացվում է միայն բաժնետիրական ընկերությունների համար «Սովորական» կամ «Արտոնյալ» բառերով՝ կախված բաժնետոմսի տեսակից (սահմանափակ պատասխանատվությամբ (այդ թվում՝ կոոպերատիվ)) բանկերի համար «Բաժնետոմսի տեսակը (սովորական, արտոնյալ)» սյունակը չի լրացվում): Բաժնետիրական ընկերությունների համար «Բաժնետոմսերի դեպոզիտարիայում գրանցման օրը/ Կենտրոնական բանկի գրանցամատյանում գրառում կատարելու օրը» սյունակում լրացվում է բաժնետոմսերի դեպոզիտարիայում կամ բանկի բաժնետերերի ռեեստրում գրանցման օրը, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ (այդ թվում՝ կոոպերատիվ) բանկերի համար՝ Կենտրոնական բանկի գրանցամատյանում գրառում կատարելու օրը: «Ռեզիդենտ (ոչ ռեզիդենտ)» սյունակը լրացվում է «Ռեզիդենտ» կամ «Ոչ ռեզիդենտ» բառերով՝ կախված մասնակցի ռեզիդենտությունից: «Ռեզիդենտ» և «ոչ ռեզիդենտ» տերմինների սահմանումները տրված են Կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի մայիսի 14-ի թիվ 173 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և բանկային վիճակագրության ձեռնարկում»: Բանկը պարտավոր է կանոնադրական կապիտալում կամ բաժնետերերի կազմում փոփոխություններ չլինելու դեպքում հաշվետվություն ներկայացնելու փոխարեն յուրաքանչյուր ամիս առանձին գրությամբ հայտնել այդ մասին:

15. Թիվ 11 հաշվետվությունում ներկայացվում են Կանոնակարգ 2-ով սահմանված նորմատիվային ընդհանուր կապիտալի նվազագույն չափի կազմի մեջ մտնող և պակասեցվող տարրերի մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում, այդ տարրերի կրած փոփոխությունները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում և նորմատիվային ընդհանուր կապիտալի նվազագույն չափի կազմի մեջ մտնող և պակասեցվող տարրերի մեծությունը ժամանակաշրջանի վերջում: «Նախորդ ժամանակաշրջան» սյունակում լրացվում են նախորդ եռամսյակի վերջին օրվա տվյալները, իսկ տարեկան հաշվետվության մեջ՝ նախորդ տարվա վերջին օրվա տվյալները:

16. Թիվ 12 հաշվետվությունը լրացվում է դրամական հոսքի հաշվարկման ուղղակի մեթոդով: Հաշվետվությունում բանկի կողմից ստացված կանխիկ դրամի հոսքը խմբավորվում է 3 բաժիններում՝ դրամական հոսք գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեությունից:

Առաջին բաժնում (դրամական զուտ հոսքեր գործառնական գործունեությունից) արտացոլվում են բանկի հիմնական գործունեության հետ կապված, ինչպես նաև ստացված եկամուտներով և կատարված ծախսերով պայմանավորված դրամական հոսքերը: Եթե բանկի և հաճախորդի միջև գործարքի արդյունքում տեղի է ունենում միջոցների տրամադրում և, միևնույն ժամանակ, տվյալ միջոցների հաշվին նույն բանկում հաճախորդի հաշվի մնացորդի ավելացում, ապա հաշվետվությունում արվում է երկու գրանցում: Օրինակ՝ եթե տրվել է վարկ, և այդ միջոցների հաշվին տեղի է ունեցել ավանդային հաշվի մնացորդի ավելացում, ապա հաշվետվության մեջ գրանցվում է վարկային ներդրումների ավելացում և, միաժամանակ, ներգրավված ավանդների ավելացում:

Երկրորդ բաժնում (դրամական զուտ հոսքեր՝ ներդրումային գործունեությունից) արտացոլվում է դրամական հոսքը, որը ներառում է մինչև մարման ժամկետը պահվող ժամկետային և անժամկետ արժեթղթերում ներդրումների (բացառությամբ՝ առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերից), բանկերում տեղաբաշխված ավանդների, հիմնական միջոցների և այլ ներդրումային բնույթ կրող ակտիվների շարժը:

Երրորդ բաժնում (դրամական զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից) արտացոլվում են Կենտրոնական բանկից և այլ բանկերից ստացված վարկերի, ստացված այլ փոխառությունների, լիզինգով ստացված միջոցների, բանկի կողմից թողարկված արժեթղթերի, կապիտալի փոփոխությամբ պայմանավորված դրամական հոսքերը:

Դրամական միջոցների հոսքերը, որոնք առաջացել են արտարժույթով կատարված գործառնությունների հետևանքով, պետք է գրանցվեն Հայաստանի Հանրապետության դրամով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով Հայաստանի Հանրապետության դրամի և արտարժույթի միջև դրամական միջոցների հոսքերի օրվա դրությամբ առկա փոխանակման փոխարժեքը: Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների վրա արտացոլվում է դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում՝ տվյալ ժամանակաշրջանի սկզբում և վերջում գոյացած դրամական միջոցների համապատասխանեցման նպատակով: Այդ գումարը ցույց է տրվում գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեության արդյունքում գոյացած դրամական միջոցների հոսքերից առանձին:

«Նախորդ ժամանակաշրջան» սյունակում լրացվում են նախորդ եռամսյակի վերջին օրվա տվյալները, իսկ տարեկան հաշվետվության մեջ՝ նախորդ տարվա վերջին օրվա տվյալները:

Կանխիկ և կանխիկին հավասարեցված զուտ միջոցները բաղկացած են կանխիկ դրամական միջոցներից, Կանոնակարգ 2-ով նախատեսված կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերից, բաղթակից բանկերի զուտ ցպահանջ միջոցներից, բանկի՝ Կենտրոնական բանկում գտնվող թղթակցային հաշվի միջոցներից և Կենտրոնական բանկում տեղաբաշխված ավանդներից: Թղթակից բանկերի զուտ ցպահանջ միջոցներում ընդգրկվում է թղթակցային «նոստրո» հաշիվների (ներառյալ՝ այլ բանկում սառեցված միջոցների) և «լորո» հաշիվների (ներառյալ՝ տվյալ բանկում սառեցված միջոցների) տարբերությունը:

Հաշվետվությանը կից պարտադիր ներկայացվում է ծանոթագրություն ոչ դրամական այն գործառնությունների վերաբերյալ, որոնք կապված չեն դրամական հոսքերի հետ: Այդպիսի գործառնություններ են համարվում, օրինակ, վարկերի մարումը գրավների տնօրինման միջոցով, ակտիվների ձեռքբերումը (վաճառքը) ապառիկ ձևով, բանկի կողմից թողարկված պարտատոմսերի մարումը բաժնետոմսերի թողարկման հաշվին և այլն:

17. Թիվ 13 հաշվետվությունը ներկայացվում է բանկի համար ամփոփ ձևով և ըստ մասնաճյուղերի: Յուրաքանչյուր մասնաճյուղի համար ներկայացվում է առանձին հաշվետվություն Հայաստանի Հանրապետության դրամով դրամարկղային շրջանառության մասին: Թիվ 13 հաշվետվության 3-րդ և 6-րդ տողերում պետք է ընդգրկվեն այլ բանկերից ստացված (բանկերին հանձնված) գումարները: Այս տողերում չեն արտացոլվում տվյալ բանկի ներբանկային գործառնությունները (մայր բանկից մասնաճյուղերին կամ մասնաճյուղից մայր բանկին, նույն բանկի մի մասնաճյուղից մյուս մասնաճյուղին տրված ամրացումները, նրանցից ստացած գումարները և այլն):

Դրամարկղի մնացորդը հաշվետու ամսվա վերջին (հաշվետվության 8-րդ տող) պետք է համապատասխանի «Կանխիկ դրամ դրամարկղում» 1011 և «Կանխիկ դրամ բանկոմատներում (ավտոմատ գանձման սարքեր)» 1013 դրամով հաշվեկշռային հաշիվների հանրագումարին:

18. Թիվ 14 հաշվետվությունը լրացվում է հետևյալ կերպ.

«Խոշոր» փոխառու են համարվում այն անձը և նրա հետ փոխկապակցված անձինք, որոնց՝ բանկի նկատմամբ պարտավորությունների հանրագումարը (ներառյալ՝ մեկ փոխառուին և նրա հետ փոխկապակցված անձանց տրամադրված վարկերը, այդ թվում՝ բանկային հաշվի վարկավորումը, այլ բանկերում ներդրված միջբանկային ավանդները, բոլոր այլ փոխառությունները, ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները, տրամադրված նախավճարները, կանխավճարները, բանկի կողմից մատուցված ծառայության կամ ապրանքի դիմաց տարաժամկետ վճարումները, ակրեդիտիվները, փոխառուի կամ նրա հետ փոխկապակցված անձանց թողարկած արժեթղթերում ներդրումները, ինչպես նաև բանկի նկատմամբ ցանկացած հիմքով ծագած այլ դեբիտորական պարտավորությունները, նրա պարտավորությունների դիմաց տրված երաշխիքներն ու երաշխավորությունները (բացառությամբ՝ բանկի թղթակցային հաշիվների), տվյալ պարտապանի գծով բանկի ստանձնած հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները, այլ բանկերի կողմից տվյալ բանկի դրամական միջոցների հաշվին և դրանցով ապահովված միևնույն անձանց տրամադրված փոխառությունները և (կամ) երաշխիքները (եթե այդ փոխառության վերադարձելիության ռիսկը ստանձնել է տվյալ բանկը), վերոնշյալ պարտավորությունների դիմաց հաշվեգրված տոկոսները և ստացվելիք այլ գումարները գերազանցում են բանկի հաշվետու ամսվա միջին օրական նորմատիվային ընդհանուր կապիտալի 5%-ը:

Եթե փոխառուն ֆիզիկական անձ է, ապա «Սեփականության ձև» սյունակում անհրաժեշտ է նշել «ֆիզիկական անձ», պարտապանի բաժնեմասերի 50%-ից ավելին պետությանը պատկանելու դեպքում՝ «պետական մասնակցությամբ», մնացած դեպքերում՝ «ոչ պետական»:

«Ժամկետային վարկերի գծով ընդհանուր պարտավորությունների գումարը» սյունակում լրացվում են տրված վարկերը, այդ թվում՝ բանկային հաշվի վարկավորումը: «Միջբանկային ավանդներ» սյունակում լրացվում են այլ բանկերում ներդրված ավանդները: Ֆակտորինգային գործառնությունների գծով

առաջացած պարտավորություններն արտացոլվում են «Ժամկետային ֆակտորինգային գործառնությունների գծով պարտավորությունների գումարը» սյունակում, իսկ երաշխիքներն ու երաշխավորությունները, տվյալ պարտապանի գծով բանկի ստանձնած հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները, ակրեդիտիվները՝ «Հետհաշվեկշռում հաշվառված երաշխիքներ և երաշխավորություններ (ակրեդիտիվ)» սյունակում: «Այլ փոխատվություններ» սյունակում լրացվում են վերոնշյալ պարտավորությունների հաշվարկում ընդգրկվող այն պարտավորությունները, որոնք նշված չեն հաշվետվության նախորդ սյունակներում: Երկարաձգված և ժամկետանց պարտավորություններն արտացոլվում են, համապատասխանաբար, «Հաշվեկշռային երկարաձգված պարտավորությունների գումարը» և «Հաշվեկշռային ժամկետանց պարտավորությունների գումարը» սյունակներում (ընդ որում, երկարաձգված միջոցների հաշվարկը կատարվում է համաձայն թիվ 6 հաշվետվությամբ սահմանված սկզբունքի): «Տվյալ փոխառուի հետ փոխկապակցված անձանց ընդհանուր պարտավորությունների գումարը» սյունակում լրացվում են տվյալ փոխառուի հետ փոխկապակցված անձանց՝ բանկի նկատմամբ ընդհանուր պարտավորությունները:

Հաշվետվության վերջին՝ «Գումարը՝ համապատասխան ռիսկի կշռով» սյունակում լրացվում է տվյալ փոխառուի և վերջինիս հետ փոխկապակցված անձանց պարտավորությունների գումարը՝ կանոնակարգ 2-ով սահմանված ռիսկի կշիռներով:

Հաշվետվությունը լրացվում է ըստ «Գումարը՝ համապատասխան ռիսկի կշռով» սյունակի կշիռների՝ նվազող հաջորդականությամբ:

Հաշվետվության 2, 3, 4 սյունակներում բոլոր անվանումները լրացվում են առանց չակերտների ու այլ նշանների, միայն մեծատառերով և հետևյալ տառատեսակներով, օրինակ՝ ÑÁÑ ÀÃÐÎ ÐÎÑÑÈß ÌÎÑÊÂÀ (տառատեսակ՝ Baltica Cyrillic), GENERAL BANK BELGIUM BRUSSELS (տառատեսակ՝ Times Armenian):

19. Թիվ 15 հաշվետվությունը լրացվում է, եթե պարտատիրոջ և նրա հետ փոխկապակցված անձի նկատմամբ բանկի պարտավորությունների հանրագումարը հաշվետու օրվա դրությամբ գերազանցում է բանկի հաշվետու ամսվա միջին օրական ընդհանուր պարտավորությունների 5 %-ը: Այսինքն՝ պարտատիրոջ և նրա հետ փոխկապակցված անձի նկատմամբ պարտավորությունները պետք է համարել մեկ գումար:

Եթե պարտատերը ֆիզիկական անձ է, ապա «Սեփականության ձև» սյունակում անհրաժեշտ է նշել «ֆիզիկական անձ», պարտատիրոջ բաժնեմասերի 50%-ից ավելին պետությանը պատկանելու դեպքում՝ «պետական մասնակցությամբ», մնացած դեպքերում՝ «ոչ պետական»:

«Պարտքի տեսակը» սյունակում անհրաժեշտ է նշել պարտավորության անվանումը (օրինակ՝ ավանդ, վարկ, լիզինգ, ֆակտորինգ, օվերնայթ և այլն):

«Արժույթի տեսակը» (8-րդ սյունակ) սյունակում անհրաժեշտ է նշել արժույթի Ստանդարտների միջազգային կազմակերպության կոդը:

Հաշվետվության մեջ 2-րդ և 3-րդ սյունակները պետք է լրացվեն միայն մեծատառերով և առանց չակերտների:

6-րդ սյունակում անհրաժեշտ է լրացնել պարտավորության ձևավորման ամսաթիվը (ըստ պայմանագրի), ցպահանջ, ընթացիկ հաշիվների համար լրացվում է այն ամսաթիվը, որից սկսած՝ պարտատիրոջ նկատմամբ բանկի բոլոր պարտավորությունների հանրագումարը գերազանցել է հաշվետու ամսվա՝ բանկի միջին օրական ընդհանուր պարտավորությունների 5 %-ը: 7-րդ սյունակում լրացվում է պարտքի պայմանագրով նախատեսված մարման ամսաթիվը, եթե պարտավորությունը ժամկետային է, եթե ոչ, ապա սյունակը չի լրացվում:

«Պարտքի գումարը» սյունակում (9-րդ սյունակ) անհրաժեշտ է լրացնել պարտքի գումարը առանձին պարտքի գծով, 10-րդ սյունակում՝ միայն մեկ պարտատիրոջ նկատմամբ բոլոր տեսակի պարտավորությունների հանրագումարը (ընդ որում, լրացվում է միայն վերջին պարտքի տողին կից վանդակը), իսկ 11-րդ սյունակում՝ տվյալ պարտատիրոջ հետ փոխկապակցված անձանց նկատմամբ բանկի ունեցած պարտավորությունների գումարը (ընդ որում, լրացվում է միայն 10-րդ սյունակում արտացոլված գումարին կից վանդակը): Հաշվետվության սյունակներում բոլոր անվանումները լրացվում են առանց չակերտների, միայն մեծատառերով և հետևյալ տառատեսակներով, օրինակ՝ ÑÁÑ ÀÃÐÎ ÐÎÑÑÈß ÌÎÑÊÂÀ (տառատեսակ՝ Baltica Cyrillic), GENERAL BANK BELGIUM BRUSSELS (տառատեսակ՝ Times Armenian):

20. Թիվ 16 հաշվետվությունում պարտադիր ցույց են տրվում բացված բոլոր թղթակցային հաշիվները՝ անկախ մնացորդի չափից (եթե նույնիսկ թղթակցային հաշվի մնացորդը 0 է): Թիվ 16 հաշվետվության մեջ Կենտրոնական բանկում բացված թղթակցային հաշիվները չեն ընդգրկվում: Եթե բանկի թղթակցային հաշիվները մեկ ուրիշ բանկում արտարժույթի մի քանի տեսակով են (մուլտի), ապա յուրաքանչյուր արժույթով մնացորդը լրացվում է առանձին տողով: «Բանկի կոդը/վարկանիշը» սյունակում ռեզիդենտ բանկերի համար նշվում է սույն կանոնակարգով սահմանված՝ տվյալ բանկի կոդը, իսկ ոչ ռեզիդենտ բանկերի համար՝ տվյալ բանկի վարկանիշը (եթե տվյալ բանկը վարկանիշ չունի, ապա 2-րդ սյունակում դրվում է գծիկ՝ «-»): Թիվ 16 հաշվետվությունը ռեզիդենտ բանկերի մասով լրացվում է ըստ «Մնացորդը (հազար դրամ)» սյունակի հաշվի մնացորդի՝ նվազող հաջորդականությամբ, իսկ ոչ ռեզիդենտ բանկերի

մասով լրացվում է ըստ «Բանկի կոդը/վարկանիշը» սյունակի վարկանիշի՝ նվազող հաջորդականությամբ (եթե տվյալ բանկը վարկանիշ չունի, ապա լրացվում է ոչ ռեզիդենտ բանկերի համար նախատեսված աղյուսակի վերջին տողերում):

Անկախ պետությունների համագործակցության երկրներում գործող թղթակից բանկերի անվանումները լրացվում են ռուսերեն, ընդ որում, «Գտնվելու վայրը» սյունակում գրվում է միայն քաղաքի անունը, օրինակ՝ ÌÎÑÊÂÀ, իսկ այլ երկրներում գործող բանկերի անվանումները՝ անգլերեն:

Հաշվետվության մեջ 1-ին, 2-րդ և 3-րդ սյունակներում բոլոր անվանումները լրացվում են առանց չակերտների, միայն մեծատառերով և հետևյալ տառատեսակներով, օրինակ՝ ÑÁÑ ÀÃÐÎ ÐÎÑÑÈß ÌÎÑÊÂÀ (տառատեսակ՝ Baltica Cyrillic), GENERAL BANK BELGIUM BRUSSELS (տառատեսակ՝ Times Armenian):

21. Թիվ 17 հաշվետվությունը լրացվում է միայն հաշվետու շաբաթվա ընթացքում կնքված նոր ավանդային, վարկային (այդ թվում՝ վարկային, օվերդրաֆտային և քարտերով տրված վարկերը), օվերնայթային, ռեպո համաձայնագրերի, ինչպես նաև նախկինում կնքված պայմանագրերի համաձայն հաշվետու ժամանակաշրջանում ներգրավված կամ տեղաբաշխված միջոցների հիման վրա՝ հազար միավորներով: Երկարաձգված վարկերը (ավանդները) հաշվետվության մեջ չեն ընդգրկվում: Կենտրոնական բանկի հետ կատարված գործարքները հաշվետվության մեջ չեն ընդգրկվում:

«Միջազգային վարկային ծրագրերով» և «Կառավարության երաշխիքով» տողերում արտացոլվող տեղաբաշխված միջոցները չպետք է արտացոլել «Տնտեսվարող սուբյեկտներին», «Ֆիզիկական անձանց», «Ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտներին», «Հայաստանի Հանրապետության բանկերում», «Այլ բանկերում», «Դրամով ռեպո համաձայնագիր» և «Արտարժույթով ռեպո համաձայնագիր» տողերում: Միջազգային վարկային ծրագրերով ներգրավված և տեղաբաշխված գումարները պետք է արտացոլվեն միայն, համապատասխանաբար, «Ներգրավված միջոցներ» բաժնի «Միջազգային վարկային ծրագրերով» կամ «Տեղաբաշխված միջոցներ» բաժնի «Միջազգային վարկային ծրագրերով» տողերում: Ընդ որում, «Միջազգային վարկային ծրագրերով» տողերում արտացոլվում են միջազգային բոլոր վարկային ծրագրերով ներգրավված և տեղաբաշխված միջոցները («Լինսի» հիմնադրամից, Գերմանահայկական հիմնադրամից, «Եվրասիա» վարկային ծրագրից և այլն): Շաբաթվա ընթացքում տրված վարկերի միջին տարեկան տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Մտ = (Վ1 x S1 + Վ2 x S2 +...+ Վm x Sm) / (Վ1 + Վ2 +...+ Վm), որտեղ Վ-ն տրված վարկերի ծավալն է, S-ն՝ տրված վարկերի տարեկան տոկոսները, 1-m-ը՝ տրված վարկերի քանակը:

Ավանդների դիմաց վճարվող միջին տարեկան տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Մտ = (Ա1 x S1 + Ա2 x S2 +...+ Ան x Sn) / (Ա1 + Ա2 +...+ Ան), որտեղ Ա-ն՝ ավանդների ծավալներն է, S -ն՝ ավանդների դիմաց վճարվող տարեկան տոկոսները, 1-n-ը՝ ավանդների քանակը: Չևերը լրացվում են տարեկան տոկոսադրույքներով:

Շաբաթվա ընթացքում կայացած ռեպո գործարքների միջին ռեպո տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Մտ = (Ռ1 x S1 + Ռ2 x S2 +...+ Ռn x Sn) / (Ռ1 + Ռ2 +...+ Ռn), որտեղ Ռ-ն կնքված ռեպո գործարքների ծավալն է, S-ն՝ կնքված ռեպո գործարքների տոկոսադրույքները, 1-n-ը՝ կայացած գործարքների քանակը:

Առանձին աղյուսակում լրացվում են այն բանկերի անվանումները, որոնց հետ իրականացվել են գործարքները՝ նշելով ներգրավված կամ տեղաբաշխված միջոցի ծավալը, ժամկետը և միջին տարեկան տոկոսադրույքը՝ ըստ արժույթի տեսակի, և գործարքի տեսակը (օրինակ՝ օվերնայթ, ավանդ վարկ, ռեպո և այլն):

«Այլ արտարժույթներ» տողերը լրացվում են դրամական արտահայտությամբ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

22. Թիվ 18 հաշվետվությունը բաղկացած է 2 աղյուսակից: Տվյալները լրացվում են միայն հաշվետվության ազատ վանդակներում:

Հաշվետվության I աղյուսակում գրանցվում են բանկի կողմից ոչ ռեզիդենտների հետ իրականացված բոլոր գործառնությունները, իսկ II աղյուսակում՝ միայն ոչ ռեզիդենտներից ներգրաված վարկերի սպասարկման վերաբերյալ տվյալները:

Հաշվետվությունը լրացվում է միլիոն դրամներով, բացառությամբ հաշվետվության II աղյուսակի 5-րդ սյունակի, որը լրացվում է համապատասխան արժույթի միավորով, և գումարը նշվում է ամբողջությամբ:

Յուրաքանչյուր գործառնություն տարանջատվում է ըստ արժույթների. Հայաստանի Հանրապետության դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ռուսական ռուբլի և այլ արտարժույթ:

Հաշվետվության մեջ լրացվող արտարժույթով արտահայտված բոլոր գումարները (բացառությամբ՝ «Կապիտալի արժեթղթեր» բաժնի «Պասիվ» մասում լրացվող տվյալների) վերածվում են դրամի՝ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ համապատասխան արժույթի գործող հաշվարկային փոխարժեքով, բացառությամբ եկամուտների և ծախսերի:

Բոլոր բաժինները, բացառությամբ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց «Շահաբաժիններ» ու «Եկամուտներ և ծախսեր» տողերի, լրացվում են համապատասխան ժամանակաշրջանի վերջին օրվա դրու-

թյամբ հաշվեկշռային մնացորդների տվյալների հիման վրա:

Արտոնյալ բաժնետոմսերի դիմաց «Շահաբաժիններ» ու «Եկամուտներ և ծախսեր» տողերի «Ակտիվ» մասում լրացվում են ստացված շահաբաժինների և եկամուտների, իսկ «Պասիվ» մասում՝ վճարված շահաբաժինների և ծախսերի վերաբերյալ տվյալներ: «Հաշվետու ժամանակաշրջան» սյունակը լրացվում է աճողական տվյալներով՝ տարեսկզբից մինչև հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ ստացված և վճարված արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահաբաժինների ու եկամուտների և ծախսերի չափով (համաձայն թիվ 5 հաշվետվության): «Նախորդ ժամանակաշրջան» սյունակում լրացվում են նախորդ եռամսյակի վերջին օրվա դրությամբ աճողական տվյալները՝ բացառությամբ առաջին եռամսյակի, երբ «նախորդ ժամանակաշրջան» սյունակում համապատասխան տողերում լրացվում են զրոներ:

Ոչ արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժինները լրացվում են փաստացի վճարված (ստացված) շահաբաժինների գումարների չափով (համաձայն թիվ 12 հաշվետվության):

«Կապիտալի արժեթղթեր» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են բանկի կողմից որևէ ոչ ռեզիդենտ կազմակերպության բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի և պորտֆելային ներդրումները, իսկ «Պասիվ» մասում՝ բանկի բաժնետիրական կապիտալում ոչ ռեզիդենտների կողմից կատարված ուղղակի և պորտֆելային ներդրումները: Ընդ որում, «Կապիտալի արժեթղթեր» բաժնի «Պասիվ» մասի տվյալները պետք է համապատասխանեն թիվ 10 հաշվետվության՝ ոչ ռեզիդենտների կողմից բանկում կատարված ներդրումների տվյալներին:

Կապիտալի արժեթղթերի հետ կապված գործարքների բաժանումը «Ուղղակի ներդրումների» և «Պորտֆելային ներդրումների»՝ կատարվում է հետևյալ սկզբունքներով.

Ուղղակի (նշանակալից մասնակցություն) համարվում են այն ներդրումները, որոնց գումարը գերազանցում է կանոնադրական կապիտալի 10%-ը, իսկ պորտֆելային (ոչ նշանակալից մասնակցություն)՝ այն ներդրումները, որոնց գումարը կազմում է կանոնադրական կապիտալի մինչև 10%-ը ներառյալ:

«Պարտքային արժեթղթեր» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտների կողմից թողարկված և բանկի կողմից ձեռք բերված ցանկացած տեսակի պարտքային արժեթղթերի և դրանց հետ կապված ստացվելիք տոկոսների վերաբերյալ տվյալներ, իսկ «Պասիվ» մասում՝ հաշվետու բանկի կողմից թողարկված և ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պարտքային արժեթղթերի և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների վերաբերյալ տվյալներ:

«Կարճաժամկետ» տողում գրանցվում են տվյալներ այն պարտատոմսերի վերաբերյալ, որոնց համար ձեռքբերման պահին մինչև մարումը մնացած ժամկետը չի գերազանցում մեկ տարին ներառյալ, իսկ մնացածը գրանցվում է «Երկարաժամկետ» տողում:

Ժամկետային տարանջատումը ըստ կարճաժամկետ և երկարաժամկետ գործառնությունների՝ տարածվում է նաև «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» և «Ավանդներ» բաժինների վրա:

«Կանխիկ դրամական միջոցներ» բաժնում լրացվում են բանկի կանխիկ արտարժութային միջոցների վերաբերյալ տվյալներ: Ընդ որում, համապատասխան ժամանակաշրջանի ընդհանուր գումարը պետք է հավասար լինի տվյալ եռամսյակի վերջի օրվա դրությամբ բանկի հաշվեկշռի 101 հաշվի գումարին:

«Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժինը լրացվում է հետևյալ կերպ.

ա) Վարկային գծերի և օվերդրաֆտների ծավալները գրանցվում են փաստացի մնացորդի (օգտագործված մասի) չափով:

բ) «Ակտիվ» մասում լրացվում են բանկի կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված զուտ վարկերի (տրված և մարված) և դրանց հետ կապված ստացվելիք տոկոսների գումարները: «Պասիվ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտների կողմից բանկին տրամադրված զուտ վարկերի (տրված և մարված) և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների գումարները, ինչպես նաև ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված ժամկետային ավանդների և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների գումարները: Ընդ որում, այս բաժնում պետք է ներառել նաև ռեպո գործառնությունների ընթացքում առաջացած պահանջներն ու պարտավորությունները:

«Ավանդներ» բաժինը լրացվում է նույն սկզբունքով, որը գործում է «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժնում: «Ավանդներ» բաժնում, բացի ավանդներից, գրանցվում են նաև թղթակցային «նոստրո» և «լորո» հաշիվների ու դրանց հետ կապված ստացվելիք (վճարվելիք) տոկոսների վերաբերյալ տվյալները, ընդ որում, «Պասիվ» մասում չեն լրացվում ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված ավանդները և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսները:

«Ծառայությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են տվյալներ բանկի կողմից ոչ ռեզիդենտներին, իսկ «Պասիվ» մասում՝ ոչ ռեզիդենտների կողմից բանկին մատուցված ծառայությունների (փոխանցումների, հավատարմագրային ծառայությունների, փոխարկումների կամ այլ ծառայությունների) դիմաց ստացվելիք («Ակտիվ») և վճարվելիք («Պասիվ») գումարների վերաբերյալ:

Օրինակ՝ հայկական «Ա» բանկը որևէ ծառայություն է մատուցում իր ոչ ռեզիդենտ հաճախորդին:

Այդ ծառայության համար բանկը գանձում է 3 մլն դրամ, որը վճարվելու է հաճախորդի կողմից ծառայությունը մատուցելուց մեկ ամսվա ընթացքում: Ենթադրենք, ծառայությունը մատուցվում է հաշվետու

եռամսյակում, իսկ վարձը գանձվում է հաջորդ եռամսյակում: Այս դեպքում հաշվետվությունը կլրացվի հետևյալ կերպ.

մլն դրամ		Ակտիվ									
		Նախորդ ժամանակաշրջան					Հաշվետու ժամանակաշրջան				
		ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուսական ռուբլի	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուսական ռուբլի	Այլ արտարժույթ
6	Ծառայությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ						3				
	Եկամուտներ և ծախսեր						3				

Մյուս եռամսյակում, երբ բանկը գանձի ծառայության դիմաց 3 մլն դրամի վճարը, հաշվետվությունը կստանա հետևյալ տեսքը.

մլն դրամ		Ակտիվ									
		Նախորդ ժամանակաշրջան					Հաշվետու ժամանակաշրջան				
		ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուսական ռուբլի	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուսական ռուբլի	Այլ արտարժույթ
6	Ծառայությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ	3									
	Եկամուտներ և ծախսեր	3					3				

«Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ» բաժնում գրանցվում են այն բոլոր գործառնությունները, որոնք տվյալ բանկն իրականացնում է ոչ ռեզիդենտների հետ, և որոնք չեն հանդիսանում վերը նշված գործառնություններից ոչ մեկը: Օրինակ՝ բանկն իրեն պատկանող գույք է վաճառում ոչ ռեզիդենտին, որի դիմաց վճարումը իրականացվելու է երկու ամսից: Ինչպես նախորդ օրինակում, այդ գումարը կընդգրկվի «Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ» բաժնի «Ակտիվ» մասում և «Եկամուտներ և ծախսեր» տողում: Վճարվելուց հետո գումարը կլրացվի միայն «Եկամուտներ և ծախսեր» տողում: «Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ» բաժնում ներառվում են նաև «ՍՎԻՖԹ»-ի անդամավճարները, նույնատիպ այլ գործառնություններ:

Հաշվետվության մեջ, համապատասխան սյունակներում, լրացվում է նաև տեղեկատվություն ակտիվների դուրսգրման և պարտքերի ներման վերաբերյալ: Ընդ որում, այդ տեղեկատվությունը չի վերաբերում «Եկամուտներ և ծախսեր» տողերին, քանի որ վարկերի դուրսգրմանը կամ պարտքի ներմանը վերաբերող եկամուտներն ու ծախսերը պետք է գրանցել համապատասխան գործիքի հետ միասին: Տեղեկատվությունը պետք է ներկայացվի ԱՄՆ դոլարով (յուրաքանչյուր նման գործառնություն՝ այդ օրվա հաշվարկային փոխարժեքով): Ընդ որում, ակտիվի դուրսգրման և վերադարձման, ինչպես նաև վարկերի ներման և վերադարձման հետ կապված գործառնությունները գրանցվում են զուտ տեսքով:

Հաշվետվության I մասի 4-րդ կետի՝ «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժնի «Պասիվ» մասի վերաբերյալ մանրամասն տվյալները հավաքագրվում են սույն հաշվետվության II աղյուսակում: Հաշվետվության II աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ.

2-րդ սյունակում նշվում է վարկ տրամադրող ոչ ռեզիդենտի երկիրը:

3-րդ սյունակում նշվում է վարկ տրամադրող ոչ ռեզիդենտի հատվածի պատկանելիությունը՝ ըստ հետևյալ տառերի հաջորդականության.

ա) Ֆ-ն ընդգրկում է այլ պետությունների կենտրոնական բանկերը, ոչ ռեզիդենտ բանկերը, միջազգային ֆինանսական կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային հիմնադրամները, բորսաները և այլ ոչ բանկային ֆինանսական հաստատությունները,

բ) Պ-ն ընդգրկում է այլ պետությունների կառավարությունները (կենտրոնական և տեղական մակարդակներով),

գ) Ի-ն ընդգրկում է Ֆ-ում և Պ-ում չներառված ոչ ռեզիդենտ կազմակերպությունները (այսինքն՝ պետական մասնակցությամբ ձեռնարկությունները, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ պետական ձեռնարկությունները, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող սուբյեկտները և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները):

4-րդ սյունակում նշվում է տնտեսության այն ճյուղը, որի ֆինանսավորմանն է ուղղվել ներգրավված վարկը: Տնտեսության ճյուղը լրացվում է համաձայն սույն կանոնակարգի թիվ 6 հաշվետվության մեջ նշված տնտեսության ճյուղերի դասակարգման:

5-րդ, 6-րդ սյունակներում նշվում են վարկային պայմանագրում տվյալ արժույթով նշված վարկի գումարը և արժույթի՝ Ստանդարտների միջազգային կազմակերպության կոդը:

7-րդ սյունակում լրացվում է վարկային պայմանագրում նշված վարկի ներգրավման ժամկետը՝ հետևյալ ֆորմատով՝ 25/03/98:

8-րդ լրացվում է վարկային պայմանագրում նշված վարկի մարման ժամկետը՝ հետևյալ ֆորմատով՝ 25/06/06:

9-րդ սյունակում նշվում է վարկի տոկոսադրույքը: Եթե, օրինակ, տոկոսադրույքը կազմում է ԼԻԲՕՐ գումարած 5%, ապա այն լրացվում է «ԼԻԲՕՐ+5»:

10-րդ սյունակում լրացվում է հաշվետու եռամսյակի սկզբի դրությամբ ներգրավված վարկերի հաշվեկշռային մնացորդը:

11-րդ սյունակում նշվում է հաշվետու եռամսյակի ընթացքում ներգրավված վարկի մասնաբաժինը կամ մասնաբաժինները (եթե վարկը տրամադրվում է մի քանի մասնաբաժնով), կամ վարկի ընդհանուր գումարը (եթե վարկը տրամադրվում է ամբողջությամբ):

12-րդ սյունակում լրացվում է հաշվետու եռամսյակում վարկի հիմնական գումարի մարմանն ուղղված վճարումների ծավալը (եթե վարկը մարվում է մի քանի մասնաբաժիններով): Տվյալ եռամսյակում հիմնական գումարի միանվագ մարումը նշվում է ամբողջ ծավալով:

13-րդ սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում վարկի դիմաց հաշվեգրված (վճարվելիք) տոկոսագումարները:

14-րդ սյունակում լրացվում է ներգրավված վարկերի հաշվեկշռային մնացորդը եռամսյակի վերջի դրությամբ:

23. Թիվ 19 (օրական) հաշվետվությունը լրացնում են արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող բանկերը:

«Գործարքի տեսակը» սյունակում լրացվում են գործարքների տեսակները՝ խմբավորված ըստ գործարքի իրականացման վայրի և արտարժույթի տեսակի: «Գործարքի տեսակը» սյունակում լրացվում են արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները երկնիշ կոդերով, որի առաջին նիշը որոշվում է ըստ գործարքի իրականացման վայրի՝ հետևյալ եղանակով.

1. Գործառնություններ միջբանկային շուկայում,
2. Գործառնություններ ֆոնդային բորսայում,
3. Ներբանկային գործառնություններ,
4. Այլ վայրերում:

Երկրորդ նիշը որոշվում է ըստ գործարքի տեսակի.

1. Սփոթ (որոնք հաշվետվությունում արտացոլվում են պայմանագրի կնքման օրը),
2. Ֆորվարդ
3. Ֆյուչերս
4. Սվոպ
5. Օպցիոն

Եթե գործարքի կողմ է հանդիսանում ոչ ռեզիդենտը, ապա երկնիշ կոդի վրա դրվում է աստղանիշ:

Օրինակ՝ 2.3* կոդը բնորոշում է ոչ ռեզիդենտի հետ ֆոնդային բորսայում ֆյուչերսային գործարքը:

«Վայրը» սյունակում լրացվում է գործարքների իրականացման վայրը (բորսա, միջբանկային շուկա, կամ գործակալի գտնվելու վայր):

«Փոխարկվող արժույթներ (գնվող/վաճառվող)» սյունակում լրացվում են փոխարկվող համապատասխան արժույթների Ստանդարտների միջազգային կազմակերպության կոդերը (օրինակ՝ ԱՄՆ-ի դոլար՝ «ՅուԷսԴի», հայկական դրամ՝ «էյէմԴի», անգլիական ֆունտ ստեռլինգ՝ «ՋիԲիՓի» և այլն): Յուրաքանչյուր գործարք լրացվում է՝ ելնելով նրա նպատակից. եթե իրականացվել է արտարժույթի գնման գործարք, ապա «Փոխարկվող արժույթներ (գնվող/վաճառվող)» սյունակի համարիչում նշվում է գնվող արտարժույթի Ստանդարտների միջազգային կազմակերպության կոդը, և լրացվում առքի ծավալն ու առքի միջին փոխարժեքը: Եթե իրականացվել է արտարժույթի վաճառքի գործարք, ապա «Փոխարկվող արժույթներ (գնվող/վաճառվող)» սյունակի հայտարարում նշվում է վաճառվող արտարժույթի Ստանդարտների միջազգային կազմակերպության կոդը, և լրացվում վաճառքի ծավալն ու վաճառքի միջին փոխարժեքը:

Արտարժույթի առք ու վաճառքի միջին փոխարժեքները լրացվում են հետևյալ կերպ.

ա) եթե գործարքի (առքի կամ վաճառքի) մի կողմը հանդիսանում է ԱՄՆ դոլար, այսինքն՝ արտարժույթը գնվում կամ վաճառվում է ԱՄՆ դոլարի դիմաց, ապա փոխարժեքը նշվում է 1 ԱՄՆ դոլարի դիմաց: Օրինակ, եթե գնվում կամ վաճառվում է ռուսական ռուբլի՝ ԱՄՆ դոլարի դիմաց, ապա այդ գործարքի փոխարժեքը նշվում է հետևյալ կերպ. 30 ռուսական ռուբլի՝ 1 ԱՄՆ դոլարի դիմաց: Սակայն, եվրոյի պարագայում գրվում է 1.02 ԱՄՆ դոլար՝ 1 եվրոյի դիմաց:

Բացառություն են կազմում միայն ֆունտ ստեռլինգի առք ու վաճառքի գործարքները: Այս դեպքում փոխարժեքը նշվում է 1 ֆունտ ստեռլինգի դիմաց: Օրինակ՝ եթե գնվում կամ վաճառվում է ֆունտ ստեռլինգ՝ ԱՄՆ դոլարի կամ եվրոյի դիմաց, ապա այդ գործարքի փոխարժեքը նշվում է հետևյալ կերպ. 1.58 դոլար կամ 1.4 եվրո՝ 1 ֆունտ ստեռլինգի դիմաց:

բ) Եթե գործարքին (առքին կամ վաճառքին) չի մասնակցում ԱՄՆ դոլարը, ապա փոխարժեքը նշվում է այն արժույթի 1 միավորի դիմաց, որի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ ավելի բարձր է: Օրինակ, եթե

գնվում կամ վաճառվում է շվեյցարական ֆրանկ՝ ավստրալիական դոլարի դիմաց, ապա այդ գործարքի փոխարժեքը նշվում է հետևյալ կերպ. 3.35 ավստրալիական դոլարի դիմաց՝ 1 շվեյցարական ֆրանկ:

«Միջին փոխարժեք» սյունակում լրացվում է տվյալ վայրում տվյալ գործարքի և տվյալ արտարժույթի գծով միջին փոխարժեքը (մի քանի գործարքի դեպքում), որը հաշվարկվում է Կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի ապրիլի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում արժութային կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 8-ի 7-րդ գլխում նշված ձևով՝ կշռված միջինների հաշվարկման բանաձևով:

24. Թիվ 20 հաշվետվությունը լրացվում է հետևյալ կերպ.

«Հաճախորդներ և նրանց հաշիվները» աղյուսակում բոլոր տվյալները բերվում են հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ:

«Իրավաբանական անձինք» տողում բերվում են տվյալներ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (բացի բանկերից) և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ, որոնք տվյալ բանկում ունեն ընթացիկ և ժամկետային հաշիվներ:

«Ֆիզիկական անձինք» տողում բերվում են տվյալներ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց վերաբերյալ, որոնք տվյալ բանկում ունեն ընթացիկ և ժամկետային հաշիվներ:

«Հաճախորդների քանակը» սյունակում նշվում են տվյալ բանկում սպասարկվող այն անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական (բացի բանկերից) և ֆիզիկական անձանց քանակը, որոնք տվյալ բանկում ունեն ընթացիկ և ժամկետային ավանդների հաշիվներ, որոնք բավարարում են ստորև ներկայացված պահանջներին:

«Ընթացիկ հաշիվների քանակը» սյունակում նշվում են անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական (բացի բանկերից) և ֆիզիկական անձանց անունով բացված այն ցպահանջ ավանդները և բանկային հաշիվները (դրամով և արտարժույթով հաշվարկային հաշիվներ, չեկային հաշիվներ, հաշվարկների իրականացման համար նախատեսված այլ հաշիվներ), որոնցով տեղի է ունեցել միջոցների շարժ (ոչ վերագնահատման շարժ) վերջին 1 տարվա ընթացքում:

«Ժամկետային հաշիվների քանակը» սյունակում նշվում են անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական (բացի բանկերից) և ֆիզիկական անձանց անունով բացված ժամկետային ավանդների (դրամով և արտարժույթով) հաշիվները, որոնց վրա կա մնացորդ:

Օրինակ՝ եթե նույն հաճախորդը տվյալ բանկում ունի մեկ հաշվարկային, երկու ընթացիկ և երեք տարբեր ժամկետներով ավանդային հաշիվներ, ապա այդ հաճախորդը կհամարվի մեկ անձ և «Հաճախորդների քանակը» սյունակում կհաշվառվի որպես մեկ հաճախորդ, հակառակը՝ եթե մի հաշիվը պատկանում է երեք անձանց (միասնական հաշիվ), ապա «Հաճախորդների քանակը» սյունակում կգրանցվի երեք հաճախորդ:

«Հայաստանի Հանրապետության տարածքում փոխանցումներ» աղյուսակում բերվում են հաշվետու ժամանակահատվածի ընթացքում բանկի իրականացրած վճարումների քանակը (եթե վճարումները կատարվում են փաթեթներով կամ հավաքական վճարային փաստաթղթերով, ապա որպես քանակ պետք է նշվի վերջիններիս մեջ ընդգրկված վճարումների քանակը) և գումարն ըստ այդ վճարումները ստացողին կամ ստացողի բանկին ուղարկելու եղանակի՝ թղթային կամ որևէ համակարգով: Աղյուսակում փոխանցումները դիտարկվում են ըստ առանձին հոսքերի:

Ներբանկային փոխանցումները տվյալ բանկի ներսում՝ մասնաճյուղի/գլխամասի ներսում, մասնաճյուղերի միջև և գլխամաս-մասնաճյուղ հատվածում կատարված անկանխիկ այն փոխանցումներն են, որոնց վճարողը և շահառուն (որոնք հանդիսանում են բանկի ոչ բանկ հաճախորդները) սպասարկվում են տվյալ բանկի տարբեր մասնաճյուղերում կամ գլխամասում ու մասնաճյուղում:

Կենտրոնական բանկից դուրս թղթակցային հաշիվներով իրականացված միջբանկային անկանխիկ փոխանցումներ են համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում ունեցած «նոստրո» թղթակցային հաշիվներով Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող այն վճարումները, որոնք կատարվել են տվյալ բանկի (այդ թվում՝ մասնաճյուղերի) ոչ բանկ հաճախորդների, ինչպես նաև տվյալ բանկի անունից:

Աղյուսակում թղթային կհամարվեն այն փոխանցումները, որոնց առաքումը ստացողին կամ ստացողի բանկին կատարվում է թղթային եղանակով:

Էլեկտրոնային վճարային համակարգով փոխանցումները ենթադրում են ստացողին/ստացողի բանկին էլեկտրոնային վճարային համակարգով առաքված վճարումները:

«Արտասահմանյան փոխանցումներ» աղյուսակում ընդգրկվում են միջազգային փոխանցումների առանձին համակարգերով բանկ և ոչ բանկ հաճախորդների, ինչպես նաև սեփական անունից կատարված փոխանցումների և վերջիններիս անունով ստացումների գումարն ու քանակը, ինչպես նաև հաճախորդների դրամական փոխանցումները/ստացումներն անմիջապես իրականացնող մասնագիտացված համակարգերը (օրինակ՝ «Վեսթերն Յունիոն», «Մանի Գրեմ» համակարգերը) տվյալ բանկի կողմից սպասարկող կետերի քանակը:

Աղյուսակի վերջին տողերում առանձին ներկայացվում են ֆիզիկական անձանց կողմից նախածեռնված փոխանցումները և վերջիններիս անունով ստացումները:

«Այլ» տողերը նախատեսված են այն համակարգերով առաքված փոխանցումների համար, որոնք հիշատակված չեն աղյուսակում: Ընդ որում, յուրաքանչյուր համակարգի անվանումը և համապատասխան տվյալները պետք է նշվեն առանձին տողով:

«Մատուցած վճարային ծառայություններ» աղյուսակում բերվում են տվյալ բանկի կողմից հաշվետու ժամանակահատվածի ընթացքում՝

ա) բացված ակրեդիտիվների քանակը,

բ) վճարման ուղարկված/ներկայացված ինկասոների քանակը,

գ) հաճախորդից ընդունած փաստաթղթային փոխանցումների հանձնարարականների քանակը,

դ) հաճախորդից ընդունած ուղղակի դեբետագրման հրահանգների քանակը,

ե) հաճախորդից ընդունած պարբերաբար վճարումների հանձնարարականների քանակը:

Աղյուսակում ներառվում են ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված, այնպես էլ միջազգային բնույթի գործարքների վերաբերյալ տվյալները:

«Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր վճարային գործիքներով իրականացված վճարումներ» աղյուսակում առանձին սյուներով նշվում են Հայաստանի Հանրապետության տարածքում տվյալ բանկի սահմաններում կամ բանկից դուրս բանկի հաճախորդների պարտավորությունների և բանկի սեփական պարտավորությունների դիմաց կատարված փոխանցումների գումարն ու քանակը՝ ըստ վճարի նախաձեռնման վճարային գործիքների:

Մասնավորապես, «թղթային հանձնարարականներով» տողում նշվում են.

ա) հաճախորդի կողմից բանկին թղթային եղանակով ներկայացված վճարման հանձնարարականների գումարը և քանակը,

բ) բանկի կողմից սեփական վճարումների իրականացման նպատակով ներկայացված թղթային հանձնարարականների գումարը և քանակը, որոնցով վճարը կատարվել է բանկի «նոստրո» հաշիվներից (այսինքն՝ հանձնարարականը չի կազմվել հաճախորդի վճարումներն իրականացնելու համար):

«Էլեկտրոնային հանձնարարականներով» տողում նշվում են.

ա) հաճախորդի կողմից բանկին էլեկտրոնային եղանակով ներկայացված հանձնարարականների գումարը և քանակը,

բ) բանկի կողմից սեփական վճարումների իրականացման նպատակով ներկայացված էլեկտրոնային հանձնարարականների գումարը և քանակը, որոնցով վճարը կատարվել է բանկի «նոստրո» հաշիվներից (այսինքն՝ հանձնարարականը չի կազմվել հաճախորդի վճարումներն իրականացնելու համար):

«Պահանջագրերով» տողում նշվում է այն պահանջագրերի գումարը և քանակը, որոնց դիմաց կատարվել է հաճախորդի կամ բանկի սեփական պարտավորությունների վճարում:

«Պարբերաբար վճարումների հանձնարարականներով» տողում նշվում է այն պարբերաբար վճարումների հանձնարարականների գումարը և քանակը, որոնց դիմաց կատարվել է հաճախորդի կամ բանկի սեփական պարտավորության վճարում:

«Ուղղակի դեբետագրման հանձնարարականներով» տողում նշվում է այն ուղղակի դեբետագրման հանձնարարականների գումարը և քանակը, որոնց դիմաց կատարվել է հաճախորդի կամ բանկի սեփական պարտավորության վճարում:

«Այլ վճարային գործիքներով» տողում նշվում են հաճախորդի կամ բանկի սեփական պարտավորության վճարումները, որոնք կատարվել են մեմորիալ օրդերներով, պայմանագրերով, հայտերով, հաշիվ-ապրանքագրերով, վճարը հիմնավորող այլ փաստաթղթերով, բացառությամբ վճարման ներկայացված չեկերի դիմաց կատարված վճարումների:

Աղյուսակում չեն ընդգրկվում կանխիկացման և վերագնահատման հետ կապված գործառնությունները:

«Չեկերով գործառնություններ» աղյուսակում բոլոր տվյալները բերվում են հաշվետու ժամանակահատվածի համար:

«Տրամադրում» սյունակում նշվում են բանկի կողմից հաճախորդին տրամադրված հետևյալ չեկերի (չեկերի բլանկերի) գումարը և քանակը.

«Լիմիտային չեկեր» տողում նշվում են բանկի կողմից հաճախորդին տրամադրված չեկերը, որոնցով դուրսգրվելիք գումարը նախօրոք սահմանափակված է որոշակի լիմիտով (հաճախորդի լիմիտային չեկեր):

«Այլ չեկեր» տողում նշվում են՝

ա) բանկի կողմից հաճախորդի անունով դուրս գրված չեկերը (բանկային չեկեր),

բ) բանկի կողմից հաճախորդին տրամադրված չեկերի բլանկները, չեկային գրքույկները (հաճախորդի չեկեր). այս դեպքում «տրամադրված չեկերի գումարը» չի լրացվում:

«Օտարերկրյա բանկերի չեկեր» տողում նշվում են բանկի կողմից հաճախորդին վաճառված օտարերկրյա բանկերի չեկերը:

«Ճանապարհորդային չեկեր» տողում նշվում են բանկի կողմից հաճախորդին վաճառված ճանապարհային չեկերը:

«Սպասարկում» սյունակում նշվում են հետևյալ չեկերի գումարը և քանակը.

ա) հաճախորդի կողմից բանկին վճարման ներկայացված այն չեկերը, որոնք հաճախորդը ստացել է իր կողմից մատուցված ծառայությունների կամ ապրանքների դիմաց՝ որպես փոխհատուցում, և որոնց դիմաց ռեալ վճարը հաճախորդին կատարվել է հաշվետու ժամանակահատվածում.

բ) հաճախորդի կողմից բանկ ներկայացված բանկային և ճանապարհորդային չեկեր:

Տվյալ աղյուսակում չեն ներառվում այն չեկերի մասին տվյալները, որոնք հատուկ նախատեսված են տվյալ հաճախորդի հաշվից կանխիկ գումարների դուրսգրման/ստացման համար (կանխիկացման չեկեր):

«Քարտերի տրամադրում» աղյուսակում՝

«Տրամադրվող քարտի անվանումը» սյունակի մեջ նշվում են այն քարտերի անվանումները, որոնք ընդհանուր առմամբ կարող է (նախատեսում է) տրամադրել բանկը:

«Տրամադրված քարտերի քանակը» տողի համապատասխան սյունակներում նշումներ են կատարվում առաջին սյան մեջ նշված այն քարտերի դիմաց, որոնք տրամադրվել են բանկի կողմից և գտնվում են շրջանառության մեջ: Քարտերի քանակն ըստ առանձին տեսակների նշվում է հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում տրամադրված և շրջանառությունից հանված քարտերի քանակը:

«Կանխիկացում» սյունակում նշվում է այն քարտերի քանակը, որոնք ունեն միայն կանխիկացման ֆունկցիա:

«Դեբետային» և «Կրեդիտային» սյունակներում նշվում են, համապատասխանաբար, դեբետային և կրեդիտային քարտերը, որոնք, բացի կանխիկացման ֆունկցիայից, նախատեսում են նաև դրամական փոխանցումների հնարավորություններ:

«Ընդամենը» տողի ներքևի տողում նշվում են աշխատավարձային քարտերի ընդհանուր քանակներն ըստ համապատասխան սյունակների: Աշխատավարձային քարտեր են համարվում տրամադրված այն քարտերը, որոնց տրամադրման համար բանկի և որևէ կազմակերպության միջև կնքված է պայմանագիր՝ վերջինիս աշխատակիցների աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների վճարման նպատակով:

«Քարտեր սպասարկողներ և սպասարկման միջոցներ» աղյուսակում՝

«Քարտեր սպասարկող կետերի քանակը» սյունակի մեջ, ըստ համապատասխան տողերի, նշվում են այն կազմակերպությունները, որոնք տվյալ բանկի միջոցով իրականացնում են քարտային սպասարկում: Ընդ որում, «Բանկային հաստատություններ» տողում նշվում են հաշվետու բանկի գլխամասը, բաժանմունքները, որոնցում իրականացվում է քարտերի սպասարկում:

Առաջին սյունակի «Այլ» տողում նշվում է բանկի միջոցով քարտեր սպասարկող այն կազմակերպության տեսակը (օրինակ՝ բենզինի լցակայաններ), որի անվանումը նշված չէ աղյուսակում:

«Քարտերի սպասարկում» աղյուսակում՝

«Բանկի կողմից սպասարկվող քարտի անվանումը» սյունակում պետք է նշվեն այն քարտերի անվանումները, որոնք տվյալ բանկը կարող է (նախատեսում է) սպասարկել ընդհանուր առմամբ:

«Սպասարկված քարտեր» սյան մեջ, ըստ համապատասխան սյունակների, նշումներ են կատարվում առաջին սյան մեջ նշված այն քարտերի դիմաց, որոնք սպասարկվել են բանկի կողմից: «Կանխիկացման կետ» սյունակում, ըստ սպասարկված քարտերի տիպերի, պետք է նշվեն կանխիկացման կետերում (օրինակ՝ մասնաճյուղում տեղադրված)՝ առևտրի/սպասարկման կետերում տեղադրված տերմինալով կատարված գործառնությունները:

«Առևտրի և այլ կետ» սյունակում ըստ սպասարկված քարտերի տիպերի պետք է նշվեն առևտրի/սպասարկման կետերում տեղադրված տերմինալի միջոցով քարտերով կատարված անկանխիկ գործառնությունները:

25. Թիվ 23 հաշվետվությունը բաղկացած է երկու մասից:

Մաս I. Բանկը ամսական կտրվածքով ներկայացնում է հաշվետվություն՝ բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների (հիմնական միջոցների և այլ նյութական ակտիվների, այդ թվում՝ գրավի տնօրինման արդյունքում կամ այլ պահանջներից առաջացած սեփականացված ակտիվների, շահագործումից դուրս և այլ հիմնական միջոցների) և ոչ նյութական ակտիվների (բացառությամբ՝ բանկի գործունեության ընթացքում օգտագործվող համակարգչային ծրագրերի և դրանց օգտագործման իրավունքների) վերաբերյալ:

Մաս II. Բանկը ամսական կտրվածքով ներկայացվում է հաշվետվություն այլ անձանց կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների գումարների վերաբերյալ:

26. Թիվ 24 հաշվետվությունը բաղկացած է երկու աղյուսակից: Առաջին աղյուսակում լրացվում է Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձանց անունով Հայաստանի Հանրապետություն արտերկ-

րից մուտք եղած ֆինանսական միջոցների, իսկ երկրորդ աղյուսակում՝ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձանց կողմից արտերկրներ փոխանցված գումարների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Երկու աղյուսակներն էլ լրացվում են նույն սկզբունքով: Հաշվետվության մեջ ընդգրկված է 50 երկիր: Յուրաքանչյուր տողում լրացվում է տվյալ երկրից փոխանցված (երկրորդ աղյուսակի համար տվյալ երկիր փոխանցվող) գումարների և այդ փոխանցումների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը, որտեղ «Ընդամենը» սյունակում նշվում են բոլոր փոխանցումները, իսկ «Այդ թվում՝ տարբեր համակարգեր» սյունակում՝ միայն «Մանի Գրեմ», «Վեսթերն Յունիոն», «Անելիք», «Յունիստրիմ» և այլ համակարգերով կատարված փոխանցումները: «Այլ երկրներ» տողում ընդգրկվում են այն երկրները, որոնց անվանումը նշված չէ աղյուսակում, սակայն որոնցից յուրաքանչյուրի գծով կատարվել են ընդհանուր գումարով 50 000 ԱՄՆ դոլարը գերազանցող փոխանցումներ: Հաշվետվությունը ներկայացվում է հազար ԱՄՆ դոլարով, ընդ որում, եթե փոխանցումը կատարվել է այլ արժույթով, ապա գումարը ԱՄՆ դոլարով ներկայացնելու նպատակով պետք է օգտագործվի տվյալ օրվա դրությամբ արտարժույթ/ԱՄՆ դոլար կրոս փոխարժեքը:

27. Թիվ 26 հաշվետվությունը ներկայացվում է եռամսյակային պարբերականությամբ:

Հաշվետվությունը բաղկացած է երկու աղյուսակից:

Առաջին աղյուսակի «Եռամսյակի ընթացքում ավանդների միջինը» տողում լրացվում է հաշվետու եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց բանկային ավանդների և բանկային հաշիվների (այսուհետև՝ ավանդ) միջին գումարը՝ հաշվարկված հետևյալ բանաձևով՝

Ամե = Ա1 + Ա2 +…..+ Ան / n, որտեղ՝

Ա1, Ա2,…..,Ան՝ բանկի ֆիզիկական անձանց ավանդներն են ըստ օրերի, Ամե - բանկի ֆիզիկական անձանց ավանդների միջինն է եռամսյակի ընթացքում, n – հաշվետու եռամսյակի օրերի թիվն է:

«Երաշխիքային վճարումների հաշվարկված չափը եռամսյակի համար» տողում լրացվում է հաշվետու եռամսյակի համար հաշվարկված երաշխիքային վճարումների գումարը, որը կազմում է եռամսյակի ընթացքում ավանդների միջինի որոշակի տոկոսը տարեկան: Հաշվետու եռամսյակի համար երաշխիքային վճարման չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Եվ = Ամե x Տտ / (n1 / 365),

որտեղ՝ Եվ – հաշվետու եռամսյակի երաշխիքային վճարումների չափն է, Տտ - տարեկան տոկոսն է, n1- հաշվետու եռամսյակի օրերի քանակն է, Ամե - բանկի ֆիզիկական անձանց ավանդների միջինն է եռամսյակի ընթացքում:

Երաշխիքային վճարումների տարեկան տոկոսը սահմանում է Կենտրոնական բանկը:

Աղյուսակ 2-ի «Ավանդատուների քանակը հաշվետու օրվա դրությամբ» տողում լրացվում է եռամսյակի վերջին ամսվա վերջին օրվա դրությամբ բանկում առկա ավանդատուների քանակը՝ ըստ ավանդի մեծության և տեսակի: Ավանդատուների քանակը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ մեկ անձի բոլոր ավանդները (այդ թվում՝ համատեղ) համարվում են մեկ ավանդ, իսկ հաշվարկում ընդգրկվում են միայն երաշխավորվող ավանդների ավանդատուները:

«Ավանդների երաշխավորված ընդհանուր գումարը» տողում լրացվում են երաշխավորված հատուցմանը ենթակա ավանդների ընդհանուր ծավալները՝ ըստ ավանդի մեծության և տեսակի: Արտարժութային ավանդների դրամային համարժեքությունը հաշվարկվում է հաշվետվությունը կազմելու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Այս տողի առանձին սյունակները լրացնելու համար բանկը պետք է հաշվարկի յուրաքանչյուր խմբի ավանդատուների հատուցման համար պահանջվող գումարները:

2-րդ սյունակում լրացվում են այն ավանդները, որոնց տերերը ունեն միայն դրամային ավանդ (ավանդներ), և որոնց գումարը չի գերազանցում Կենտրոնական բանկի կողմից սահմանված դրամային ավանդի երաշխավորված առավելագույն չափը:

3-րդ սյունակում լրացվում են այն ավանդները, որոնց տերերն ունեն միայն արտարժութային ավանդ (ավանդներ), և որոնց գումարը չի գերազանցում Կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժութային ավանդի երաշխավորված առավելագույն չափը:

4-րդ սյունակում լրացվում են այն ավանդները, որոնց տերերն ունեն և դրամային, և արտարժութային ավանդ (ավանդներ), և որոնց դրամային ավանդը չի գերազանցում Կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժութային ավանդի երաշխավորված առավելագույն չափը:

5-րդ սյունակում լրացվում են այն ավանդները, որոնց տերերը ունեն և դրամային, և արտարժութային ավանդ (ավանդներ), և որոնց դրամային ավանդը գերազանցում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժութային ավանդի երաշխավորված առավելագույն չափը, սակայն քիչ է, քան Կենտրոնական բանկի կողմից սահմանված դրամային ավանդի երաշխավորված առավելագույն չափը:

6-րդ սյունակում լրացվում են այն ավանդները, որոնց տերերը ունեն և դրամային, և արտարժութային ավանդ (ավանդներ), և որոնց դրամային ավանդը գերազանցում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված դրամային ավանդի երաշխավորված առավելագույն չափը:

7-րդ սյունակում լրացվում են 2-ից 6-րդ սյունակների գումարները ըստ «Ավանդատուների քանակը հաշվետու օրվա դրությամբ» և «Երաշխավորման ենթակա ավանդների ընդհանուր ծավալը» տողերի:

ԳԼՈՒԽ IV. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

28. Հաշվետվությունները, բացառությամբ թիվ 19 հաշվետվության, Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության հաշվետվությունների ընդունման և ամփոփման բաժին են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետներում: Եթե հաշվետվության ներկայացման օրը համընկնում է հանգստյան օրվա հետ, ապա հաշվետվությունը ներկայացվում է այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Եթե ներկայացվող տվյալները հաշվետու ժամանակաշրջանում փոփոխություն չեն կրել, կամ եթե հաշվետվությանն առնչվող գործարքներ չեն իրականացվել, ապա բանկը ներկայացնում է գրություն՝ նշելով չներկայացվող ձևերը:

Թիվ 19 հաշվետվությունը ներկայացվում է Կենտրոնական բանկի ռիսկերի կառավարման համար պատասխանատու ստորաբաժանում:

Բացի թիվ 19 հաշվետվությունից, բանկերը պարտավոր են միջբանկային շուկայում իրականացված Հայաստանի Հանրապետության դրամով արտարժույթի առք ու վաճառքի յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ «Միջբանկային արտարժութային շուկայում կնքված գործարքների վերաբերյալ տեղեկացման համակարգի» միջոցով Կենտրոնական բանկի ֆինանսական շուկաներում գործառնությունների համար պատասխանատու ստորաբաժանում ուղարկել տեղեկանք՝ նշելով գործարքի տեսակը առք/վաճառք), գործարքի կնքման ժամը, գործարքի արժույթը (արժույթի տեսակը, կանխիկ/անկանխիկ), գործարքի ծավալը և փոխարժեքը:

29. Հաշվետվությունը համարվում է ներկայացված և ընդունված, եթե հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները չունեն ծրագրային կամ մեխանիկական թերություն:

30. Կենտրոնական բանկի բանկային վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման՝ տվյալ բանկի համապատասխան վերահսկողը հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական նպատակներից ելնելով, ծանուցման միջոցով բանկերից կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

Բանկը պարտավոր է ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ), միջոցներ ձեռնարկել՝ ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկություններն ապահովելու համար:

Հաշվի առնելով բանկի գտնվելու վայրը՝ բանկին ծանուցումը կարող է տրվել հեռախոսի (հեռախոսագրի), ՍիԲիէյնեթ ցանցի էլեկտրոնային փոստի կամ կապի՝ սահմանված այլ պահուստային միջոցներով:

Այդ փաստաթղթով բանկի լիազոր ներկայացուցիչը կարող է հրավիրվել Կենտրոնական բանկի բանկային վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանում՝ հաշվետվությունների վերաբերյալ պարզաբանումներ ու մեկնաբանումներ տալու համար:

Ծանուցումը ստորագրվում է Կենտրոնական բանկի բանկային վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կամ ղեկավարի տեղակալի կողմից:

ԳԼՈՒԽ V. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

31. Ամսական և եռամսյակային հաշվետվությունների ներկայացման ժամկետը մասնաճյուղերի քանակից ելնելով՝ սահմանվում է.

ա) մասնաճյուղեր չունեցող և մինչև 15 (ներառյալ) մասնաճյուղ ունեցող բանկերի համար՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ):

բ) 16 և ավելի մասնաճյուղ ունեցող բանկերի համար՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ):

Ընդ որում, եթե ըստ սույն կանոնակարգի 2-րդ կետով պահանջվում է տվյալ հաշվետվությունը ներկայացնել և ամսական, և եռամսյակային պարբերականությամբ, ապա պետք չէ ներկայացնել երրորդ ամսվա ամսական հաշվետվությունը, այլ պետք է ներկայացնել միայն եռամսյակային հաշվետվությունը:

32. Տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետը սահմանվում է.

ա) մասնաճյուղեր չունեցող և մինչև 15 (ներառյալ) մասնաճյուղ ունեցող բանկերի համար՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 20-ը: Եթե հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 20-ը համընկնում է ոչ աշխատանքային (ոչ բանկային) օրվա հետ, ապա հաշվետվությունների ներկայացման ժամկետը վերոնշյալ ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային (բանկային) օրն է:

բ) 16 և ավելի մասնաճյուղ ունեցող բանկերի համար՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 30-ը: Եթե հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 30-ը համընկնում է ոչ աշխատանքային (ոչ բանկային) օրվա հետ, ապա հաշվետվությունների ներկայացման ժամկետը վերոնշյալ ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային (բանկային) օրն է:

33. Շաբաթական հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու շաբաթվան հաջորդող երկրորդ աշխատանքային (բանկային) օրը:

34. Երկշաբաթյա հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երկրորդ աշխատանքային (բանկային) օրը:

35. Թիվ 10 հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 6-րդ աշխատանքային (բանկային) օրը:

36. Թիվ 21 հաշվետվությունը ներկայացվում է արժեթղթերի թողարկման ավարտից ոչ ուշ, քան 10 օր հետո:

37. Թիվ 26 եռամսյակային հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաշվետու եռամսյակի հաջորդող առաջին ամսվա 20-րդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ): Եթե հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-րդ աշխատանքային օրը համընկնում է ոչ աշխատանքային (ոչ բանկային) օրվա հետ, ապա հաշվետվությունների ներկայացման ժամկետը վերոնշյալ ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային (բանկային) օրն է:

38. «Հաշվետվություն արտարժույթի առք և վաճառքի գործառնությունների վերաբերյալ» թիվ 19 (օրական) հաշվետվությունը, անկախ իրականացված գործարքի ծավալի մեծությունից, ներկայացվում է Կենտրոնական բանկի ռիսկերի կառավարման վարչություն: Մինչև ժամը 16:00 կայացած գործարքները ներկայացվում են յուրաքանչյուր օր, մինչև ժամը 17:00 (հաշվետվությունում արտացոլված տվյալները կարող են հաղորդվել նաև կապի միջոցներով՝ ֆաքս, հեռախոս, էլեկտրոնային փոստ և այլն): Ժամը 16:00-ից հետո իրականացված գործարքները պետք է ներկայացվեն հաջորդ օրը ներկայացվող հաշվետվությունում՝ որպես առանձին հաշվետվություն:

Բանկերը պարտավոր են միջբանկային շուկայում իրականացված Հայաստանի Հանրապետության դրամով արտարժույթի առքի կամ վաճառքի յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ տեղեկանքը Կենտրոնական բանկ ուղարկել գործարքի կնքումից հետո 15 րոպեի ընթացքում՝ «Միջբանկային արտարժութային շուկայում կնքված գործարքների վերաբերյալ տեղեկացման համակարգով», իսկ վերջիններիս անսարք լինելու դեպքում՝ հեռախոսով կամ ֆաքսով:

ԳԼՈՒԽ VI. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

39. Առնվազն եռամսյակը մեկ բանկերը պարտավոր են նվազագույնը 1000 (հազար) տպաքանակ ունեցող մամուլում տեղեկատվություն հրապարակել հիմնական տնտեսական նորմատիվների պահպանման (ըստ ձև 27-ի), ավանդների ընդունման և վարկերի տրամադրման պայմանների՝ տոկոսադրույքների, ժամկետների, տոկոսագումարների վճարման կարգի վերաբերյալ:

40. Չև 27 հաշվետվությունում ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից հաստատված հիմնական տնտեսական նորմատիվների փաստացի և թույլատրելի մեծությունները: Երկրորդ՝ «Փաստացի մեծությունը» սյունակում ամսական հաշվարկվող նորմատիվների համար արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա նորմատիվի փաստացի մեծությունը, իսկ շաբաթական կամ օրական հաշվարկվող նորմատիվների համար՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա կամ վերջին երկշաբաթվա փաստացի մեծությունը՝ հաշվարկված Կանոնակարգ 2-ով սահմանված կարգով: Երրորդ՝ «Կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը» սյունակում արտացոլվում են Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվների թույլատրելի մեծությունը՝ հաշվարկված Կանոնակարգ 2-ով սահմանված կարգով: Չորրորդ՝ «Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը» սյունակում արտացոլվում են յուրաքանչյուր նորմատիվի գծով խախտումների քանակը, իսկ եթե խախտում առկա չէ, համապատասխան տողում լրացվում է «Խախտում առկա չէ» բառակապակցությունը:

41. Բանկերի կողմից պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը մամուլում հրապարակվելուց հետո 5-օրյա ժամկետում բանկերը պարտավոր են Կենտրոնական բանկի բանկային վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման համապատասխան բաժին ներկայացնել այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

42. Բանկերը տարեկան ֆինանսական հաշվետվություններն արտաքին աուդիտի եզրակացությամբ օրենքով սահմանված կարգով մամուլում հրապարակելուց հետո 10-օրյա ժամկետում պարտավոր են Կենտրոնական բանկ վերաներկայացնել նախորդ տարվա տարեկան, նախորդ տարվա վերջին ամսական և վերջին եռամսյակային թիվ 1, 3, 5, 6, 11, 12 հաշվետվությունները, ինչպես նաև հաշվետու տարվա սկզբից մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը սույն կանոնակարգով ներկայացվող թիվ 1, 3, 5, 6, 11, 12 հաշվետվությունները՝ ներառյալ վերահաշվարկած հիմնական տնտե-

սական նորմատիվները: Հաշվետվությունները վերաներկայացվում են միայն, եթե բանկի արտաքին աուդիտի եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքում բանկը խախտում է հիմնական տնտեսական նորմատիվները, ի հայտ են գալիս բանկի անվճարունակության և սնանկության հիմքերը, կամ վերոնշյալ հաշվետվություններում արտացոլված ցուցանիշները փոփոխվում են 5 տոկոս և ավելի չափով:

43. Բանկերը պարտավոր են նվազագույնը 1000 (հազար) տպաքանակ ունեցող մամուլում վերահրապարակել ճշգրտված թիվ 27 հաշվետվությունները տարվա սկզբից մինչև արտաքին աուդիտի եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում նախկինում հրապարակված թիվ 27 հաշվետվությունները, եթե տեղի են ունեցել 42-րդ կետով նկարագրված դեպքերը:

ԳԼՈՒԽ VII. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

44. Բանկերը սույն կանոնակարգով սահմանված հաշվետվությունները պետք է ներկայացնեն սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ սույն կանոնակարգի II գլխով սահմանված թիվ 7 հաշվետվության երկրորդ աղյուսակի, որը պետք է ներկայացվի 2003 թվականի սեպտեմբերի 1-ից և թիվ 26 հաշվետվության, որը պետք է ներկայացվի 2003 թվականի հուլիսի 1-ից:

Ձև թիվ 5

(ամսական, եռամսյակային, տարեկան)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____ թ –ից

մինչև _____ թ.

(հազար դրամ)

	Անվանումը	Նախորդ ժամանա-կաշրջան	Հաշվետու ժամանա-կաշրջան
1. Տոկոսային եկամուտներ			
1.1	Թղթակցային հաշիվներից		
1.1.1	Ռեզիդենտ բանկերից		
1.1.2	Ոչ ռեզիդենտ բանկերից		
1.2	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներից		
1.2.1	Թղթակցային հաշիվներից		
1.2.2	Հետգնման պայմանագրերի գծով		
1.2.3	Ավանդներից		
1.2.4	Այլ տեղաբաշխված միջոցներից		
1.3	Առևտրային բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ		
1.3.1	Ռեզիդենտ բանկերից		
1.3.2	Ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություններից		
1.3.3	Ոչ ռեզիդենտ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից		
1.4	Տնտեսությանը տրված վարկերից		
1.4.1	Ռեզիդենտ իրավաբանական անձանցից և հիմնարկներից		
1.4.2	Ռեզիդենտ ֆիզիկական անձանցից		
1.4.3	Ոչ ռեզիդենտ հիմնարկներից և իրավաբանական անձանցից		
1.4.4	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից		
1.5	Օվերդրաֆտից ստացված տոկոսներ		
1.5.1	Ռեզիդենտ բանկերից		
1.5.2	Ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություններից		
1.5.3	Ռեզիդենտ իրավաբանական անձանցից և հիմնարկներից		
1.5.4	Ռեզիդենտ ֆիզիկական անձանցից		
1.5.5	Ոչ ռեզիդենտ բանկերից		
1.5.6	Ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից		
1.5.7	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանցից և հիմնարկներից		
1.5.8	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից		
1.6	Ոչ ռեզիդենտ բանկերին տրամադրված օվերնայթից ստացված տոկոսներ		
1.7	Վարկային քարտերից ստացված տոկոսներ		
1.7.1	Ռեզիդենտ հիմնարկներից և իրավաբանական անձանցից		
1.7.2	Ռեզիդենտ ֆիզիկական անձանցից		
1.7.3	Ոչ ռեզիդենտ հիմնարկներից և իրավաբանական անձանցից		
1.7.4	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից		
1.8	Աշխատակիցներին տրամադրված միջոցներից		
1.9	Բանկի հետ կապված անձանց տրամադրված միջոցներից		
1.9.1	Ռեզիդենտ հիմնարկներից և իրավաբանական անձանցից		

1.9.2	Ռեզիդենտ ֆիզիկական անձանցից		
1.9.3	Ոչ ռեզիդենտ հիմնարկներից և իրավաբանական անձանցից		
1.9.4	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից		
1.10	Պետական գանձապետական արժեթղթերից ստացված տոկոսներ		
1.10.1	Ռեզիդենտ		
1.10.2	Ոչ ռեզիդենտ		
1.11	Հետգնման պայմանագրերից ստացված տոկոսներ		
1.11.1	Ռեզիդենտ		
1.11.2	Ոչ ռեզիդենտ		
1.12	Բանկերի կողմից թողարկված արժեթղթերից ստացված տոկոսներ		
1.12.1	Ռեզիդենտ		
1.12.2	Ոչ ռեզիդենտ		
1.13	Կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերից ստացված տոկոսներ		
1.13.1	Ռեզիդենտ		
1.13.2	Ոչ ռեզիդենտ		
1.14	Լիզինգից ստացված տոկոսներ		
1.14.1	Ռեզիդենտ		
1.14.2	Ոչ ռեզիդենտ		
1.15	Ակրեդիտիվներից ստացված տոկոսներ		
1.15.1	Ռեզիդենտ		
1.15.2	Ոչ ռեզիդենտ		
1.16.	Այլ տոկոսային եկամուտներ		
1.16.1	Ռեզիդենտ		
1.16.2	Ոչ ռեզիդենտ		
Ընդամենը տոկոսային եկամուտներ			
2. Տոկոսային ծախսեր			
2.1	Թղթակցային հաշիվների դիմաց վճարված տոկոսներ		
2.1.1	Ռեզիդենտ բանկերի		
2.1.2	Ոչ ռեզիդենտ բանկերի		
2.2	Բանկային հաշիվների ու ցպահանջ ավանդների դիմաց վճարված տոկոսներ		
2.2.1	Ռեզիդենտ իրավաբանական անձանց և հիմնարկների բանկային հաշիվների ու ավանդների		
2.2.2	Ռեզիդենտ ֆիզիկական անձանց բանկային հաշիվների ու ավանդների		
2.2.3	Ռեզիդենտ ոչ առևտրային իրավաբանական անձանց բանկային հաշիվների ու ավանդների		
2.2.4	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և հիմնարկների բանկային հաշիվների ու ավանդների		
2.2.5	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց բանկային հաշիվների ու ավանդների		
2.3	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ,		
2.3.1	այդ թվում՝ հետգնման պայմանագրերի գծով վճարված տոկոսներ		
2.4	Հետգնման պայմանագրերի գծով պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ		
2.4.1	Ռեզիդենտ		
2.4.2	Ոչ ռեզիդենտ		
2.5	Առևտրային բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ		
2.5.1	Ռեզիդենտ բանկերից		
2.5.2	Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից		
2.5.3	Ոչ ռեզիդենտ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից		
2.6	Ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներ		
2.6.1	Ռեզիդենտ իրավաբանական և հիմնարկների անձանց ավանդների		

2.6.2	Ռեզիդենտ ֆիզիկական անձանց ավանդների		
2.6.3	Ռեզիդենտ ոչ առևտրային իրավաբանական անձանց ավանդների		
2.6.4	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և հիմնարկների ավանդների		
2.6.5	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ավանդների		
2.7	Տոկոսային ծախսեր Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ պարտավորությունների դիմաց		
2.7.1	Ծրագրերի իրականացման գրասենյակների հաշիվների դիմաց		
2.7.2	Գանձապետարանից ստացված վարկերի դիմաց		
2.8	Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցների դիմաց վճարված տոկոսներ		
2.9	Օվերդրաֆտի դիմաց վճարված տոկոսներ		
2.9.1	Ռեզիդենտ		
2.9.2	Ոչ ռեզիդենտ		
2.10	Օվերնայթի դիմաց վճարած տոկոսներ		
2.11	Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց		
2.12	Ֆինանսական լիզինգի դիմաց վճարված տոկոսներ		
2.12.1	Ռեզիդենտ		
2.12.2	Ոչ ռեզիդենտ		
2.13	Տոկոսային ծախսեր ավանդների ապահովագրության դիմաց		
2.14	Հաշվեգրված, բայց չհավաքագրված չաշխատող ակտիվների տոկոսների գծով		
2.15	Այլ տոկոսային ծախսեր		
2.15.1	Ռեզիդենտ		
2.15.2	Ոչ ռեզիդենտ		
Ընդամենը տոկոսային ծախսեր			
Զուտ տոկոսային եկամուտներ			
3. Ոչ տոկոսային եկամուտներ			
3.1	Ստացված միջնորդավճարներ		
3.1.1	Ռեզիդենտ		
3.1.2	Ոչ ռեզիդենտ		
3.2	Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով գործառնություններից, հավատարմագրային կառավարման գործառնություններից ստացված եկամուտներ		
3.2.1	Ռեզիդենտ		
3.2.2	Ոչ ռեզիդենտ		
3.3	Գանձապետարանի սպասարկումից և մատուցված այլ ծառայություններից ստացված եկամուտներ		
3.4	Հեջավորման ածանցյալ գործիքներից զուտ եկամուտներ		
3.4.1	Ռեզիդենտ		
3.4.2	Ոչ ռեզիդենտ		
